

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ | Ֆ. Հ. ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ
ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ 2007

Հաստատված է ՀՀ ԿԳ նախարարության կողմից

ՀՏԴ 809.198.1 (07)

ԳՄԴ 81.2Հ Կ7

Ջ 229

Զահուկյան Գ. Բ., Խղարքյան Ֆ. Հ.

Ջ 229

Հայոց լեզվի ոճաբանություն: Ուսումնական ձեռնարկ ուսուցիչների և ավարտական դասարանների աշակերտների համար.– Եր.: Զանգակ-97, 2007: – 140 էջ:

Ջ $\frac{4602020100}{0003(01)-2007}$ 2007 թ.

ԳՄԴ 81.2Հ Կ7

ISBN 978-99941-1-321-7

© «Զանգակ-97», 2007 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի բուհական ընդունելության քննության նախկին կարգին համապատասխան ստեղծված հարցաշարերի շտեմարանը ոճաբանության վերաբերյալ հարցեր չէր պարունակում: Այդ պատճառով հայոց լեզվի շատ ուսուցիչներ, խախտելով գործող պետական ծրագիրը, ոճաբանության ուսուցման փոխարեն դասաժամերը տրամադրում էին շտեմարանի հարցաշարերի պատասխանները սովորեցնելուն:

2007 թվականից մտցված նոր քննական կարգը և գործող դպրոցական ծրագրի բոլոր բաժիններն ընդգրկող ստուգիչ թեստերը՝ պարունակում են 9-րդ և 10-րդ դասարանների ծրագրից շատ հարցեր: Եվ քանի որ 1998 թվականին հրատարակված հայոց լեզվի 9-10-րդ դասարանների դասագրքերը երբևէ չեն վերահրատարակվել, ուսուցիչներն ու աշակերտները դժվարանում են դրանք ձեռք բերել, ուստի նրանց օգնելու համար որոշեցինք դրանց հիման վրա կազմել սույն ձեռնարկը՝ ընդգրկելով միայն այն թեմաները, որոնք այս կամ այն ձևով առնչվում են նոր քննական թեստերին:

Բնական է, որ եղած նյութը վերանայվել է, փոփոխվել, լրացվել, և շատ հարցեր էլ բացատրված են նորովի, ընդգրկվել են մեծ մասամբ գործնական հարցերը: Ինչպես արդեն նշեցինք, սույն ձեռնարկը պարունակում է հիմնականում ոճաբանական հարցերին վերաբերող նյութեր, իսկ լեզվական համակարգի մյուս բաժիններին վերաբերող թեմաներին կարելի է ծանոթանալ մեր 5-8-րդ դասարանների (1999 թ.) և ակադ. Գ. Զահուկյանի ու տղերիս հեղինակի 9-10-րդ դասարանների դասագրքերում (1998 թ.):

Գիրքը կազմել և հրատարակության է պատրաստել Ֆ. Խլղաթյանը:

1. ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ

1. ԻՆՉ Է ԼԵԶՈՒՆ

Առավոտյան մենք արթնանում ենք և ասում՝ բարի լույս: Դպրոցում պատմում ենք դասը, պատասխանում ուսուցիչների և ընկերների հարցերին: Ուսուցիչն է մեզ համար պատմում զանազան բաներ, բացատրում խնդիրներ: Այդ բոլորը արվում է լեզվի միջոցով:

Պատկերացրեք, թե մարդիկ հանկարծ դադարեն խոսելուց, մոռանան լեզուն: Այդ դեպքում նրա՞յք այլևս չեն կարողանա հարց տալ և պատասխան ստանալ, չեն կարողանա իրար հասկանալ: Կանգ կառնեն փոխադրամիջոցները, կդադարի աշխատանքը: Այսինքն՝ կյանքը հասարակության մեջ կանգ կառնի, քանի որ մարդկանց գործունեությունը կարգավորվում է փոխադարձ հաղորդակցության միջոցով: Մարդկանց միջև հաղորդակցությունը, տեղեկատվության փոխանակումը կատարվում է լեզվի միջոցով:

Լեզուն մարդկային հաղորդակցության միջոց է: Դա հնչյունների, բառերի, քերականական կանոնների մի ամբողջական համակարգ է, որ մարդկային հասարակության մեջ օգտագործվում է որպես մտածողության միջոց, հաղորդակցության գործիք: Լեզուն ունի նաև այլ գործառնություններ, որոնց այստեղ չենք անդրադառնում: Լեզուն հասարակական երևույթ է, եթե մարդիկ հանրություն չկազմեին, չապրեին հասարակական կյանքով, ապա լեզվի կարիք չէին ունենա և, հետևաբար, լեզու չէր առաջանա:

2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԻՐԱՐ ՀԵՏ «ԽՈՍՈՒՄ» ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Անցնում ենք զբոսայգու ծառուղիով, և սաղարթի միջից լսվում են թռչունների ծվլոցն ու ծկլթոցը.

— Զիկ-չիկ-չիրիկ: Զիկ-չիկ-չիրիկ:

— Ծիկ-ծիկ-ծլտ: Ծիկ-ծիկ-ծլտ:

Ահա մի ծիտ գտավ գետնին զցած հացի կտորը, կտցեց և ձկաց.

— Ծիտ-ծիտ:

Զայնի վրա մոտ թռան ռրիշ ծտեր և նույնպես սկսեցին կտցել: Ինչ է, ծտերը խոսում են: Առաջին ծիտն արդյոք տեղեկացրեց իր ցեղակիցներին հացի կտորի մասին: Այո, տեղեկացրեց, բայց ինչպե՞ս:

Կան կենդանիներ, որ մարդկանց նման ապրում են հասարակություններով՝ մեղուները, մրջյունները: Ինչպե՞ս են նրանք իրար հաղորդում իրենց իմացածը: Արդյոք նրանք չեն խոսում: Ապա ինչպե՞ս են կազմակերպում, մաշվորում իրենց ջանքերը իրենցից մի քանի անգամ մեծ ավարը բույն քարշ տալու համար:

Անշուշտ, կենդանիները միմյանց տեղեկություններ հաղորդում են, բայց դա լեզվի միջոցով չէ, որ անում են: Նրանք մտածողություն չունեն, ղեկավարվում են բնազդով:

Ասվածը կարելի է փորձել: Ահա մի խումբ մրջյուններ տանում են հացի մի մեծ փշուր: Մի քանիսը փշուրին կպել են առջևից, մյուսները՝ հետևից, մնացածները՝ աջ ու ձախ կողմերից, և բոլորը համերաշխորեն տանում են ավարը: Թվում է, թե առաջինները քաշում են, մյուսները՝ հրում հացի փշրանքը: Բայց փորձենք անջատել, հեռացնել հետևի մրջյուններին և կտեսնենք, որ փշրանքն ավելի արագ կգնա:

Պարզվում է, որ ոչ մի համագործակցություն էլ չկա: Պարզապես մի կողմի մրջյուններն ավելի շատ են կամ ավելի ուժեղ, և նրանք քարշ են տալիս ոչ միայն հացի փշրանքը, այլև մյուս մրջյուններին էլ հետը:

Մրջյունները ևս մյուս կենդանիների նման գործում են բնազդորեն: Մտածողություն չունենալու պատճառով նրանք լեզու ունենալ չեն կարող: Կենդանիներն իրար հետ հաղորդակցվում են ծայնի (թռչուններ), շաժումների (մեղուներ, մրջյուններ), գերծայնային ալիքների (ղեկֆիններ) և այլ միջոցներով:

Որոշ կենդանիներ, ինչպես թուրթալները, կարողանում են ընդօրինակել մարդկային լեզվի բառեր, բայց դրանից նրանք խոսող չեն դառնում:

Կենդանիների արտահայտած ծայները անհոդաբաշխ հնչյուններից կազմված ճիչերի հավաքածու են, իսկ մարդկային լեզուն տարրորոշված հոդաբաշխ հնչյուններից է բաղկացած: Ոչ մի կենդանի չի կարող արտասանել ա, ի, ւ, մ և այլ տարրորոշված հնչյուններ:

Կենդանիների ծիչերը, սակայն, իմաստավոր են: Յուրաքանչյուր ծիչ համապատասխանում է ինչ-որ գաղափարի: Օրինակ՝ հայերենի բարբառներում շան հաչոցի համար կան մի շարք բառեր՝ նայած ում կամ ինչի վրա է հաչում շունը: **մարդահաչ, շնահաչ, գյուլահաչ (գայլահաչ), լուսնահաչ, գազնահաչ (գազանի վրա հաչել)** և այլն: Գյուղացիները, տանը նստած, կարող են շան հաչոցը լսելով որոշել՝ մարդ է գալիս, թե օտար անասուն է մտել բանջարանոց: Գրական լեզուն էլ տարբերում է **հաչել, կլանչել, կադկանծել, ոռնալ, կոնծկոնծալ, վնգվնգալ, վնգստալ** բառերը, որոնցից յուրաքանչյուրը որևէ կոնկրետ տրամադրության համապատասխան շան արձակած ձայնին (ուրախություն, վիշտ, ցավ և այլն) է վերաբերում:

3. ՔԱՆԻ ՁԵՎՈՎ ԵՆ ԽՈՍՈՒՄ ՄԱՐԴԻԿ

Մարդիկ մտքեր կարող են արտահայտել տարբեր եղանակներով: Օրինակ՝ բաց ծովում նավերի վրայից նավաստիները կարող են տեղեկություններ հաղորդել դրոշակներով, կույրերը գրում և կարդում են հաստ թղթի վրա ասելով արված կետերի օգնությամբ: Հազարավոր կիլոմետրերի հեռավորությունից մտքեր կարելի է հաղորդել Մորզեի այբուբենով: Նկատած կլինեք, որ հեռուստացույցի էկրանի ներքևի մի անկյունում հաճախ ցուցադրում են մեկի փոքր պատկերը, որը հաղորդման խոսքին զուգահեռ՝ ձեռքերով ինչ-որ շարժումներ է անում: Դա արվում է խուլուհամր հեռուստադիտողների համար: Ձեռքի և մատների զանազան շարժումներով նրանց համար հաղորդվում է իրենց չլսած խոսքի բովանդակությունը:

Մարդկային հասարակության մեջ կան և օգտագործվում են մի շարք շարժումնային (ժեստերի) լեզուներ:

Ձեռքի և մարմնի տարբեր դիրքերի վրա հիմնված նման լեզուներ օգտագործվում են նաև մարզական խաղերի ժամանակ (ֆուտբոլ, հոկեյ):

Նավաստիները ծովում մեծ հեռավորությունների վրա իրար հետ «խոսում են» դրոշակների կամ լուսարձակների միջոցով: Սովորական կյանքում էլ մենք ձեռքի շարժումներով ուղեկցում ենք մեր խոսքը կամ այդ շարժումները օգտագործում ենք առանց բառ

ասելու: Ըստ որում՝ նույն շարժումը տարբեր ժողովուրդների համար տարբեր բան կարող է նշանակել: Օրինակ՝ ուղղահայաց կերպով գլխի վեր ու վար շարժումը շատ ժողովուրդների համար հաստատման, «այո»-ի նշան է, հորիզոնական կերպով աջ ու ձախ շարժվելը՝ «ոչ»:

Իսկ բուլղարացիների համար ճիշտ հակառակն է: Կամ վերցնենք ողջունելու, բարևելու ժեստը: Տարբեր ժողովուրդների համար դա տարբեր է: Եվրոպացիները միմյանց ձեռք են սեղմում, հին չինացիները՝ սեփական ձեռքը, լապլանդացիները քթերն իրար են քսում, ամերիկացիները թմփացնում են իրար մեջքին, լատինաամերիկացիները գրկախառնվում են, ֆրանսիացիները համբուրվում են, զինվորականները պատիվ են տալիս, Սամոա կղզու բնակիչներն իրարից հոտ են քաշում:

(ըստ Ֆ. Ֆոլսոմի «Գիրք լեզվի մասին»)

4. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՅԵԼ ԼԵՂՈՒՆԵՐԸ: ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԱՌԱՍՊԵԼԸ ԵՎ ԻՆՉ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Մովսես Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ գրում է.

«Ահեղք և երևելիք առաջինքն ի դից, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարիք, որք յղացեալ ամբարտավանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և ի նոյն լինէին ի գործ անկեալք, յոթ հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մեջ արկանէին: Յորոց մի էր և Յապետոսբեանն Հայկ, անուանի և քաջ նախարար, կորովածիզ և հաստաղեղն» (գիրք առաջին, Թ):

Ժամանակակից հայերենով

«Առաջին աստվածներն ահեղ էին և երևելի՝ պատճառ մեծամեծ բարիքների, աշխարհի և մարդկային բազմությունների սկիզբ:

Սրանից առաջ եկավ իսկաների սերունդը՝ անհեթեթ, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ իղացան

աշտարակաշենության անբախելի միացը, որը և մեծահարկին
Իրարը լու մազկանից ցուտակը ինչ-որ տեսանք հոգի Ին-
րով կողմ Իմով է աշտարակը և հողակալից յարասանությունն ու-
նիս է միակերպ անհատականաց ընդունել, որով երանք մեզ աշ-
տակ և շինարարություն է ընկնում:

Միանգի մեծ է և Հանդեսության Հանդի անկանի և քաղ իշ-
խանդ՝ հաստ անկանի և հարյն հեռանում:

Մ հեռանակից փաստորեն համառոտ վերաբերումով է բարե-
լիտան աշտարակաշենության աստակով:

Աշտարակի փոքր Ինկան

Սկզբում հող փոխարկից փոխարկով ըն, ծառիկ փոխ-
անով էին ընկանից բացառական վրա ելանից կան ու Լեզիկա-
րով մի ծանակ կամ Խճից անկան ընթ, Լեզիկանից ինկ-
անից հոտով էին մի քանի հարյուր ընկանից Լեզիկ ԸՄ Ըն-
թից, հող հարկանությունը ապագա փոխել հոտով էին օտարի ի-
գականից, հոտով էին ևս հարկանից ուղ ծառանով:

Լեզիկանի այլ շտառության անունով ինկանից՝ մարդիկ
փոխարկով ընկանից և աստակովին էին Լեզիկանով:

Լեզիկ մի աստակով էլ Բաղրիցի աշտարակի մասին է, որ Խ-
թիկն էին ուղ ընկանից, Լեզիկից Բաղրիկից էին Խթիկանից
և ապա ծառի մազկանից մեզ:

Ըն Բաղրիկի ժողովարդը հարուստ էր ու բարդաբան մար-
դիկ հարյուր ու հարյուրից ընկանով էին անունով բարդիկից
Բաղրիկից քաղ թաղանից մասինց սիրել, ու մասն Լեզիկի,
այդ Լեզիկից ինկանից անուն էր աշտարակ ինկան և թաղա-
նով միայն Լեզիկից Լեզիկությունն ասում է, որ աշտարակաշեն-
ով մարդիկ այնու էին կոտով և կոտովում աշտարակ, ուղ
անկան ու անկան էր բարդանում:

Հաստակությունն ստաց թաղանից կոտովում էր աշտարակ
և ապա թաղանից էր անունով փոխ:

Մարդիկ մասնով հարկանով, որ անուն է կանկանից
մարդիկ: Լա Լեզիկ Խաղիկից բարդանում հեղինակների,
որով հեռանալով-անով էր Խաղիկ մարդիկներից փոխան-

կան, որոնքին հաշվառանք ընդուն, առաջ երևանք թափանցիկ ինքն-
քի և ամեն ինքն խաչքնից իրդ, որինքնքին անհատական ի-
գնություն:

Մի ժամանակում ամեն ինչ հասնից, ով աղյուս էր կորում,
չէր կարող թույլ լուս ինք, ով ամենում էր, անցիկ ամենում էին աղ-
յուսները յին կարողություն մի բան ժողովականի կրակ ինք, ով
քնն շարժում էին և այն: Ամեն ինչ չհիմարից նման մեկը մեկարդում
էր լինանքներ: Մեկնից մեկ ու արժեք: Ինչ որպեսզի ստանալից ան-
նից կրկնում է «թափանցիկ աշխատանքայինություն» աշխատանքից
կանա ամեն, ընտանիքներից քննիցից աշխատում մեկ, և ամեն խոսք
ազնից էր իրդ ինքն:

Այս պահին, ըստ անվանության, անտարաքան տարրեր ընդ-
նից:

Ինչի հարձակումը անտանգին, առաջ հասնիմեն և ան ընդ-
նիցից մեկն է, որ կարող է թափանցիկ ինտերակտիվական ժամ-
անակ, բանի որ մեկ խոսակցություն: Հոսք խոսակցություն, ըստ հոսք-
անոթ, այն ինքններըց մեկն էր: Լուս աղյուսներից, ինտերակ-
Տարրերից, ինքն հարավ Հայկական ժողովության և անցիկ
ընդ ինչ ազնից:

Ինչ անտանգից հաստատում է այն միայն, որ ինքն հաստա-
տական հեղափոխ է: Ինքն ի հաստատություն մեկ և հաստատ հա-
տատությունը, և էր մարդիկ զարթոնում են միասնական հաս-
տատությունը աղյուսից կրկնում են ժողովությունը ընդ:

Ինչ ինչ է ամեն գիտությունը
Անվանականություն անտարաքան է, որ ինքնները անտանգին ինքն
ընդունի մե:

Ինչ խոսք հաստատում է բառային և ընտանիական բառա-
քնն խոսքայիններից ինտերակտիվական միասնից ընդունից կարկում են
թափանցիկությունը: Անխառն թափանցիկությունից մեկ կրկնում
է հեղափոխական, բանի որ այն ընտանիքի մեկ ընտանիք ընտանիք
աղյուսական են: ընտանիքային մեկն ինտերակտիվ կեցողական ընտանիք
ընդունում: Ինչ ընտանիքի անտանգին և ով ինքնները խոս-
նքից, անտանգից, ինտերակտիվ, զարթոնում և ինտերակտիվ գի-
տանք ընտանիք, բանի ինտերակտիվից Ինչ ընտանիք կրկնում
են ինտերակտիվություն: ընտանիքական ընդ և անտանգից:

Հնդեվրոպական լեզուներն առաջացել են լեզվաընտանիքի մայր լեզվի կամ, ինչպես ասում են, նախալեզվի տրոհումից:

Հնդեվրոպական նախալեզվի բաժանումից մինչև ինքնուրույն լեզուների առաջացումը անցել են հազարամյակներ: Դժվար է մանրամասն նշել այդ զարգացման կոնկրետ փուլերը առանձին լեզուների համար: Բայց փաստ է, որ որոշ լեզուներ, ինչպես սանսկրիտը, հայերենը, հին պարսկերենը, ավելի մոտ են հնդեվրոպական նախալեզվին, քան մյուսները:

5. ՀԱՅՈՑ ԼԵՁՎԻ ՏԵՂԸ ԱՇԽԱՐՀԻ ԼԵՁՈՒՆԵՐԻ ԸԱՐՔՈՒՄ

Աշխարհում այժմ կա մոտավորապես 3000 կենդանի լեզու: Այդ լեզուները միավորվում են մի քանի լեզվաընտանիքներում (ինչպես՝ հնդեվրոպական, չին-տիբեթական, ուգրոֆիննական, թուրքական և այլն):

Հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, որն ունի 11 ծյուղ: Հայերենն այդ ծյուղերից մեկն է (տես հնդեվրոպական լեզուների ծննդաբանական ծառը): Այսինքն՝ հայերենը ցեղակից է հնդկերենին, պարսկերենին, հունարենին, ռուսերենին, սլավոնական մյուս լեզուներին, անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, իսպաներենին, իտալերենին և այլն:



Կենդանի լեզուները նրանք են, որոնցով մարդիկ խոսում են, օրի-
 նակ՝ հայերենը, ռուսերենը, անգլերենը և այլն: Այն լեզուները,
 որոնք բանավոր հաղորդակցության մեջ չեն օգտագործվում, մե-
 ռած լեզուներ են՝ խեղերենը, լատիներենը, թրակերենը, սկյութերե-
 նը և այլն: Կան լեզուներ էլ, որոնք միայն կրոնական արարողու-
 թյունների են ծառայում, ինչպես գրաբար հայերենը:

6. ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԻՔԸ

Հնդեվրոպական նախալեզվի տրոհումը սկսվել է մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներում: Դա նշանակում է, որ հնդեվրոպացիներից նախահայերի անջատումը և հեռանալը կատարվել է այդ ժամանակ: Բայց դեռ մոտ երկու հազարամյակ էլ անհրաժեշտ էր, որ հնդեվրոպացիների այն հատվածը, որին նախահայեր են կոչում, թափանցի Հայկական բարձրավանդակ, իրեն ենթարկեն այնտեղ ապրող շուրջ 50 մանր ու միջին ցեղերի և ձևավորի հայ ժողովուրդն ու հայերենը: Մինչև մ. թ. ա. 3-րդ հազարամյակը եղած լեզուն կարելի է կոչել նախահայերեն: Մ. թ. ա. 3-րդ հազարամյակում հայ ժողովրդի և հայոց լեզվի կազմավորումն արդեն ավարտված էր: Դա նշանակում է, որ մեր լեզուն՝ հայերենը, հինգ հազար տարվա պատմություն ունի:

Այդ հսկայական ժամանակաընթացքում հայերենը զարգացման երկար ծանապարհ է անցել՝ հասնելով մեր օրերը: Ձարգացման ընթացքում հայերենը մի բանի անգամ որակական փոփոխություններ է կրել՝ մի որակից փոխվելով մեկ այլ որակի:

Հայերենի զարգացման պատմությունը նախ բաժանվում է երկու մեծ շրջանի՝ նախագրային և գրային: Գրային շրջանն էլ իր հերթին բաժանվում է երեք ենթաշրջանների՝ հին շրջան (գրաբար), միջին շրջան (միջին հայերեն), նոր շրջան (աշխարհաբար):

7. ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Հայոց լեզվի նախագրային շրջանն ընդգրկում է ավելի բան երեք հազար տարվա մի ժամանակահատված, որի ընթացքում, անշուշտ, հայերենը դարձյալ որակական փոփոխություններ է կրել, բայց, ցավոք, գրավոր հուշարձանների բացակայության պատճառով այդ փոփոխությունների մասին որևէ կոնկրետ բան չգիտենք: Բավական է ասել, որ հայերենն այդ ընթացքում խանձարուրային վիճակից հասել է մինչև մեր թվարկության 5-րդ դարի բարձր զարգացած լեզվի մակարդակին:

Գրերի գյուտից ոչ շատ հեռավոր անցյալի հայերենի մասին մենք կարող ենք դատել միայն հայ պատմիչների գործերում գրի առնված և պահպանված բանահյուսական պատահիկներից: Բայց

դրանք էլ անադարտ վիճակում չեն, քանի որ, հավանաբար, մշակվել են գրի առնողների կողմից: Վարկածներ կան, թե այս շրջանում ևս հայերը սեփական գիր ու գրականություն են ունեցել: Բայց առայժմ նման ենթադրությունը հաստատող որևէ փաստ չի հայտնաբերվել:

8. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԳՐԱՎՈՐ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Մեր թվարկության 5-րդ դարում Մեսրոպ Մաշտոցն ստեղծել է հայկական գիրը, որով սկիզբ է դրվել հայերեն ինքնուրույն և թարգմանական գրականությանը: Այսպիսով՝ հայերենը ավելի քան մեկուկես հազարամյակի գրավոր հուշարձաններ ունի և աշխարհի հին գրավոր լեզուներից մեկն է:

Ինչպես ամեն մի լեզու, հայերենը ևս ժամանակի ընթացքում փոխվել է. 5-րդ դարից սկսած՝ նա անցել է զարգացման երեք շրջան՝ հին (5-11-րդ դարեր՝ գրաբար), միջին (12-16-րդ դարեր՝ միջին հայերեն) և նոր (17-21-րդ դարեր՝ աշխարհաբար):

Հին շրջանի գրական լեզուն հայտնի է գրաբար անունով: Մշակվելով, հղկվելով գրաբարը դառնում է ժամանակի հարուստ և ճկուն լեզուներից մեկը: Սկզբնապես այն հասկանալի էր բոլոր հայերին:

Ժամանակի ընթացքում խոսակցական լեզուն, աստիճանաբար փոփոխվելով, սկսում է տարբերվել գրավորից, որը գտնվում էր համեմատաբար կայուն վիճակում, բոլոր հեղինակներն աշխատում էին գրել ընդունված կանոններով: Գրավոր և խոսակցական լեզուների տարբերությունները միջին շրջանի նախօրյակին այնքան շատ էին, որ գրական լեզուն դարձել էր դժվար հասկանալի:

Միջին շրջանում ժամանակի խոսակցական լեզվի հիման վրա հանդես է գալիս նոր գրական լեզու, որ հայտնի է միջին գրական հայերեն կամ պարզապես միջին հայերեն անունով: Քանի որ այդ շրջանի հիմնական գրավոր հուշարձաններն ստեղծվել են Կիլիկիայի հայկական թագավորությունում, միջին գրական հայերենը երբեմն կոչվում է նաև կիլիկյան հայերեն: Այդ լեզուն ավելի քիչ էր մշակված, քան գրաբարը, բայց նրանով են ստեղծագործել մեր միջնադարյան տաղերգուները, առակագիրները:

Հայկական պետականության կորուստը և խոսակցական լեզվի ածող տարբերությունները միջին գրական հայերենը գրկում են հետագա զարգացման ու միասնականացման հնարավորությունից: Այն նույնպես դառնում է դժվարհասկանալի և աստիճանաբար դուրս է գալիս գործածությունից: Միաժամանակ՝ զանգվածային գաղթերի հետ կապված, միջին շրջանում խիստ մեծանում են բարբառային տարբերությունները:

Ինչպես միջին, այնպես էլ նոր շրջանում հասկանալի լինելու պահանջը մարդկանց ստիպում է գրել ժամանակի խոսակցական լեզվով, որ հայտնի է աշխարհաբար անունով:

Մինչև 19-րդ դարի կեսերը աշխարհաբարը՝ որպես գրական լեզու, լայն տարածում չուներ: Դեռևս զուգահեռաբար շարունակում էր գործածվել գրաբարը, որն այժմ էլ հայ առաքելական եկեղեցու արարողակարգային լեզուն է:

19-րդ դարի կեսերից աշխարհաբարը դառնում է հիմնական գրական լեզու: Այդ գործում հսկայական դեր է խաղացել Խ. Աբովյանը իր «Վերք Հայաստանի» վեպով:

Հայ ժողովրդի ինքնուրույն պետականության բացակայության պատճառով, նրա մասնատված գոյության պայմաններում նոր գրական լեզուն ձևավորվեց երկու տարբերակով՝ կամ ծյուղով, որոնք հայտնի են արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ անուններով:

Արևմտահայ գրական լեզուն կազմավորվել է Արևմտյան Հայաստանում՝ առաջին հերթին Պոլսի և Փոքր Ասիայի այլ վայրերի խոսակցական հայերենի հիմքի վրա: Արևելահայ գրական լեզուն ձևավորվել է Արևելյան Հայաստանի, մասնավորապես Արարատյան և առաջին հերթին Երևանի խոսակցական լեզվի հիմքի վրա:

Եվ արևմտահայ, և արևելահայ գրական լեզուները գրաբարից ժառանգել են շատ բան՝ բառապաշարի հիմնական մասը, գիրը և այլն, դրանով նրանք ընդհանուր են, բայց տարբեր է նրանց քերականական կառուցվածքի մեծ մասը, արտասանությունը և ուղղագրությունը:

II. ՈՃԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

1. ԵՐԿՐԻ ՁՐՈՒՅՑ, ՈՐՈՆՔ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ, ԹԵ ԻՆՉ Է ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թագավորի երազը

Կար մի թագավոր՝ շատ դաժան ու քմահաճ: Մի անգամ նա երազ տեսավ. երկնակամարում փայլում էր մի մեծ աստղ՝ շրջապատված բազմաթիվ մանր աստղերով: Սրանք շուտով կամաց-կամաց մարեցին, և երկնակամարում մնաց միայն մեծ աստղը:

Թագավորն առավոտյան իր մոտ կանչեց պալատական գիտուններին ու աստղագուշակներին և հրամայեց մեկնաբանել երազը:

— Թագավորն ապրած կենա,— ասաց գլխավոր աստղագուշակը,— մեծ աստղը դու ես, որ փայլում ես տիեզերքում, իսկ մյուս աստղերը՝ քո բարեկամներն ու հարազատները: Եվ երազն ասում է, որ նրանք բոլորը շուտով կմեռնեն, դու կմնաս միայնակ:

— Թշվառական,— զայրացավ արքան,— դու մահ ես գուշակում իմ հարազատներին: Չնդան տարեք դրան.

Ապա դարձավ մյուսներին:

— Իսկ դ՞ո՞ւք ինչ կասեք:

Քանի որ բոլորը նույն կարծիքին էին, լռեցին:

Բարկացած թագավորը հրամայեց նրանց ևս զնդան նետել:

Այդ ժամանակ առաջ եկավ սպիտակամորուս մի ծերուկ: Նա աստղագուշակ չէր և ոչ էլ՝ երազահան, այլ գրագիտության ու ծարտասանության ուսուցիչ: Նա պերճախոսության դասեր էր տալիս արքայազնին:

— Ո՛վ արքա, մեղմիր մի պահ բարկությունը քո և լսիր նվաստիս: Ես կբացատրեմ երազը, միայն խոստացիր նրանց ազատել պատժից:

— Խոստանում եմ, բայց եթե դու էլ խելքին մոտ բացատրություն չտաս, զլուխդ կթոցնեմ:

— Ճիշտ է, որ երկնակամարի մեծ լուսատուն դու ես և քո իմաստությամբ լուսավորում ես տիեզերքը, իսկ աստղերը քո հա-

րազատներն են, բայց երազն այլ բան է ասում: Երազն ասում թե դու բոլորից ավելի երկար կապրես:

Այսպես մեկնաբանեց ծերունին:

Թագավորին շատ դուր եկավ ծեր ուսուցչի բացատրությունը նրան պարզևատրեց, իսկ մյուսներին ազատեց զնդանից, ինչպի որ խոստացել էր:

(արևելյան զոր

Բուալոյի պատասխանը

Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV–ը, ի թիվս այլ քմահաճույքների սիրում էր նաև բանաստեղծություններ գրել: Մի անգամ նա իր մոտ է կանչում հայտնի բանաստեղծ և գրականության տեսաբան Բուալոյին և կարդալով իր հերթական բանաստեղծությունը՝ պահանջում կարծիք հայտնել:

Ինչպես արքայի բոլոր բանաստեղծությունները, այս մեկն էլ շատ թույլ էր: Բայց հզոր արքային չէր կարելի զայրացնել: Իսկ Բուալոն է: չէր ուզում ստել: Մի քանի վայրկյան մտածելուց հետո նա պատասխանեց. միաժամանակ թե ճշմարտությունն ասաց, թե չվիրավորեց արքային:

Ինչ ասաց Բուալոն:

Հարցեր և առաջադրանքներ

- Ո՞րն է առաջին զրույցում պատմվող երազի միտքը:
- Ինչու մի դեպքում երազի մեկնաբանությունը դուր չեկավ թագավորին, իսկ մյուս դեպքում դուր եկավ:
- Որո՞նք են առաջին մեկնաբանության բացասական և երկրորդ մեկնաբանման դրական երանգավորման տրամաբանական ու լեզվական միջոցները:
- Ինչպե՞ս կձևափոխեք հետևյալ արտահայտությունները, որպեսզի նրանց բացասական իմաստային երանգավորումը փոխվի չեզոք կամ դրական երանգավորման: Համապատասխան ձևով փոխեցե՞ք նաև կետադրությունը:
Դու սուտ ես ասում:
Նա հիմար է:

Խնդիրը դժվար է:
Ճաշն անհամ է:

Ինչպես ավելի մեղմ կարտահայտեք հետևյալ մտքերը.

- Ռեխդ փակիր:
- Քո պոչն ով տրորեց:
- Թաթդ բաշիր:
- Համա թե շունն ես, հա...

Տրված առաջադրանքները ձիշտ կատարելու դեպքում դուք ճործ կունենաք ոճաբանության հետ:

Կյանքի տարբեր իրադրություններում հաճախ կարևոր է չլինում ոչ միայն հաղորդվող միտքը, այլև նրա արտահայտման ձևը, ոչ միայն **ինչ**–ը, այլև **ինչպես**–ը: Նույն փաստը լեզվական տարբեր ձևակերպումներով ներկայացնելիս լսողը միանգամայն հակադիր ընկալումներ է ունենում, ինչպես բերված առաջին ճրույցում է: «Բուալոյի պատասխանը» ճրույցում բասացական բնույթի տեղեկությունը հաղորդվում է դրական երանգավորումով: Բուալոն սրամտորեն պատասխանում է թագավորին. «Ո՛վ արքա, դու այս անգամ կամեցել ես վատ ոտանավոր գրել, և դա լիովին հաջողվել է քեզ»:

Իհարկե, ամեն ոք չէ, որ կարող է նման սրամիտ ձևով օգտագործել լեզվի և տրամաբանության հնարավորությունները, ինչպես ծեր ուսուցիչն ու մեծ տեսաբանը, բայց սովորական մահկանացուներս էլ հաճախ նույնիսկ ավելի պարզ իրադրություններում բախվում ենք մտքի արտահայտման ձևերի ընտրության անհրաժեշտությանը:

Լեզվին ըստ ամենայնի տիրապետող մարդը չի ասի՝ «Նժույգներ լծած սայլն անցավ փողոցով», կամ՝ «Երեխային գործուղիր հարևանի տնից նարդին բերի խաղանք»: Իսկ եթե, այնուամենայնիվ, մեկն այդպես ասի, նրա խոսքը կհամարվի սխալ:

Տգեղ կամ ոչ գեղեցիկ կնոջը չի կարելի ասել «գեղեցկուհի», ոչ էլ անխելք մարդուն՝ «խելքի տոպրակ», որովհետև տվյալ իրադրություններում այդ արտահայտությունները ծաղրական իմաստ են ստանում:

Ուրեմն կարելի է եզրակացնել, որ խոսքը պիտի լինի ոչ միայն ձիշտ, այլև նպատակահարմար: Քերականորեն ձիշտ կառուցված

խոսքը դեռևս ճշմարիտ չէ, եթե նրանում հաշվի չեն առնված խոսքային իրադրությունը և նրա բաղկացուցիչները՝ խոսողի և խոսակցի ով լինելը, նրանց փոխհարաբերությունը, հանրային կյանքի այն ոլորտը, որտեղ ասվում կամ որին վերաբերում է խոսքը, և վերջապես, խոսքի նպատակը: Այս ամենի հաշվառումով է պայմանավորված խոսքի նպատակահարմարությունը: Նպատակահարմար խոսել սովորեցնում է ոճաբանությունը:

Ոճաբանությունը գիտություն է լեզվական միջոցների նպատակահարմար գործածության մասին:

2. «ՈՃ» ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԻՄԱՍՏՆԵՐԸ

*«...իսկ երեմիան, բարձունքի վրա
նստած, արծաթե ստիլով գրի էր առնում
կատարվածը»:*

(Ստ. Չորյան, «Պապ թագավոր»)

Հայերեն **ոճ** բառը համապատասխանում է հունարեն **ստիլոս** բառին, որ շատ լեզուների մեջ մտել է **ստիլ** ձևով: Հունարեն և հայերեն բառերն ունեցել են իմաստային գրեթե միևնույն զարգացումը:

Ոճ բառը նախապես նշանակել է «ծղոտ, ցողուն»: Հին ժամանակներում իբրև գրիչ էին ծառայում ծղոտե սրածայր ծողիկները, որոնցով գրում էին մոմապատ տախտակների վրա: Հետագայում նման ծողիկները սկսեցին պատրաստել նաև մետաղից՝ կամ ոսկրից: Քանի որ տարբեր մարդիկ և տարբեր ծողիկներ միևնույն նշաններն արտահայտում էին իրարից փոքր-ինչ տարբեր ձևով, **ոճ** ասելով սկսեցին հասկանալ նախ գրության, ապա նաև ընդհանրապես խոսքի մի որոշակի ձև, տեսակ: Այսինքն՝ **ոճ** բառի սկզբնական իմաստը «տարբերություն, առանձնահատկություն» նշանակությունն է եղել:

Ոճ բառը գործածվում է ոչ միայն լեզվաբանության, այլև գրականագիտության և արվեստի մեջ: Օրինակ՝ ասում են հին հունական (հելլենական), հայկական, ռոմանական ծաղտարապետական ոճեր, ռոմանտիկական, իրապաշտական (ռեալիստական), խորհրդապաշտական (սիմվոլիստական) գրական ոճեր, գեղանկարչության մեջ՝

իմպրեսիոնիստական, վերացապաշտական (աբստրակցիոնիստական) ոճեր և այլն: Նույնիսկ սպորտում ասում են դասական ոճի ըմբշամարտ, խաղաոճ և այլն:

Այդ բոլորից տարբեր են լեզվի ոճերը:

3. ԼԵԶՎԻ ՈՃ

Լեզուն տարբերվում է ոչ միայն անհատից անհատ, այլև ըստ հասարակական խմբերի՝ և գործունեության բնագավառների: Միևնույն անհատն էլ միևնույն միտքը տարբեր պայմաններում տարբեր ձևով է արտահայտում՝ նայած այն բանին, թե ինչի մասին է խոսում, ում հետ և ինչ նպատակով: Հաղորդակցման բնագավառի առանձնահատկություններով, խոսողի (գրողի) անհատական լեզվական հակումներով, ծաշակով ու սովորություններով, իրադրությամբ, խոսքի առարկայի բնույթով, նպատակադրությամբ և ներգործուն լինելու պահանջով պայմանավորված՝ լեզվական տարբերությունները ոճական բնույթ ունեն, ձևավորվում են իբրև լեզվի ոճ:

¹ Լեզվի ոճը հաղորդակցման պայմաններին, իրադրությանը՝ յապատակին համապատասխան լեզվական միջոցների ընտրության ու խոսքի կառուցման եղանակների յուրօրինակությունն է:

4. ՈՃԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ոճերը լինում են երեք տեսակի՝ գործառական, իրադրական և անհատական:

Ա. Գործառական ոճեր

Որպես հաղորդակցման միջոց՝ լեզուն գործադրվում է կյանքի բոլոր բնագավառներում: Հաղորդակցում իրականացնելուց բացի լեզուն կատարում է նաև այդ ոլորտների առանձնահատկությունների հետ կապված բազմապիսի այլ դերեր: Այդ առանձնահատկությունները, արտացոլվելով լեզվի մեջ, աստիճանաբար կայունանում են այնքան, որ հաճախ միևնույն միտքը կյանքի տարբեր բնագավառներում տարբեր կերպ է արտահայտվում: Ստացվում է այնպես, որ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում

[illegible]

Լեզվի միջև կան երկու ընդհանուրացյալ միջ: Կայանալով ընդուն ևս չենալուստալով ը ըստ հանքային կանակի նա ղոլորունը, որուն ևս գործաղանդը է: Լեզվն այդ ղոլորային չեալալորունը ընդարսուն ընթացք է և ասլանալորկան է կանակի տվյալ ընթաղանդի զարգալանս ընթացքը: Լեզվի այդ «ղոլորային տարբարակնեը» կոլվում են գործաղանկս ոճեր:

Գործառնական ուժը լեզվական համակարգի պատմականորեն ձևավորված տարատեսակ է, որը կապված է հանրային կյանքի մի որոշ բնագավառի հետ:

Գործառնական ռմբլը լինում են՝ աստղայա-խոտակցական, վաղրական, գիտական, հրապարակախոտական, գեղարվեստական:

Գործադրական Կոմիտեի միմյանցից տարածելով իմ նախապնդումներն անկախաբար և արտադրատեղիական հատկանիշներով, թայց իրարից անբաժանելի են:

Ք. Իրադրական ոճեր

Ի հակադրության զործառական ոմնքի, որոնք լեզվի ոմնք են, իրար կան ոմնքը մնակորվում են խոսքի շարժում, խոսքի ոմնք են:

Իրադրական ուժերը խոսքի մեափորման առանձնահատուկ եղանակներ են, որոնք պայմանավորված են խոսքի

գրականից, հայերի ստացման և խոստովի կնիքումով ստորի վիճակում:

Խաչատուրյան ռեզիդենտի հետ հարաբերությունները հարգելի և արժանապատիվ է:

Խաչատուրյան ռեզիդենտի հետ հարաբերությունները հարգելի և արժանապատիվ է:

Խաչատուրյան ռեզիդենտի հետ հարաբերությունները հարգելի և արժանապատիվ է:

Խաչատուրյան ռեզիդենտի հետ հարաբերությունները հարգելի և արժանապատիվ է:

9. Անհատական ռեզի

Անհատական ռեզիդենտի հետ հարաբերությունները հարգելի և արժանապատիվ է:

Անհատական ռեզիդենտի հետ հարաբերությունները հարգելի և արժանապատիվ է:

նրանց խոսքում: Ոմանք սիրում են խոսել պարզ ու հակիրճ. մյուսները՝ քարդ և մանվածապաա, ոմանք սովորություն ունեն գործածել սովորական, ժողովրդախոսակցական քառեր ու ձևեր, մյուսները՝ գրքային, ոմանք խոսում են պատկերներով, մյուսները՝ ոչ և այլն: Այս հիմքի վրա էլ ձևավորվում են անհատական ոճերը:

Անհատական ոճը ընդհանուր լեզվի իրողությունների ընտրության և օգտագործման այն առանձնահատկությունն է, որ պայմանավորված է խոսողի մտավոր զարգացմամբ, աշխարհայացքով, խառնվածքով ու ճաշակով:

Խիստ անհատական լինելու պատճառով սրանք չեն դասակարգվում:

Անհատական ոճերն ավելի ցայտուն են ձևավորվում հրապարակախոսության մեջ և գեղարվեստական խոսքում:

Անհատական ոճերի տարբերություններն առաջել ցայտուն դրսևորվում են գեղարվեստական գրականության մեջ: Այստեղ անհատական ոճը դրսևորվում է իբրև **գրողի ոճ**: Որքան ավելի խորն է գրողի անհատականությունը և որքան ավելի է մշակված ու հղկված նրա լեզուն, այնքան ավելի հստակ է նրա ոճը, և այնքան ավելի պարզորոշ են դրսևորվում այդ ոճի առանձնահատկությունները:

Գրողի ոճը ոճական այն առանձնահատկությունների ամբողջությունն է, որոնք պայմանավորված են այդ գրողի աշխարհայացքով, իրականության նրա ընկալմամբ, խառնվածքով, ճաշակով և այլն:

Մեր դասական և ժամանակակից շատ գրողներ աչքի են ընկնում իրենց ուրույն ոճով, որ նկատելի է նույնիսկ պարզ համեմատության դեպքում: Բավական է համեմատել Բաճճու լեզուն Շիրվանզադեի, Թումանյանի լեզուն՝ Իսահակյանի կամ Տերյանի, Բակունցի լեզուն՝ Ջուրյանի կամ Դեմիրճյանի, Շիրազի լեզուն՝ Սևակի կամ Սահյանի հետ, որպեսզի իսկույն նկատենք նրանց ոճական տարբերությունները:

Հեղինակի ստեղծագործական զարգացման հետ միասին կարող է փոփոխվել նրա ոճը: Գրողը երբեմն իր լեզուն մշակելու ընթացքում հաղթահարում է ուրիշ գրողների ազդեցությունը, հեռացնում օտարամուտ տարրերը և, ինչպես ասում են, «գտնում է ինքն իրեն»: Այս քանում կարելի է համոզվել՝ համեմատելով Թումանյանի «Անուշի» առաջին և վերջնական տարբերակների որոշ հատվածներ:

I տարբերակ

— Ինչո՞ւ ես, ո՞վ կույս, դու այդքան արաում —
Այդ ինչ թախիժ է քո դեմքը պատում,
Կամ ինչ նախաահինք ծակատդ ամոթխած
Կորացնում է ցած:

Ինչո՞ւ ես, ո՞վ կույս, այդպես անտարբեր,
Երբ որ քո սիրով բյուրավոր սրտեր
Վառված ծգնում են ոտքերիդ փարվել,
Չգիտեն սիրել...

II տարբերակ

— Սիրո՞ւն աղջիկ, ինչ ես լալիս
Էդպես մենակ ու մոլոր,
Ինչ ես լալիս ու ման գալիս
Ես ծորերում ամեն օր:

Թե լալիս ես՝ վարդ ես ուզում,
Մայիս կգա, մի քիչ կաց,
Թե լալիս ես՝ յարդ ես ուզում,
Ա՛խ, նա գնաց, նա գնաց...

Անհատական ոճերի և գրողի ոճի մասին ասվածը պերճախոս կերպով հաստատում են Ե. Չարենցի «Լուսամփոփի պես աղջիկ» բանաստեղծությունը և «Տաղարան» շարքը: Առաջինը գրված է Վ. Տերյանի ակնհայտ ազդեցությամբ և հիշեցնում է նրա բանաստեղծությունները: Երկրորդում Չարենցն աշխատում է նմանակել Սայաթ-Նովայի ոճը:

Հոմանիշությունը որպես ոճական տարբերակումների հիմք

Ոճական ամեն տեսակ տարբերակումների հիմքը հոմանիշությունն է, որը հսկայական դեր է խաղում ոճաբանական երևույթների դրսևորման հարցում: Չլինեին նույն իմաստի արտահայտման տարբեր ձևերը, չէին լինի նաև ոճական տարբերակները:

Հոմանիշությունը իմաստով համարժեք կամ հարաբերակից լեզվական միավորների գոյությունն է:

Հոմանիշ լեզվական տարրերը խոստովին կամ գրողին ընտրություն կատարելու հնարավորություն են տալիս:

Հոմանիշությունը լինում է.

- ա) **բառային** – հոՎ – զեփյուռ – քամի – հողմ –
մրրիկ – փոթորիկ...
մաշկ – մորթ – կաշի – թաղանթ –
փառ – կեղև...
- բ) **ձևաբանական** – ծմեռվա – ծմռան,
ամառվա – ամռան,
ուսման – ուսումի,
արյամբ – արյունով,
պարեցնել – պարել տալ,
- գ) **շարահյուսական** – գնաց ջրի – գնաց, որ ջուր բերի,
քնած երեխա – երեխա, որը քնած է:

Բառային հոմանիշները սովորաբար ուղղակի կոչվում են **հոմանիշներ**:

III. ԲԱՌ ԵՎ ՈՃ

1. ԲԱՌԵՐԻ ԶԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ

Բառապաշարի ոլորտում ոճական գործունեություն ունեն բառերի ձևախմբատային խմբերը՝ բազմիմաստ բառեր, հոմանիշներ, հականիշներ, համանուններ, հարանուններ, որոնք էլ հիմք են դառնում պատկերավորման–արտահայտչական բառային միջոցների ձևավորման համար:

Ա. Բազմիմաստ բառեր

Բառերի ձևի և իմաստի հարաբերությունը տարբեր է լինում:

- ա) Մեկ ձևին համապատասխանում է մեկ իմաստ, ինչպես՝ **քսան, դու, բոլորը, պանիր, թանաք** և այլն:
Այսպիսի բառերը **մենիմաստ են**:
- բ) Մեկ ձևին համապատասխանում են մեկից ավելի իմաստներ, ինչպես՝ **մարմին** – 1. մարդու կամ կենդանու նյութական կազմը իր ֆիզիկական արտաքին դրսևորումներով (**Սարդու մարմինը բաղկացած է շատ մասերից**); 2. մարմնի ամբողջ մասն առանց գլխի (**Սաղմն արդեն ձևավորված էր՝ գլուխ և մարմին ուներ**); 3. ֆիզիկական առարկա (Երկրաչափական **մարմիններ են՝ բուրգը, գլանը, գունդը**); 4. առարկայականություն (**Նրա մտքերը մարմին առան և շարվեցին հայացքի դեմ**); 5. առարկայի, սարքի, մեքենայի հիմնական մաս (**Նավի մարմին**); 6. պետական կամ հասարակական հաստատություն (**Կառավարման մարմինները դեռևս լրիվ չեն ձևավորվել**):
Այսպիսի բառերը **բազմիմաստ են**:
- գ) Միևնույն իմաստին համապատասխանում են տարբեր ձևեր, իմաստները կամ ձևերը կարող են նույնը կամ նման լինել և այլն: Չևերի և իմաստների միջև դրսևորվող այս տարբեր հարաբերությունների հիման վրա առաջանում են բառերի ձևաիմաստային տարբեր խմբեր:

Բ. Հոմաներշներ

Հոմանիշ են կոչվում իմաստով իրար մոտ քաները:
Հոմանիշները մեծ մասամբ արտահայտում են միմյանի անար-
կան, երևույթ կամ հասկացությունը իմաստային ներք տարբերու-
թյուններով: Հայ աղբյուր տարբերությունների քննարկ՝ հոմանիշները
սխալում են հինգ անգամ:

- [illegible]

Քայքայողիկ դիտումն էլ կենա, որ զրանց մեջ էլ այդամե-
նակն, կան այդ բաների ծագմամբ պատմաաղբյուրված որոշակի
տարբերություններ: Ըստ բաների զգուշացն էմբը արվանախա-
նեի քան էլ, մյուսը՝ արմատախորն, մեկը զուրապան էլ, մյուսը՝
աշխարհաբար, մեկը քաղաքային էլ, մյուսը՝ գյուղական, մեկը թեմ

Բայց ոչ այդպիսի դիտումներ կենում, որ զրանց մեջ էլ այդամանազան, կան այդ բաների ծագմամբ պատմաաղբյուրական որոշակի տարբերություններ: Ըստ բաների զուգորդման մեկը արվեստագիտական քառ է, մյուսը՝ արվեստագործուն, մեկը զուգարան է, մյուսը՝ աշխարհաբար, մեկը քաղաքային է, մյուսը՝ գյուղական, մեկը թեև

աբ	սիայերեն	աբ լատինատառերով
գնալ		եղթալ
տված		սեթիք
սալտակ		ժեթակ
ստամ		սեթա
ժնան		սեթա
գնդիքիկ		սեթիք
գրաբար		սեթիք
հոգ		սեթիք
ժնդիքիկ		սեթիք
հիթ		սեթիք
քաղաքացի		սեթիք
պալ		սեթիք
պոռ		սեթիք
ժամ		սեթիք
քոթ		սեթիք
հայերեն		սեթիք
հոգաբարձ		սեթիք
ժողով		սեթիք

Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է ասել, թե բառի ամենից տեղին գործածությունն այն է, երբ տվյալ նախադասության մեջ և տվյալ խոսքում այն չի կարելի փոխարինել մի ուրիշ բառով, առանց իմաստի նրբության կորստի:

Գ. Համանուններ

Համանուն են կոչվում այն բառերը, որոնք ձևով նույնն են, իմաստով՝ տարբեր:

Համանուն բառերի իմացությունը կարևոր է երկու նկատառումով: Մի կողմից՝ նրանց ոչ ճիշտ գործածությունը կարող է ազդել խոսքի պարզության և ճշգրտության վրա, տեղիք տալ երկիմաստության և թյուրիմացությունների: Մյուս կողմից՝ նրանք կարող են օգտագործվել բառախաղերի ժամանակ և խոսքին աշխուժություն հաղորդել:

Համանունությունը կարող է լինել լրիվ և մասնակի: **Լրիվ** համանուն են այն բառերը, որոնք լիովին համընկնում են և՛ գրությամբ, և՛ արտասանությամբ:

Օրինակ՝ **կետ** (ծովային կենդանի) – **կետ** (գրանշան),

հոտ (բույր) – **հոտ** (ոչխարի հոտ),

փող (դրամ) – **փող** (խողովակ) և այլն:

Մասնակի համանունները լինում են մի քանի տեսակ:

1. **Համաձև են կոչվում** համանուն բառաձևերը, այսինքն՝ արտաքնապես համընկնող քերականական տարբեր ձևերը:
Օրինակ՝ **արի** (քաջ) – **արի** (եկ),
հացի (հաց բառի սեռական հոլով) – **հացի** (հացենի),
կրի (շաղախ) – **թող կրի**,
գնում է (տուն) – **գնում է** (թուղթ և մատիտ) և այլն:
2. **Համագիր են կոչվում** միատեսակ գրվող, բայց տարբեր կերպ արտասանվող բառերը, օրինակ՝ **բարդ** (հին կելտական երգիչ) – **բարդ** (ոչ պարզ, արտասանվում է **բարթ**):
3. **Համահունչ են կոչվում** տարբեր ձևով գրվող, բայց միատեսակ արտասանվող բառերը, օրինակ՝ **աղտ** – **ախտ**, **ուղտ** – **ուխտ**, **որդ** – **որթ**:

Դ. Հարանուններ

Հարանուն են կոչվում այն բառերը, որոնք ձևով նման են, իմաստով՝ տարբեր.

Ավստրիա – Ավստրալիա

Լիբիա – Լիբանան

Եվեդիա – Եվեյցարիա

պահպանել – պաշտպանել

խոստանալ – խոստովանել

Հարանունները երկու տեսակ են լինում՝ պատահական զուգադիպություններ (մարդ – մարտ, հարդ – հարթ, բիրտ – դիրտ, լուրթ – շուրթ, սար – լար) և նույնարմատ բառեր (քա-րային – քարոտ, խոստանալ – խոստովանել):

Հարանուններն օգտագործվում են գեղարվեստական խոսքում հարանունո՝ ն կոչվող ոճական հնարք ստեղծելու նպատակով:

Ե. Հականիշներ

Հականիշ են կոչվում այն բառերը, որոնք, անկախ ձևից, ունեն հակադիր իմաստներ:

Օրինակ՝ բարձր – ցածր, վերև – ներքև, թշնամի – բարեկամ, սև – սպիտակ:

Հականիշները կարող են լինել ինքնուրույն բառեր, ինչպես վերևի օրինակները, կամ ածանցավոր կազմություններ: Օրինակ՝ խելոք – անխելք, լուսավոր – անլույս, չափահաս – անչափահաս, գեղեցիկ – տգեղ:

Հականիշներն օգտագործվում են գեղարվեստական հակադրություն ստեղծելու նպատակով:

Վարժություններ

- 1. Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանից» դուրս գրեցեք հետևյալ բառերի հոմանիշները, աշխատեցեք դրանցով կազմել նախադասություններ.**

վախկոտ, ուրախ, քիչ, մաքուր, պարզ, շուտ, նայել, միշտ, ասել, հանդիմանել, առարկել, ցույց տալ, ծիծաղել, բախտ, բանաստեղծ, հաղթել:

2. Նշեցե՛ք, թե հոմանիշներից որը ինչ բնագավառում է օգտագործվում:

Խոսել – արտահայտվել – ծառել, անտուն – անօթևան – անապատան, պսպղալ – շողալ – ծառագել – ծածանչել, մոտիկ – մերձ – կից – հարակից – առընթեր, անդունդ – վիհ – խորխորատ, կողմնապահություն – աչառություն – կողմնակալություն – խտրականություն – ջոկողություն, ճարպիկ – աչքաբաց – ժիր, ըմբոստ – ապերասան – սանձարձակ, հիանալ – շլանալ – զմայլվել – սքանչանալ – ապշել – բերանը բաց մնալ, արհամարհանք – քամահրանք – արգահատանք, բաժու՜ւ – գավաթ – ըմպանակ, բարևել – ռոջունել – բարև տալ – գլուխը – ձեռք սեղմել – պատվի առնել, մեծամիտ – գոռոզ – բարօրամիտ – ամբարտավան – սնապարծ – ինքնահավան, լավ – ընտիր – պատվական, գունատվել – խունանալ – գունաթափվել – գույնը գցել, լսել – ականջ դնել – ունկնդրել, գեղեցիկ – սիրուն – չքնաղ – չնաշխարհիկ, փոքր – մանր – պստիկ – պուժուր, մեռնել – մահանալ – վախճանվել – շունչը փչել – հոգին ավանդել – մահկանացուն կնքել – կյանքի թելը կտրվել, պահեստ – ամբար – շտեմարան – մթերանոց – մահան – մարագ, գժվել – ցնդել – հիմարանալ – խելագարվել – խենթանալ – ցնորվել, քաջ – արի – կտրիժ – խիզախ – աներկյուղ – անվեհեր – սրտոտ:

3. Ստորև բերվող հատվածներում գտե՛ք հոմանիշները և որոշեցե՛ք նրանց ոճական դերը.

Ծառերը ծիծաղում մանրիկ,
 Խփում են լուսնյակի լարին,
 Լճակը աստղեր է առել,
 Ձնգոցով զարկում է քարին,
 Հայրենը տանիքից տանիք
 Եշուկ ու ծիծաղ է տանում,
 Տանում է լույսի պես փռում
 Հանդերին, լանջերին, սարերին:

Գալիս է նա առու-առու,
 Գալիս է նա վտակ-վտակ,
 Խառնվում ու գետ է դառնում
 Ուղտասարի ոտքերի տակ...
 Ոտից գլուխ փրփուրի մեջ,
 Եռում է նա ու հերսոտում,
 Գազազում է ու միսն ուտում...
 Ինքն իրեն աղում, մաղում,
 Իրեն տանջում ու չարչարում...
 Նորից ծչում, նորից գոռում,
 Խփում ճամփի քար ու խութին
 Ու գնում է փրփուր տալով...

Ուզում եմ հիմա իմ հասակով մեկ
 Ծառանալ որպես կենդանի բողոք,
 Ճչալ, որոտալ, հերքել հիմնովին
 Այդ անդարձության օրենքն անողոք...

Քարափներ, իմ քարափներ,
 Ձեր շուրթերի վրա ես
 Սարսուռ ու դող եմ...

(Հ. Մահյան)

խոնարհ ու հեզ
 Մի հոգնած եզ`
 Արորն ուսին,
 Ճանճը պոզին,
 Մի իրիկուն
 Գալիս է տուն:

(Ա. Խնկոյան)

Ջինջ աղբյուրների, գետերի մեջ պարզ
Արցունք են թափում ընկնող աստղերը...

(Հր. Հովհաննիսյան)

Չափարի տակ, եղինջի մեջ
Մանուշակն է գլուխ հանել,
Շուրջը փշեր, շուրջը խիճեր,
Կառ ու կոթուկ դառն ու լեղի
Ու մացառներ չոր ու դեղին:

(Մ. Մարգարյան)

4. Ընդգծված բառերի փոխարեն գործածեցե՞ք տարբեր հոմանիշներ, ցույց տվե՞ք իմաստային հնարավոր տարբերությունները.

1. Մինչ **հողին կհանձնեին** սպանված միևուճարին ու ետ կդառնային, մինչ **հոգու հացի կնստեին** ու վեր կկենային, սպանող միևուճարի **հոր տունն** ու բակը դատարկվեց (Ա. Սահիյան): 2. Եվ հայրենի անծայր երկրի փոշոտ **ուղիները** իրենց հետ տանում էին նրա **հոգին** դեպի արծվաքնակ լեռները, որոնց ապառաժոտ գահերից վիժող **ջրնկեցների** դիվական ծայնը լցնում էր լռությունն անծայրածիր (Ավ. Իսահակյան): 3. Ամառվա բաց երկնքից ծյուն մաղեց մորս **ծամին** (Հ. Սահյան): 4. Երկինքը հանդարտ հեքիաթ էր ասում, և արևելքում ծնվում էր **արփին** (Գ. Սարյան): 5. Մեծ թափառականը մոայլ աչքերը նետեց քաղաքի վրա: Փողոցներում և շուկաներում խռնվում էին **այրեր**, կանայք, երեխաներ: Ոմանք **աճապարում էին** մտահոգ, ոմանք արևի տակ զվարճանում էին անհոգ (Ավ. Իսահակյան): 6. Այրարատ աշխարհի այգիներն աշնան տարագներ էին հագել: **Շեներն** ու գյուղակներն իրար միացնող **խճողված** ճանապարհների եզրերին քամին կուտակել էր ծիածանի բոլոր գույները: Հեռվում **արծաթին էր տալիս** Երասխ գետը: **Մութն ընկնում էր** հանկարծ, միանգամից, իսկ **այգաբացն** արդեն շատ էր ուշանում: Հովհանը դուրս եկավ տնից և աննպատակ քայլեց աշնան **թափուր** այգիների նեղ ճանապարհով (Վ. Խեչումյան):

5. Գտեք համանունները և հարանունները, նշեցե՛ք, թե որ դեպքում նրանք արտահայտչական դեր ունեն և որ դեպքում՝ ոչ: Վերացրե՛ք սխալները.

Ա.

— Եվ իմ ինչ մրմուռը քո ցավի:

Ախ, գոնե մի սիրտ էլ կցավի՞...

Լորագետը...

Բխում է նա երակ-երակ

Ժայռերի բաց երախներից,

Բխում է նա երակ-երակ

Նրանց քարե երակներից,

Բխում է նա երակ-երակ

Նրանց քարե երազներից:

Երբ քարափներն աչքիդ

Կարապներ են դառնում,

Ճամփորդներ են դառնում,

Ու ոգի են առնում

Ճամփաները՝

Անիմաստ է արդեն թափառելը:

Նստիր և հրճվագին

Տառապանքդ քաշիր,

Տաշիր տողերը բիրտ

Ու տքնությամբ տաշիր

Ապառները.

Անիմաստ է արդեն

Թափառելը:

Եզան կերածը դարման ու սեզ էր,

Ինքը բարության քայլող մի դեզ էր,

Համառ էր, բայց և խոնարհ ու հեզ էր,

Ինչ անեո, եզ էր...

իս հանգստանան,

Երբ հայրենի լեռների մեջ
Նրանք չունեն ապաստարան...
Եվ գնում են ապաստանում
Հեռու-հեռու տափաստանում:

(Հ. Սահյան)

Բ. 1. Ապա գոմում շանը վերցնել տվին ոչխարների հոտը ու բռնեցին հետքը (Հր. Մաթևոսյան): **2.** Բրամսի կոնցերտը մենանվագում է բեյրութի դաշնակահարը, որն իր հայրենիքում՝ Լիբիայում, մեծ համբավ ունի: **3.** Մարտի շախմատային մարտերը դեռ շարունակվում են: **4.** Հանդիսատեսն այս դերասանից շատ անակնկալություններ ունի: **5.** Հենց իր՝ Մարխիաուզի հաշվումներով Սահարան կտրել անցնելու համար հարկ կլինի անցնել Սափրիտանիան, Մալին, Ալժիրը, Լիբանանը և Եգիպտոսը (Սամուիլից):

6. Գտե՛ք հականիշները և ցույց տվե՛ք, թե ինչ ոճական դեր են խաղում.

Այնպես ես գալիս, այնպես ես գնում,
Ով դու արարող և ավերիչ,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:
Ինձ համար հերիք է արդեն
Ժպտալդ ու լալդ,
Երբ գալդ պարզե էր մի մեծ,
Ուր մնաց մնալդ:
Եվ դարձյալ առնելիք չունեմ,
Բայց շատ է տալիքս,
Ներիր ինձ, ներիր ինձ, եթե
Չների տարիքս:

Մի տեղ իշխան ու տեր,
Մի տեղ համեստ հովիվ,
Մի տեղ ճորտ եմ եղել,

Մեկին մոտ-մտերիմ,
 Մեկին հազիվ ծանոթ,
 Մեկին խորթ եմ եղել:

Անհնար է հավատալ,
 Որ չկաս իրոք,
 Դու իմ եղբայր, դու իմ պապ,
 Իմ գիծ, իմ խելոք,
 Իմ հանճարեղ, իմ հիմար,
 Իմ պղտոր, իմ ջինջ,
 Բահի զնգոց, խոփի վար,
 Ամեն, ամեն ինչ...

Բախտի խորհրդով եկանք մոտեցանք
 Եվ մոտենալով այնքան հեռացանք,
 Որ ետ կանչելու էլ բառ չմնաց:
 Բախտի խորհրդով թողինք հեռացանք,
 Եվ հեռանալով այնքան մոտեցանք,
 Որ բաժանվելու հնար չմնաց:

(Հ. Սահյան)

2. ՊԱՐԶՎԱԾՔՆԵՐ

Սովորական բառակապակցությունների և նախադասությունների կազմն ամեն անգամ փոփոխվում է ըստ հանգամանքների փոփոխության: Սակայն կան բառակապակցություններ և արտահայտություններ, որոնց անդամների կապը համեմատաբար կայուն է՝ աչքի լույսի պես պահպանել, օձի լեզու թափել, խոսքը կտուրը գցել և այլն: Այսպիսի բառակապակցությունները և արտահայտությունները իմաստային առումով միասնական ամբողջություններ են և ունեն գրեթե մեկ բառի արժեք: Նրանց ներքին կապը պայմանավորված է կամ փոխաբերական ընդհանուր իմաստով, կամ այնպիսի միասնական նշանակությամբ, որ բաղադրիչների փոփոխության դեպքում կարող է կորչել: Նախադասությունը վեր-

լուծելիս կայուն բառակապակցությունները չի կարելի մասնատել Նրանք ամեն անգամ նորից չեն կազմվում, այլ սովորաբար նույնությամբ առնվում կամ, ինչպես ասում են, վերարտադրվում են:

Միասնական իմաստով կապված և նույնությամբ վերալուծող կայուն բառակապակցություններն ու արտահայտությունները կոչվում են դարձվածքներ:

Դարձվածքները կարող են ունենալ նախադասության տեսք: Դարձվածքներ են՝

որևէ լեզվի համար բնորոշ և բառացիորեն չթարգմանվող յուրահատուկ արտահայտությունները՝ **առանձնաբառայթները** (իդիոմները). **գլուխ հանել, գլուխ դնել, ծեռք բերել, դես ու դեն ընկնել, տուր թե կտաս** և այլն.

ժողովրդական առածներն ու ասացվածքները.

Աղվեսի վկան իր պոչն է, Կուշտը սովածին մանր կբրդի: Ձուկը գլխից է հոտում: Փորձած թանը անփորձ մածնից լավ է: Գիտունի հետ քար քաշիր, անգետի հետ փլավ մի ուտի: Ահը վեր է, քան մահը:

Պատմական դեպքերից, դիցաբանական գրույցներից ու գրքերից սկիզբ առած և լեզվից լեզու տարածված թևավոր խոսքերն ու արտահայտությունները.

Ռուբիկոնն անցնել — վճռական քայլ կատարել,

գորոյյան հանգույց — անհաղթահարելի դժվարություն և այլն: Չանագան հեղինակների ստեղծած իմաստախոսքերը աֆորիզմները. **Պլատոնը բարեկամս է, բայց ավելի մեծ բարեկամս է ճշմարտությունը** (Արիստոտել):

Առողջ միտքը առողջ մարմնի մեջ (Յուվենալ):

Լավ է կույր աչոք, քան կույր մտոք (Եղիշե):

Դարձվածքների տեղին օգտագործումը խոսքը դարձնում է դիպուկ, պատկերավոր և ավելի ներգործուն: Դրանց լայն գործածությունը բնորոշ է գեղարվեստական, առօրյա-խոսակցական և հրապարակախոսական ոճերին: Դարձվածքներն ավելի քիչ են հանդիպում գիտական խոսքում: Գեղարվեստական երկերում և հատկապես բանաստեղծության մեջ դարձվածային միավորներն՝ ըստ խոսքի նպատակի, երբեմն կարող են որոշ փոփոխությունների ենթարկվել և նույնիսկ հակառակ իմաստ ստանալ.

Լավ է ուշ, քան երբեք — Լավ է երբեք, քան ուշ:

Վարժություններ

1. Օգտագործելով հայերենի բացատրական և դարձվածաբանական բառարանները՝ գրեցե՛ք սիրտ, գլուխ, ձեռք բառերով կազմված դարձվածքներ:
2. Հետևյալ բառերի համար գտե՛ք հոմանիշ դարձվածքներ. ծաղրել, հուշել, օգնել, հասկանալ, մեռնել, անտեսել, փորձառու, ճարպիկ, ծուլանալ, թանկ, խարդավել, զավթել, հետապնդել:
3. Բացատրեցե՛ք հետևյալ դարձվածքների իմաստը, դրանք փոխարինեցե՛ք պարզ հոմանիշներով.
ականջները սրել, սիրտը փորն ընկնել, անկողին ընկնել, աչքը լիանալ, աչքի առաջ ունենալ, արյունը գլուխը խփել, բանը բուրդ լինել, բանը բանից անցնել, գետինը մտնել, փափախը գետնով տալ, գույնը գցել, օրվա հացի կարոտ մնալ, ոտքի կանգնել, ձեռ ու ոտ ընկնել:
4. Գտե՛ք դարձվածքները, բացատրեցե՛ք դրանց իմաստը, ցույց տվե՛ք դրանց ոճական դերը տվյալ խոսքում.

Ա. Եթե ես մի օր աշխարհից գնամ,
Ո՛ւմ հառաչից ես դու վեր թռչելու,
Ո՛ւմ թևերով ես վեր-վեր թռչելու,

Հոգին առնելու առանց պատճառի:
Եթե ես մի օր աշխարհից գնամ,
Ո՛ւմ աչքերով ես քեզ ծանաչելու,
Բռիդ մեջ առած ո՛ւմ ես տանջելու,
Ո՛ւմ ես խաչելու հիսուսավարի:

— Էլ ո՛ւմ գլխին ես կրակ թափելու,
— Ո՛ւմ ես գցելու բերանն աշխարհի:

(Հ. Սահյան)

Բ. 1. Մեր մոլորակի վրա Դեզֆուլից ավելի վատ քաղաք չկա: Կարծես արար-աշխարհի կեղտը բերել կուտակել էին այստեղ:
2. — Ես գիտեմ, որ այդ գործից գլուխ չե՞ք հանի,— ասաց իմ գլխավոր պետը (Աթ. Ավագյան): 3. Ինչ որ եղավ՝ գնացողին եղավ,

ջահել– ջիվան էր՝ մուրազը փորում մնաց, թագ ու պսակի կարոտ գնաց, ո՛չ ժառանգ թողեց իր հետևից, ո՛չ գործ, որի հետ իր անունն էլ հիշվի... (Ա. Սահիսյան): 4. Մի կաց, ես քո ապուրը կեփեմ: 5. Ինչ է, թագավոր չեմ, բերանս ջուր պիտի առնեմ: 6. Բանակը ձեռքից գնացել էր: 7. Մատյան գունդը եկավ, և պարսից զորքը խելքը գլուխը հավաքեց, կուռ շրջապատեց Վարդանին: 8. Հա՛, էլի ինչ սատանա մտավ պինչդ: 9. Հիմի Վարաժը շուն կտրեց (Դ. Դեմիրժյան):

5. «Առաձանիից» դուրս գրեցեք տասնական առաձներ և ասացվածքներ, բացատրեցեք դրանց իմաստը:
6. Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից դուրս գրեցեք իմաստախոսքերի արժեք ստացած հատվածները:

IV. ԲԱՌԵՐԻ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ

1. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՃԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ

Բառային ոճաբանությունը լեզվի գործնական ոճաբանության բաժիններից մեկն է: Նա ուսումնասիրում է բառերի ոճաբանական հատկանիշները և նրանց դերը խոսքի նպատակային կառուցման գործում: Նա քննում է բառերի ոճական շերտերը, պարզում նրանց գործածության պայմանները, որոշում, թե բառային ինչ միջոցներ ունի լեզուն տվյալ բնագավառին, իրադրությանը և նպատակին ամենից ավելի համապատասխան ձևով արտահայտելու համար: Լեզվի հարստության չափանիշը ոչ միայն բառերի քանակն է, այլև բառային այնպիսի զուգահեռների առկայությունը, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ընտրություն կատարել տվյալ պայմաններում միտքն առավել հարմար արտահայտելու համար:

Ոճական շերտավորումներն ավելի ցայտուն ու որոշակի դրսևորում են բառապաշարի մեջ: Գործառական կամ իրադրական ոճային տարբերակումներն ամենից առաջ պայմանավորված են օգտագործվող բառապաշարային միջոցներով: Չնսեմացնելով, իհարկե, քերականության դերը՝ կարող ենք ասել, թե ոճն ամենից առաջ պայմանավորված է բառերի ընտրությամբ և արտահայտչությամբ: Տեական գործածության պատճառով բառերի որոշակի խմբեր հատկացվում են այս կամ այն գործառական կամ իրադրական ոճին՝ ստանում ոճական կամ հուզարտահայտչական երանգավորում: Ոճական, հուզական, արտահայտչական երանգավորումները հավելիմաստներ են՝ բառի, դարձվածքի կամ արտահայտության հիմնական իմաստին ուղեկցող լրացուցիչ իմաստներ, նրբիմաստներ:

Բոլոր բառերը չէ, որ հավելիմաստներ ունեն: Նրանց զգալի մասը չեզոք է, ի տարբերություն ոճականորեն ակտիվ բառերի, որոնք ունեն այդպիսիք: Օրինակ՝

FILMSTILLS

Հատուկ քառապարզ, ի տարբերություն համագործնական, բնութարանի և ամենուրեք գործածված չունի։ Այս խցին պատկանող քաղեղ տարաբար գործածվել են այս կամ այն գործածման հոմ, մշակարարական տարաբեր և այլ։ Այլ խցիկ ստանձ հատուկ քառապարզի մեջ մտնում են այն գործերը և քաղեղները, որոնք որևէ անցկացվող սովորականի գործածության ունեն (տեղիները, մասնավորական քաղեղ, վաշապարտություններ, նկարապարտություններ, տարաբանություններ, գեղարարություններ և այլն)։

3. ԽՈՍԱԿԳԱԿԱՆ ԵՎ ԳՐԶԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Բառերի ոճական ամենանախնական տարբերակումը կապված է բանավոր-խոսակցական կամ գրավոր-գրքային խոսքերին հատուկ լինելու հատկանիշի հետ:

Բառապաշարային այս երկու խմբերն էլ կարող են պարունակել թե՛ համագործածական, թե՛ հատուկ բառեր: Խոսակցական հատուկ բառապաշարի մեջ մտնում են զավառաբանությունները, գոեհկաբանությունները, ժարգոնային բառերը, մասամբ նաև օտարաբանությունները:

Գրքային հատուկ բառապաշարի մեջ մտնում են տերմինները, վարչաբանությունները, հնաբանությունները, նորաբանությունները և մասամբ օտարաբանությունները: Խոսակցական և գրքային բառապաշարային խմբերի հարաբերությունը կարելի է արտահայտել հետևյալ սխեմայով:

գրքային բառապաշար	համագործածական բառապաշար	խոսակցական բառապաշար
----------------------	-----------------------------	-------------------------

4. ՀԱՏՈՒԿ՝ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՏԵՍԱԿՆԵՐ

Ա. Հնաբանություններ և նորաբանություններ

Լեզվի բառապաշարը ժամանակի ընթացքում փոխվում է: Որոշ բառեր դառնում են անգործածական կամ քիչ գործածական, գործածության մեջ են մտնում նոր բառեր:

Ամենօրյա գործածությունից դուրս եկած կամ, ինչպես ասում են, հնացած բառերը երբեմն կարող են հանդես գալ պատմական աշխատություններում, ինչպես նաև օգտագործվել գեղարվեստական խոսքում՝ այս կամ այն անցյալ ժամանակաշրջանի համար բնորոշ լեզվական միջավայր ստեղծելու: Իր ժամանակն ապրած մարդու խոսքը բնութագրելու համար և այլն: Անտեղի գործածվելու դեպքում այդ բառերը խոսքին տալիս են վերամբարձություն և հեռտորականություն:

Սովորական գործածությունից դուրս եկած բառերն ու արտահայտությունները կոչվում են հնարանություններ, օրինակ՝ սույն (այս), նկրտում (ծգտում), զգլխիչ (հարբեցնող), այրումի, ասպազեն, ամիծ, էրե, գանակոծել, ողոքել և այլն: Ժամանակակից հայերենի հնարանությունները գալիս են հատկապես գրաբարից: Այն հնարանությունները, որոնք արտահայտում են պատմական իրադարձություններ, առարկաներ, հասկացություններ, կոչվում են **պատմաբառեր**, օրինակ՝ սպարապետ, տեգ, սեպուհ, ատրուշան:

Հնաբանություններին հակառակ կան բառեր, որոնք նոր են միայն համարում լեզվի բառապաշարը և հաճախ դեռ լիովին չեն մերվել նրան:

Լեզվի մեջ նոր մուտք գործած բառերն ու արտահայտությունները կոչվում են **նորաբանություններ**. օրինակ՝ համալիր, մասնաշենք, չափորոշիչ, շուկայավարություն, վարկանիշ, խորհրդարան, գեղասահք, դահուկորդ, պատժենար, կրկնուսույց և այլն:

Նորբանությունները երկու հիմնական աղբյուր ունեն. դրանք կամ կազմվում են լեզվի սեփական միջոցներով՝ արդեն եղած բառերի օրինակով, կամ փոխ են առնվում այլ լեզուներից:

Բ. Բարբառաբանություններ և ժարգոնային բառեր

Հայերենը, ինչպես հայտնի է, բարբառներով հարուստ լեզու է, և գրական հայերենի երկու տարբերակներն էլ (արևելահայերեն, արևմտահայերեն) ստեղծվել են բարբառային հիմքի վրա: Բայց նախապես վերցրած բարբառային բառապաշարը, որ յուրացվել է գրական լեզվի կողմից (դահուկ, չմուշկ, արաժան, էտել և այլն), այժմ բարբառային չի համարվում: Բարբառային բառապաշարը գործածվում է բարբառներում: Սակայն հաճախ զանազան նպատակներով, հատկապես զեղարվեստական խոսքում՝ գրական լեզվով չխոսող անձանց կերպավորելու և անհատականացնելու նպատակով օգտագործվում են բարբառային բառեր ու արտահայտություններ:

Գրական լեզվում գործածվող և իրենց տեղական երանգը պահպանած բարբառային բառերն ու արտահայտությունները կոչվում են **բարբառաբանություններ** կամ **գավառաբանություններ**:

Բարբառային բառերի գործածությունը գրական լեզվում, հատկապես վարչագործարարական, գիտական և հրապարակախոսական ոճերում, խրախուսելի չէ: Սակայն գեղարվեստական խոսքի մեջ գրողները երբեմն դիմում են բարբառային բառերի և արտահայտությունների՝ տվյալ վայրի կենցաղային, ընտանեկան և այլ կարգի առանձնահատկություններն ավելի ցայտուն կերպով արտահայտելու, տեղական երանգավորում ստեղծելու նպատակով: Այդ դեպքում էլ գրողը պետք է խուսափի ծայրահեղություններից. բարբառային շատ բառերի և արտահայտությունների գործածությունը, մանավանդ, երբ դրանք խիստ տեղային բնույթ ունեն, խոսքը դարձնում է դժվարհասկանալի և նվազեցնում նրա ներգործությունը:

Բարբառաբանությունից տարբեր են **ժարգոնային բառերն ու ծածկաբանությունները**, որոնք գործածվում են հասարակությունից մեկուսացած զանազան խմբերի կողմից՝ մեծ մասամբ ուրիշներին անհասկանալի մնալու նպատակով:

Ժարգոններն իրականում խառնալեզուներ են, քանի որ օգտագործում են տարբեր լեզուների պատկանող բառապաշարային տարրեր: Հայերենը ամբողջովին ձևավորված ժարգոններ չունի: Մասնագիտական որոշակի խմբերի խոսվածքները և փողոցային խառնալեզուն օգտագործում են հիմնականում ռուսերեն համապատասխան լեզվական միավորներ: Ժարգոնային՝ որոշ անխրախուսելի տարրեր կարելի է տեսնել դպրոցականների խոսքում, որտեղ բառերի փոխարեն օգտագործում են նրանց կրճատված-աղավաղված ձևերը (**թվաբ** – թվաբանություն, **մաթեմ** – մաթեմատիկա, **քնագ** – քնագիտություն, **զուբրիտ** – անգիր անել և այլն):

Ժարգոնային բառերը և արտահայտությունները նույնպես կարող են գործածվել գեղարվեստական գրականության մեջ՝ որոշ խավերի կյանքի նկարագրությանը համապատասխան երանգ հաղորդելու և այդ խավերին պատկանող հերոսների խոսքը ոճավորելու նպատակով: Սակայն ինչպես բարբառայնությունների դեպքում, այս դեպքում էլ չափավորությունն ու զգուշությունը խիստ անհրաժեշտ են:

9. Մասնագիտական բառեր և տերմիններ

Բացի գրական լեզվի սովորական բառերից, կան տարբեր գբաղմունքների հետ առնչվող բառեր, որոնք հաճախ են հանդիպում մասնագիտական գրականության մեջ և տվյալ գործունեությամբ միավորվող հասարակական խմբերի խոսքում: Այդպիսի բառերը կոչվում են մասնագիտական բառեր:

Մասնագիտական բառերից տարբեր են այն բառերը, որոնք գործածվում են միանգամայն որոշակի իմաստով, գիտականորեն ճշգրիտ և ստույգ սահմանված հասկացություններ արտահայտելու համար:

Այն բառերը, որոնք գործածվում են ճշգրիտ կերպով սահմանված հասկացություններ արտահայտելու համար, կոչվում են տերմիններ:

Տերմինների ամբողջությունը կոչվում է տերմինաբանություն:

Տերմինների ամենազխապղոր հատկանիշն այն է, որ նրանք ծառայում են գիտության, մշակույթի որոշակի ծյուղերի:

Գիտության, տեխնիկայի, սպորտի, արվեստի ամեն մի բնագավառ ունի իր հատուկ տերմինները: Այսպես՝ **գոյական, ածական, բայ, շաղկապ, հոլովում, խոնարհում և շատ այլ բառեր քերականական տերմիններ են և միասին կազմում են քերականական տերմինաբանությունը: Ռեալիզմ, ռոմանտիզմ, նատուրալիզմ, սյուժե, ֆաբուլա, կերպար և այլ բառեր գրականագիտական տերմիններ են: Բանակ, դիվիզիա, գունդ, վաշտ, ջոկ, ռազմաձակատ, գնդացի, հետախույզ և այլ բառեր ռազմական տերմիններ են: Ֆուտբոլ, պաշտպան հարձակվող, դարպասապահ, բասկետբոլ, ցատկ, գեղասահք, հնգամարտ և այլ բառեր մարզական տերմիններ են և այլն:**

Տերմինները մտնում են լեզվի հատուկ բառապաշարի մեջ և, ի հակադրություն սովորական բառերի, մեծ մասամբ մենիմաստ են, զուրկ հուզարտահայտչական երանգներից:

Տերմինները բնորոշ են հատկապես գիտական ոճին: Սակայն նրանք կարող են հանդիպել նաև գեղարվեստական գրականության մեջ՝ մեծ մասամբ տվյալ երկի թեմայի հետ կապված կամ տվյալ մասնագետների խոսքը ոճավորելու և տիպականացնելու համար: Կան դեպքեր էլ, երբ որևէ հեղինակ գործածում է մասնագիտական տերմիններն ու բառերը ոչ բնորոշ տեքստում՝ երգիծական տպավորություն ստեղծելու նպատակով:

— Դպրեն, տեսա՞րս տանը, երևի դժուար էր մտադրել քիչ շուտ, ասե՛ք, բա՛ն-նա՛ն արե՛կը, քթե՛ն ի համար միտ, բան-բանիկ, կտրու՛նի կտմա՛ն, ու քնն էլ փրկու՛ն է՛:

Ե. Շատարարանություն և փոխառություն

Պարզե՛ր տարբերությո՛ւնը, արժեքն էլ կանգ թողնե՛ր ճշտ-կան շինված ու փոխառած հարաբերությունների մեջ նե՛ կը չկա՛ն լրգունից զարգացման աստիճանից շին էլ, բան էլ թվո՛ւն է՛ն մեզ ինչո՛ւն ասե՛ն նե՛ բանը ու արտահայտությունը՝ նե՛ր իսկապես էլ փոխառյալ միջոցով:

Փոխառություն ասե՛ն հետաքրքիր է, երբ ցնցուն իր լրգունից բանը կամ արտահայտությունը փոխվում է այլ լրգունի: Դարձե՛ր ժամանակ հանձնվել էր հասուն ժողովուրդների լրգունից շատ բանը էլ փոխառել: ինչպե՛ս քիչի՛ն, հազար, մեկու հարյուր, մեկ կարգիներով՝ կարգիներ, հասարակ, քաղաք, ֆիզիկա մոտեցանելի, նմանիկ, կարգիկան (արտոնական), փայտ, ծխախոտ (արտոնական) և այլն: Երբ էլ անե՛ն բանից յուրաքանչի՛ր հանձնվել կարելի, սակայն արժեք ասե՛ն ինչ հարգե՛ր: Երբ ժամանակներում նե՛ հանձնվել հաճե՛ն էլ փնչի փոխառյալ, ինչպե՛ս կնիտ, պան, պարունի, քրիպ, գլաճիտ, պարսպանիտ, վաթե՛ն, արանձուր, անկողան, ասե՛րք և այլն:

Իրիչ թվանիցից փոխած և բացարձակ սե՛ն բանից ու արտահայտությունից, որոնց հասկանալի համարմանից լինել, կոչվում են փոխառյալ բանի կամ արտահայտի փոխառություններ:

Փոխառության մի տեսակն է թարգմանականը, երբ փոխվում է ոչ թե՛ տառը բայց, այլ խոսքը թարգմանված խոսքապատ, իսկ թարգմանիցը թարգմանվում հանդիս է լինել: Թարգմանը լսողը բանը բան, ո՛ր բացվում է ևս, չէ՛ր փոխանցե՛ր միայն ո՛ր հոգաճաճով, նախնական ստանդարտ է ինչև-նային ճանդ՝ անպակասով ասե՛նելը կարևոր:

սեպտեմբեր	հոկտեմբեր	դեկտեմբեր
սեպ	ո	դե
դեպ	ս	դե

Նույն եղանակով է ստեղծվել հայերենի **երկաթուղի** բառը, որ պատճենված է ռուսերենի *железная дорога*—ից, վերջինս էլ նման ծևով պատճենված է եվրոպական լեզուներից:

Պատճենման եղանակով ստեղծված բառը կոչվում է պատճենյալ բառ, պատճենաբառ կամ ուղղակի բառապատճեն. օրինակ՝ **օդագնաց, տիեզերագնաց, ինքնաթափ, ինքնաեռ:**

Փոխառություններից տարբեր են **օտարաբանությունները**, որոնք նույնպես օտար բառեր են, բայց անհարկի գործածություն ունեն, քանի որ նրանց համարժեքները սովորաբար լեզվի մեջ կան:

Մայրենի լեզվում անհարկի կերպով գործածվող այլալեզվյան բառերը, արտահայտությունները և խոսքային կառույցները, որոնց համարժեքները գոյություն ունեն, կոչվում են օտարաբանություններ:

Օտարաբանությունները դժվարացնում են խոսքի հասկանալիությունը, խախտում ոճի միասնությունը և լեզվի մաքրությունը:

Օտարաբանություններ հաճախ են գործածում այն մարդիկ, ովքեր կրթություն են ստացել ոչ մայրենի լեզվով, լավ չեն տիրապետում մայրենի լեզվին, չգիտեն օտար բառերի ու արտահայտությունների հայերեն համարժեքները:

Յուրաքանչյուր մարդ պետք է հատուկ հոգածության առարկա դարձնի իր խոսքը, հետևի նրա մաքրությանը, հրաժարվի օտարաբանություններից: Պետք է հիշել, որ մարդ ինչպես խոսում է, այնպես էլ մտածում է:

Առանձնապես վտանգավոր են օտարաբան կապակցությունները կամ, այլ կերպ ասած, քերականական օտարաբանությունները, որոնց օտար լինելը առաջին հայացքից չի երևում և այդ պատճառով տարածվում ու սկսում են գիտակցվել իբրև հայերեն: Օրինակ՝ **«Մեր տունը գտնվում է Աբովյան փողոցի վրա», փոխանակ՝ «Մեր տունը Աբովյան փողոցում է»:**

Սակայն օտարաբանությունները, ի տարբերություն փոխառությունների, ոճական տեսակետից ակտիվ են և գեղարվեստական գրականության մեջ գործածվում են ոճավորման և երգիծական նպատակով:

Օտարաբանությունների դեմ պայքարը հաճախ ոմանց կողմից վերածվում է պայքարի ամեն մի օտար բառի, այդ թվում նաև փոխառությունների դեմ: Դրա հետևանքով երբեմն ստեղծվում են ան-

հաջող, արհեստական, շինծու, երկարաշունչ և դժվարհասկանալի նորակազմ բառեր, որոնք չեն յուրացվում մայրենի լեզվի կողմից և շատ շուտ դուրս են գալիս գործածությունից, մոռացվում:

Օտար բառերի փոխառությունից ընդհանրապես խուսափելը, բոլոր դեպքերում անպայման դրանք սեփական ինքնահնար բառերով փոխարինելու ձգտումը մաքրամոլություն է: Երկուսն էլ՝ թե՛ օտարամոլությունը, թե՛ մաքրամոլությունը հավասարապես անցանկալի են:

2. Գռեհկաբանություններ և հասարակաբանություններ

Լեզվում կան բառեր և արտահայտություններ, որոնք ունեն կոպիտ, գռեհիկ իմաստ կամ ընկալվում են որպես այդպիսին: Դրանք հիմնականում գործածվում են խոսակցական լեզվում, բայց առանձին դեպքերում թափանցում են նաև գրական լեզվի մեջ, գեղարվեստական գրականության լեզվի մեջ, ուր իրենց բացասական ոճական ուժեղ երանգի պատճառով օգտագործվում են հերոսների (հատկապես անկիրթ մարդկանց) խոսքի անհատականացման համար: Դրանք գռեհկաբանություններ են:

Գռեհկաբանությունները բացասական արտահայտչական երանգ ունեցող, հանրորեն կոպիտ, գռեհիկ ծանաչված բառերն ու արտահայտություններն են:

Այդ շարքին են պատկանում զանազան հայեոյական, վիրավորական բառեր ու արտահայտություններ, անեծքներ:

— Ո՞վ ա,— կանչեց պառավը լեղապատառ:

— Ձաիրումար ու չոռ ա, բաց արա էլի... (Նար-Դոս)

Խոսքին ոճական երանգ հաղորդող բառերի մյուս խումբը **հասարակաբանություններն** են: Հասարակաբանություն տերմինը երկու իմաստով է գործածվում.

- 1) լեզվական իրողություն, որ հատուկ է առօրյա բարբառախառն խոսակցական լեզվին (գիսկտվել, շնթռկել, պլշել, աչքերը չռել և այլն),
- 2) այլ ոճերին (գիտական, կենցաղային, վարչական) հատուկ բառեր և արտահայտություններ, որոնք գրական երկերի լեզվում

օգտագործված են ոճավորման նպատակով՝ երբեմն ստանալով փոխաբերական իմաստ:

Վիճեմ նաև այն մուրթի դեմ,
Որ կուրացնում, աչք չի շոյում, –
Մթնած վիճեմ
Այն բուրթի դեմ,
Որ կարծում է՝ շեշտ է դարձել...

(Գ. Սևակ)

Գռեհկաբանությունների և հասարակաբանությունների գործածության հարցում կարող է լինել երկակի միտումնավոր վերաբերմունք:

1. Մեղմասություն: Մեղմասությունը կամ գեղասությունն այն երևույթն է, երբ խոսքի մեջ գռեհկաբանությունները և հասարակաբանությունները փոխարինվում են վայելուչ համարվող հոմանիշներով, գործածվում են այնպիսի բառեր ու ձևեր, որոնք մեղմացնում, նվազեցնում են բացասական, անվայելուչ համարվող հասկացությունները: Այսպիսի բառերը **մեղմաբանություններ** են:

«Ճիշտ չեք ասում», փոխանակ՝ «Սուտ եք ասում»,
անհամակրելի, փոխանակ՝ ատելի,
վախճանվել, հոգին ավանդել, փոխանակ՝ մեռնել,
ննջեցյալ, հանգուցյալ, փոխանակ՝ մեռել և այլն:

2. Կոպտասություն: Սա մեղմասության հակառակ երևույթն է, երբ սովորական ոճական տեսակետից չեզոք բառերն ու արտահայտությունները դիտավորյալ կերպով փոխարինվում են կոպիտ, գռեհիկ երանգ ունեցող հոմանիշներով, օրինակ՝

բարձրահասակ – լողլող,
ծեծել – դնգստել, վզակոթին հասցնել, հետույքին տալ,
չես տեսնում – կոյր ես,
հեռացիր – պոչդ քաշիր,
լռիր – ռեխդ փակիր, ախոռդ փակիր,

Վարժություններ

1. Տեքստում եղած խոսակական և բարբառային բառերը փոխարինեցե՞ք համապատասխան գրական հոմանիշներ:

րով, նշեցե՞ք դրա հետևանքով կատարվող իմաստային փոփոխությունները:

Ա. Դրանք էլ ի՞նչ հավես արին ջարդվելու: Իշխան Սաքո, մի գնա փրթի էդ թշնամուն: Ժողովրդին առաջ գցե՞ք, թող գնա՛ համ էլ հառամ–զադա զորքի շնքին տա մոտս բերի: Դե՛, հիմի ու՛ր եղեք ու էլ զահլա մի՛ տանեք: Տերության գործը մնաց: Կերակուրները սառեցին: Ես գործ ունեմ: Հաց պիտի ուտեմ: Հասկացա՞ք, հայվաններ: Էլ սրանից դենը քանի ջարդվի՛ ղարկեցե՞ք, քանի ջարդվի՛ ղարկեցե՞ք: Ու մին էլ թե ներս եք եկել ու կռվի վրա խոսք եք բաց արել՝ կարկաժներդ միջից կկիսեմ: Իմացա՞ք: Ուստիան, մի քիչ էլ գնանք կտեր ծերին նստենք ղայլան քաշենք: Ա՛յ, հիմի բաղչում սուփրա կբանան, գնանք ծաղիկների մեջ նստենք քեֆ անենք:

(Սենեկապետին): Գյաղա՛: Գնա ասա լավ չարագով սուփրա գցեն: Սազանդար կանչի. գան մեզ բաղչա տանեն: Դուք էլ մեզ ծամփա կդնեք բաղչա ու հետո կերթաք ձեր գործին:

(Դ. Դեմիրճյան)

Բ. «... Էն է՛ ախպեր ջան, ախպորս ասեմ՝ ծիս նստել գնում էի Դումանլու, Չամլըբել: Էնպես գիշերվա դառը կեսը կըլներ. մին էլ տեսա, որ ընկել եմ Ղարանլուխ մեշի ջահնամդարասին: Հիմի, ախպեր ջան, ականջս ծենի՝ ծիուն հարաքյաթ, դամշուն բարաքյաթ՝ գնում եմ: Ամա՛ մի մթնագիշեր էլ է, որ աչք աչքի չի գալիս: Մին էլ մի ծեն ընկավ ականջս: Ասի, յա գազան է. յա ավազակ: Ականջ դրի՛ որ գազանի, ավազակի բան չի, սելավի պես գալիս է: Ա՛յ տղա, էս ի՞նչ բան է: Մտքով էի, մին էլ տեսնեմ ի՞նչ, մի զորք է գալի, մի զորք է գալի, ոնց որ դիամաթ: Զեն տվի, ադա՛, էդ ո՛ւմ զորքն է: Զեն չտվին: Էն է՛ թուրս պլոկեցի, ծիս կրակեցի, ընկա էդ զորքի մեջն ու սկսեցի դամշիլը: Էդպես դամշեցի մի վախտ, մին էլ տեսնեմ մթան մեջ մի ծիավոր ծեն է տալիս. «Սախկալ–Թութան, ջամուշ պատռան, խփի»: Հո իմանալս էր: Որ ծիս չթոցրի՞, չհասա ու սրան հենց էսպես ձեռքով ծիախառն գետին չգարկի... Սա փաթաթվեց սրիս ու մենակ էսքանը գոռաց. «Աման, Քյոռոլլի, բաշիի»: Տո, քու Քյոռոլլու ըսենց ընենցը... Ախպեր ջան, սրան գցեցի ոտքերիս տակ, ըմ, հիմի ոնց

եմ տալի փորին, գլխին, մեջքին... մեջքին, փորին, քթին... շինեցի քյուֆթա... էստեղ լուսնյակը դուրս եկավ: Մտիկ տվի որ՝ Թաջ Նազարն է»:

(Դ.Դեմիրճյան, «Թաջ Նազար»)

2. Գտնեք հնաբանությունները, ցոյց տվեք նրանց գործածության նպատակը:

Ա. եղել է մի հին, մի հաշտ ժողովուրդ՝
 Ծվարած հողում իր շիբլիական,
 Քարից է քամել իր հացը ափուր,
 Քարին է տվել իր ձիրքերը բյուր,
 Մեղմել մռայլը ժայռեղեն իր տան
 Եվ նվիրումով այրվող իր սրտի
 Կանգնել է վեմեր, սյուներ, խոյակներ,
 Եվ քաղաքներն ու շեներն է հիմնել,
 Իր մեսրոպատառ գրերն է երկնել,
 Տաղերգել վասն սիրո ու վարդի,
 Հյուսել իր արդար վիպերգը Դավթի,—
 Եվ միշտ իր հոգով, իր հին վիպերգով՝
 Հանապազօրյա խոսք ու աղոթքով՝
 Ապավինելով ծերմակ իր աստծուն
 Խաղաղություն է երազել անսուտ
 Աշխարհին, իրեն և ամենեցուն...

(Ս. Կապուտիկյան)

Բ. 1. Հախճապակե դստիկոնի վրա՝ գահավորակի մետաքսե բարձերին, թիկն էր տվել երիտասարդ արքան (Ավ Իսահակյան): **2.** Այս անգամ պարսպադռներից տեղավոր թիկնապահներով բակը մտան երկու անձայն հեծյալներ: Մեծը Կամսարականի քեռորդին էր (Ստ. Չորյան): **3.** Ինչ որ մնաց՝ մնացողաց եղավ, խեղճերի ծուխը մարեց (Ա. Սահիկյան): **4.** Չորանում է գիշեր ու տիվ հողը բազմադարյան... Ողջոյն, ջրում կորած ռելսեր, որ ձգվում էք աջ ու ահյակ (Լ. Միրիջանյան): **5.** Հորս հիացմունքը մեծավ մասամբ վաղաժամ է լինում (Վ. Գրիգորյան): **6.** Ինչ իմանար պատանին, որ ծաղկող Հովնանից բացի, Անահիտը ոչ ոքի չէր տեսնում

շրջապատում: Հովնանը նկարում էր ավետարանիչների միօրինակ պատկերները: Մի մռայլ, անծրևոտ առավոտ ծերունի գեղիչն ու Հովնանը վանահոր մոտ տարան ձեռագիրը:

— Լավ ես ծաղկել, խոսք չունեմ, բայց... — վանահայրը մի պահ վարանեց, ասես կշռում էր հետևյալ խոսքը: — Բայց դու լսիր իմ խորհուրդը, որդի, վանք մտիր: Եվ թող աստծու տաճարի ծառան լցվի երկնային շնորհքով, և տերը թող քաղցր նայի նրան: Հովնանը գրչի հետ դուրս եկավ վանքի գավիթը: Կորամեջք ծերունին քայլում էր նրա կողքից և չորացած շուրթերով աղոթք մրմնջում իր հոգու փրկության համար: Ապա զարմանքով կանգ առավ, ինչ-որ կմկմաց և խաչակնքեց...

Այդ ձեռագիր մատյանը ապրեց դարեր շարունակ, իբրև խավար միջնադարում մի անգամ առանց հրաշքի բոցավառված կերոն:

(Վ. Խեչումյան)

Գ. Տիրացու — Ժամանակի նշան է: (Դիտելով ծանծերին) Ո՛վ Նազարե, այս ծանծերը ծանծեր չեն, այլ դյուցազներ: (Ոգևորված և հետզհետե արագ ու մեքենայական) Դյուցազն մի ահավոր տեսա երագիս, աչին՝ սուր, ծախին՝ դրոշ: Հայտնեցավ իբրև հուր երկնային և ջարդեց հազար դյուցազն:

Ողորմությամբ աստուծո, դու ես այդ դյուցազներ: Ո՛վ կատարումն երագիս: Դու կտիրես աշխարհին, Նազարիմս, և թագավորք կդողան քեզանից: (Բաց է անում գիրքը և բակի մեջ շրջան գործելով՝ սկսում է նայել գրքին ու փնթփնթալ) Ահա՛ եկի, գտա, տեսի ու ստուգեցի Տիրոջն օգնականությամբ: Օրն է մեծ, երազն է բարին: Որ և՛ ստուգեմ, և՛ գուշակեմ, և՛ մեկնեմ: Ահավասիկ (համրում է ծանծերը), մեկ, երկու, երեք, չորս, հինգ, այսինքն՝ հազար: Նշանն է ծջգրիտ: (Մոտենալով պատին փռված մի ձերմակ փալասի) Ահավասիկ և՛ գրեմ, և՛ դրոշմեմ ի լուր աշխարհի:

Անհաղթ Նազար քաջ Նազար,

Մին կզարկի, ջարդի հազար:

(Փալասը ցույց տալով օդի մեջ) Նշան աստվածային, բան խորախորհուրդ: Որով և՛ հույս աստված՝ կտիրես աշխարհին:

(Դ. Դեմիրճյան)

3. Տրված նախադասություններում գտեք նորաբանությունները
Ա. 1. Իմ անակնկալ ծննդյան օրից մինչև ակնթարթն այս գուշակեյի քանի եռիլիոն շնչավորներ են եկել-գնացել (*Հ. Սահյան*)
2. Պիտի անցնի, պիտի ձգվի, պիտի գնա հեքիաթային մի գետնուղի (*Լ. Միրիջանյան*): **3.** Մեր գեղասահքի դպրոցը հոյակապ հաղթանակ նվաճեց (մամուլից): **4.** Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր, էլի ես որք ու արնավառ իմ Հայաստան յանրն եմ սիրում (*Ե. Չարենց*): **5.** Կիջնի ահա երեկոն, կբացվեն լույսի շուշանաթերթ լամպերի կոկոնները վառ: (*Գ. Սարյան*)

Բ. Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին Էրեբունի,
 Հին Անիս է վերածնվում բարուրի մեջ Երևանի,
 Վեր կամարվում ժայռաբարուր հազարագեղ գմբեթվելով,
 Մի նոր հայոց հրաշք դառնում՝ մայր Անիին նմանվելով,
 Հազար ու մի եկեղեցիք փոխվում են ձոխ պարտեզների,
 Սուրբ զանգերի ղողանջի պես ժխորն է քյուր հայ մուրձերի...
 Ելնում է նորն հնի ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,
 Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,
 Ասես Մեսրոպ Մաշտոցն ինքն է մոնումենտվում նոր արձանով,
 Վեր գմբեթվում հազարասյուն հազարաձայն Երևանով:

(*Հ. Եփրազ*)

4. Լրագրերի մի քանի համարներից դուրս գրեցեք մարգական կյանքին վերաբերող նորաբանություններ:

5. Գտե՛ք գռեհկաբանություններն ու հասարակաբանությունները և չեզոք կամ վայելուչ համանիշներով փոխարինելով՝ պարզեցե՛ք նրանց ոճական դերը:

1. – Բեզ ո՞վ ասավ բռռաս խանումի մոտ, իշի կտոր: **2.** – Ժողովրդին առաջ գցե՛ք, թող գնա համ կովի, համ էլ հառամզադա զորքի շլինքին տա, մոտս բերի: **3.** Դե հիմի ռա՞ղ եղե՛ք ու էլ զահլա մի տանե՛ք: **4.** Հասկացա՞ք, հայվաններ: **5.** Բնչ կա էլի: Հը՛: Դուրս, հառամզադա: **6.** Չես իմանում, քյավթառ: **7.** Ապա՛մ, գյադա՛մ, մի Հերաթի վեր քաշե՛ք տեսնե՛ք: **8.** Տեսա՞ք դուք փսլնքոտ Նազարին: **9.** Երկու իշի գարի չէր կարում բաժանի: **10.** Դու է՛ն սարսաղներին ասա, թե ոնց են կատու կտրել է՞դ նապաստակի առաջին: **11.** Հա՛մ, մե՛ծ գործի

վրա եք: Բախտավորներ: Հողեմ ձեր անամոթ գլուխը: **12.** Էդ է քո թագավորական ժողովը, համ, քյոփամկ... Խորեմ թագավոր գլուխդ: **13.** Ցիսեմ թագավոր գլուխդ: **14.** Ամոթը ես պիտի ունենամ, թե՛ դու: Կրեմ գլուխդ. (Դ. Դեմիրճյան): **15.** Տո անտեր-մունդոդիկ, բա մի մարդավարի փեշակ չկամ, որ գնացել ջադուբազ կնկա փեշակ էս բռնել: **16.** Տո, թե սատանա ես ուզում, հրեդ տեղն ու տեղդ սատանա ես էլի, որ սուտ-սուտ բաներով խալխին խաբում ես, փողերը ցնցլում, փորդ տոգացնում: **17.** — Համ, մեռել եք, սատկել եք... Այ խլանա՞ք դուք, խլանաք... Վայ ձեր ծնունդը չորանա, ձեր ծնունդը: **18.** Աղջի, բա էդ քոռացած աչքերովդ տեսնում չես, արևը մեր ա մտել: Այ ո՛չ ունենամ քեզ պես հարսը, ո՛չ, չորանաս կաճես էդ տափից, ոնց որ չորացել կպել ես: **19.** Փախել ես, համ, տանից: Զա-ռը-ջհանդամը, թե փախել ես (Նար-Դոս):

6. Գտե՞ք բարբառաբանությունները, ցոյտ տվե՞ք նրանց ոճական դերը: Բարբառաբանությունները գրական հոմանիշներով փոխարինելով դիտեցե՞ք կատարվող իմաստային և ոճական փոփոխությունները:

Ա. Ճանապարհից վերև՝ բլրի լանջին, մեկը ջրում է մուգ կանաչ առվույտը: Ես լսում եմ, թե ինչպես առվի ափագի մեջ զրնգում է նրա ծանր քահը: Իսկ երբ բարձրացնում է քահը, արևը լուսավորում է քահը, ու թվում է, թե ջրվորի ուսին բռնկված ջահ է:

— Սա է Չյանբերդի ճանապարհը...

— Հա,— ասում է,— մըր գուղն ի.. Իդա դար լե շրջվի...— ու գրպանից հանում է ծխախոտի քիսեն:

— Յոնջան քոնն է:

— Վարկայության նախակահ բերեց հերու: Անուշ բուս է: Ինա կուտ (ցորեն) լե մեր է,— գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը:

— Մըր բախտ կապած ենք գդալ ջրի... Մըր հողեր լե ցրվուկ: Էհ, հացի տեղ արյուն շատ կերանք: Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն:

— Ազնո՛ւ, կինո տեսել ես:

— Հաքա օրի չըմ տեսե, շուր մը զարկեր է պատ, կցուցե ծի, աղջիկ, օրիորդ, կարտոֆիլ:

- Ազն՛ո՛, աստված կամ:
- Հաբա: Աստված կանաչ ծնձղուկ է:
- Հապա երկինքը:
- Երկինքը զինջիլով կապուկ է եզան կոտոշին:
- Ազն՛ո՛, որ մեծանաս, ինչ ես դառնալու:
- Կեղնիմ օրիորդ:

— Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ծորերին, մըլ Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդե թու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն: զիմ չորս բուր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ-զուլալ ախպրտոց պես գրկեն զիրար, չեղնի ո՛չ տեր, ո՛չ մշակ, ո՛չ թուր, ո՛չ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ քարծրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մեր քարերու վրեն, մըր Մարութա բանձր սարի ամպ թող լիզա զիմ սիվտակ ոսկորներ:

(Ա. Բակունց, «Ծիրանի փողը»)

Բ. – Մերն էսպես է, տղան, սովոր ենք: Երբ մի անգամ քաղաք էի գնացել ու այրոպլանով Երևան պիտի թռչեի, էդ երկաթե դշի շոֆերն ըսավ. «Հասակով մարդ էս, չես վախենա...»: Խնդալս եկավ, ըսի. «Մանչս, մենք տարին տասվերկու ամիս սամալոթի մեջ ենք, էս անգամ ինչի՞ պիտի վախենամ...»: Չհավատաց, ըսավ. «Մենձ մարդ ես, սուտ ինչի՞ կը խոսես...»: Երդում, կրակ, չհավատաց: Մուխաննաթ Գարսոն էլ հետս էր: Եկավ ու էս պատմութենը գեղի ականջը գցեց. անունս մնաց Սուտ-Սուքիաս, ահա օխտը-ուկը տարի էդ անունով կապրիմ...

- Սուքիաս, ինչո՞ւ ձեն չես հանի...
- Հե՛չ:
- Մեր Պետոյի նամակը կարդըցիր...
- Հա:
- Կարոն թոփչի է, հա՞... Չիինի՞ թե մարդու վնաս տա, վիրավորե կամ սըպանե, հը՞...

— Կրակի մեջ փլավ չեն բաժնե, մահ կբաժնեն էժան գնով, մարդուն՝ մեկ գյուլլա...

— Մի՛ նեղանա, այ՛ մարդ, դորթը չգիտես, գոնե սուտն ըսա, ախր մեր եմ...

(Մ. Սարգսյան)

7. Դպրոցական դասագրքերից դուրս գրեցեք գիտության տվյալ ճյուղին վերաբերող աերմիններ:

8. Գրեցեք շրջապատում և առօրյա խոսքում գործածվող օտարաբանությունների օրինակներ:

9. Գտե՛ք վարչաբանությունները և կադապարային արտահայտությունները, աշխատեցե՛ք ձշտել ոճական սխալները: Ընդգծեցե՛ք տերմինները:

Ա. Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում, ինչպես նաև բուհերի մանկավարժության ու հոգեբանության ամբիոններում աշխատում են 55 գիտությունների թեկնածուներ և դոկտորներ: Նրանք ուսումնասիրություններ են կատարում ժողովրդական կրթության ասպարեզում: Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտը, օրինակ, հաջողությամբ իրականացնում է ուսման նոր ծրագրեր կազմելու գործը... Խ. Աթովյանի անվան մանկավարժական ինստիտուտի նախադպրոցական մանկավարժության ամբիոնը ուսումնասիրություն է կատարում նախադպրոցական հասակի երեխաների բնավորության ձևավորման հարցերի վերաբերյալ: Հետազոտած արդյունքների շուրջ հաճախակի զեկուցումներով հանդես են գալիս հոգեբանության լաբորատորիայի գիտական աշխատողները:

Սակայն այն, ինչ արված է մեզ մոտ մանկավարժական գիտության զարգացման, մեր դպրոցի առջև կանգնած հրատապ հարցերը լուծելու ուղղությամբ, չի կարելի բավարար համարել (մամուլից):

Բ. 1. Հիմա նա իր պարտքը համարեց նշել, որ մեկ տարվա կիսավայրենի կյանքը մեջս սպանել է բաղաձայնակրթության այնքան դժվարությամբ տված դասերը (Վ. Գրիգորյան): 2. Բայց այդ չէր խանգարի, որ շրջանի հաճախական կազմակերպությունները

արժանի անհանգստություն ապրեին: **3.** Դասամիջոցին գրույց ունեցանք մի խումբ սովորողների հետ: **4.** Չգիտես ինչ արժանիքների համար թարգմանվում և հրատարակվում են հայերենում քննություն չբռնած բազմաթիվ գործեր: **5.** Կբարձրանա խաղացողների և ֆիզիկական, և տեխնիկական պատրաստության մակարդակը, որը հնարավորություն կտա կիրառելու խաղի այնպիսի համակարգեր, երբ բոլոր հարձակվողներն ի վիճակի կլինեն անընդհատ վազք կատարելու իրենց դարպասից մինչև հակառակորդի դարպասի գիծը և ընդհակառակը (մամուլից):

Վ. ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐԸ

ԱՌՕՐՅԱ-ԽՈՍԱԿԳԱԿԱՆ ՈՃ

Սա այն ոճն է, որ գործադրվում է ամենօրյա կյանքում, հասարակական-արտադրական հարաբերություններից դուրս՝ ընտանիքում, կենցաղում, փողոցում: Կյանքի այս ոլորտում մարդկանց ունեցած անմիջական հարաբերությունները առօրյա-խոսակցական ոճի խոսքերին հաղորդում են անբռնազբոս, երբեմն մտերմական երանգներ: Դրա պատճառով այդպիսի խոսքերն աչքի են ընկնում քերականական-կառուցվածքային կանոնավորության, արտահայտությունների ավարտվածության և հստակության նկատմամբ եղած որոշ անփութությամբ: Դա բացատրվում է այն բանով, որ ենթադրելով խոսակցի գոյությունը՝ այդպիսի խոսքերը միշտ հնարավորություն են տալիս լրացումներ կատարելու, վերապատմելու կամ վերաբացատրելու միտքը:

Առօրյա-խոսակցական ոճին հատուկ է նաև թերի, անդեմ նախադասությունների, դարձվածքների ու ժողովրդական պատկերավոր արտահայտությունների, հուզարտահայտչական երանգների առատությունը:

Առօրյա-խոսակցական ոճը դրսևորվում է գլխավորապես առօրյա-կենցաղային թեմաներով երկխոսություններում:

«... Դռան շեմին երևաց կինը՝ մաշված դեղին չուստերը ոտներին և ծծի մանուկը գրկին:

— Շիր, ես էլ եկա, ինչ ես ասում,— ասաց նա համարձակորեն:

— Ինչ եմ ուզում,— ասաց Հոպոպը, մոտեցավ, բռնեց կնոջ ձեռքից, ներս քաշեց և սպառնական դիրք բռնեց նրա առջև:— Որտեղ էիր:

— Բագրատանց տանը,— պատասխանեց կինը:

— Ինչ էիր շինում ընտեղ:

— Ինչ պիտի շինեի: Լվացք ունեն անելու, կանչել էին, որ էգուց գնամ լվանամ:

— Լվացք... Լվացք... ես քու... Անտեր մունդո՞րկ ես մնացել, քաղցած տկլո՞ր ես մնացել, որ ուրիշների համար լվացք ես անում: Հա՛մ: Բա ես չկամ, բա իմ գլուխը շներն ու գելերն են կերել: Հա՛մ: Տո իմ կնիկն ինչի պիտի ուրիշի լվացքն անի, հը: Տո Բագրատը ո՞ւմ շունն

ա, որ իմ կնիկը գնա նրա համար լվացք անի, հը: Տո ինչ լվացք, ինչ դես, ինչ դեն, հմ ես ուզում խաբիլ, հազիր ասես... գնացել էիր նրա հետ շնություն անելու... հը, սուտ ամ... էլի կասես սուտ ամ...»:

(Նար-Պոս, «Նպոպ»)

Այս հատվածում խոսակցական երանգ ունեցող բառերի և քերականական ձևերի հետ զգալի թիվ են կազմում նաև բարբառային բառերը:

Իսկ հետևյալ օրինակում ծերունու խոսքում Հ. Թումանյանն արտահայտել է առօրյա-խոսակցական ոճի լեզվամտածողական առանձնահատկությունը:

Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վրդովված տղերանց միջին,
Մատը դեպի ծոր մեկնելով հանդարտ՝
Էսպես նա պատմեց՝ զոռ տալով չիբխին.
— Էս գիշեր, կեսը կըլներ գիշերվա,
Դեռ չէի կըպցրել աչքս տեղի մեջ.
Քունս էլ է կորել, ջանս էլ էն վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...
Հա՛, հալալ կեսը կըլներ գիշերվա,
Ծունը վեր կացավ էս կըռան վրա.
Հեյ-հեյ, կանչեցի, ծեն տըվող չելավ.
Ծունը գազազեց, շունը վեր կալավ...
Հեյ գիդի, ասի ինքըս իմ միջում,
Ինչ է մընացել առաջվան տըղից.
Քընում էի վաղ մենակ արխաջում,
Սի ծեն լըսելիս վեր թըռչում տեղից...
Էն էի ասում, քընել չէի դեռ.
Կըլիներ դառը գիշերվան կեսը,
Երկու մարդկային սև կերպարանքներ
Շան առջև փախած՝ ցած իջան դեսը...

(Հ. Թումանյան, «Անուշ»)

ԳԻՏԱԿԱՆ ՈՃ

Գիտական ոճը գործադրվում է գիտական աշխատանքի ոլորտում:

Գիտական ոճի խոսքերը հիմնականում հաղորդման բնույթ ունեն: Այս ոճի բնորոշ հատկանիշներն են.

1. խոսքի, արտահայտության ճշգրտություն,
2. տրամաբանական հասկացությունների և դատողությունների օգտագործում,
3. փաստերի ցուցադրման և ապացուցման մեթոդների լայն կիրառություն,
4. խոսողի ընդգծված անձնական վերաբերմունքի արտահայտումից խուսափել,
5. բառերի գործածություն իրենց ուղղակի նշանակությամբ,
6. տերմինների և մասնագիտական բառերի լայն գործածություն,
7. շարահյուսական բարդ կառույցների, մասնավորապես բարդ, տարաստիժան ստորադասություններ, թվարկումներ, միջանկյումներ պարունակող նախադասությունների գործածություն,
8. բառապաշարային և քերականական հարցերում հակում դեպի գրքային երանգ ունեցող լեզվական միավորները,
9. բանավոր գիտական խոսքում արտասանության հռետորական ոճի գործածություն,
10. խոսքի պատկերավորման և հուզարտահայտչական միջոցների նվազ գործածություն:

Տեղեկույթը (ինֆորմացիան) ճշգրիտ և միանշանակ հաղորդելու նպատակով գիտական ոճը փաստերը ներկայացնում և ասելիքը շարադրում է տրամաբանական հաջորդականությամբ, խուսափում է տերմինային համանիշությունից:

Երբ ասում ենք, թե պատկերավորությունը և արտահայտչականությունը հատուկ չեն գիտական խոսքին, դա չի նշանակում, թե նրանք այս ոճում իսպառ բացակայում են: Առանձին հեղինակներ երբեմն դիմում են նման միջոցների՝ դրանով ստեղծելով իրենց յուրահատուկ անհատական ոճը գիտականի ներսում:

Գիտական ոճի ենթաոճերն են՝ *բուն գիտական* կամ *ակադեմիական*, *գիտաուսումնական*, *գիտահանրամատչելի*:

Բուն գիտական (ակադեմիական) ենթաոճը գործադրվում է խիստ գիտական շարադրանքի մեջ, որը նախատեսված է գիտության տվյալ ճյուղի մասնագետի համար (մենագրություն, ատենախոսություն, գիտական զեկուցում, հոդված մասնագիտական ամսագրերում ու ժողովածուներում):

Գիտաուսումնական ենթաոճը գործադրվում է ուսումնական բնույթի աշխատություններում (դասագիրք, ուսումնական ձեռնարկ, ուսումնական դասախոսություն):

Գիտահանրամատչելի ենթաոճը գործադրվում է ոչ մասնագետների համար նախատեսված աշխատություններում (գիտահանրամատչելի գիրք, հոդված, դասախոսություն, օրինակ՝ «Հանրամատչելի հայոց լեզու» (Հ. Հարությունյան) աշխատությունը):

Վարժություններ

Համեմատեցեք ստորև բերված տեքստերը և աշխատեցեք կռահել, թե գիտական որ ենթաոճով են գրված:

Ա. «Սրտամկանի ինֆարկտն առաջանում է կորոնար զարկերակի որևէ ճյուղի լուսանցքի կամ խցտման, կամ արտահայտված և տևական սպազմի հետևանքով, երբ սրտամկանի տվյալ տեղամասում դադարում է արյան շրջանառությունը, և զարգանում է նեկրոտիկ պրոցես: Կլինիկորեն սրտամկանի ինֆարկտն արտահայտվում է որպես յուրահատուկ ձևի ծանր ստենոկարդիա»:

Բ. «Լեղապարկը, ուր հավաքվում է լյարդում առաջացած լեղին, օժտված է նրբահյուս նյարդամկանային մեխանիզմով, որը կարգավորում է լեղիի մուտքը աղիները:

Քիչ շարժվող մարդկանց լեղապարկի գործունեությունը խանգարվում է, լեղին երկար ժամանակ կանգնած է մնում, առաջանում է բորբոքում, և աստիճանաբար քարեր են գոյանում: Լեղապարկի քարերը լյարդի ծակոցներ են առաջացնում այն դեպքում, երբ քարն սկսում է անցնել լեղատար ուղիներով: Մինչև կես սանտիմետր մեծություն ունեցող քարերը կարող են առանց ցավ պատճառելու անցնել տասներկումատնյա աղին:

Լեղապարկում քարերի գոյացման պատճառ կարող են դառնալ լյարդի հիվանդությունները: Եթե մարդն առողջ է, լյարդում

առաջացող լեղաթթուների շնորհիվ խոլեստերինը լեղապարկում մնում է լուծված:

Իսկ երբ լյարդը հիվանդ է, լեղաթթուների քանակը նվազում է, որից խոլեստերինը կարող է նստվածք տալ:

Քարեր կարող են առաջանալ նաև նյութափոխանակության խանգարման հետևանքով, հատկապես, երբ մարդ չարաշահում է յուղոտ կերակրատեսակները և քաղցրավենիքը:

Գ. «Եթե բարբառագիտական քարտեզը ներկայացնում է բարբառների տարածման բնական պատկերի մոդելը, ապա բարբառավիճակագրական աղյուսակը քարտեզի մոդելն է, այսինքն՝ մոդելի մոդել: Այլ կերպ ասած՝ աղյուսակի իդեալը քարտեզն է, քարտեզինը՝ օբյեկտը: Աղյուսակները գիջում են քարտեզներին նրանով, որ վերջիններին վրա գուգաբանական գծերը գնում են տարբեր ուղղություններով՝ ընդօրինակելով բարբառային երևույթների աշխարհագրական տարածման իրական պատկերը, մինչդեռ աղյուսակներում բարբառային երևույթների նշանակումը հնարավոր է մեկ ուղղությամբ, մեր աղյուսակներում՝ ձախից աջ»:

(Գ.Բ. Ջահուկյան, «Հայ բարբառագիտության ներածություն»)

Դ. «Թե՛ աքսիոմատիկ մեթոդը և թե՛ մաթեմատիկական օբյեկտների ձևականացումը նոր երևույթ չեն մաթեմատիկայում: Աքսիոմատիկ մեթոդը կիրառվել է դեռևս էվկլիդեսի կողմից և զարգացվել է ոչ էվկլիդեսյան երկրաչափության ստեղծման շնորհիվ: Դեռևս Վիետը, ներմուծելով տառային նշանակումները, դրանով ձևականացրեց քանակական մեծության գաղափարը, իհարկե, բովանդակային թողնելով այդ մեծությունների միջև կատարվող գործողությունները: Սակայն Հիլբերտը պահանջում է մաթեմատիկայի լրիվ ձևականացում՝ այնպես, որ սոսկ նշանների վերածվեն ոչ միայն քանակական մեծությունները, այլև նրանց միջև եղած տրամաբանական գործողությունները»:

(Ս. Ավետիսյան, «Մաթեմատիկական տրամաբանության հիմնական տարրերը»)

Ե. «Մերսեդես-Բենց» ֆիրման ներկայումս հետազոտություններ է կատարում ապագայի ավտոմեքենա ստեղծելու ուղղությամբ: Այսպես՝ վառոցքի բանալու փոխարեն կօգտագործվի մագնիսական քարտ: Ծարժիչը ընթացքի կգցվի սեղմակոճակի միջոցով: Ավտոմեքենան չի ունենա ղեկ, ոտնակներ և հետին տեսադաշտի հայելի: Ղեկին կփոխարինի այնպիսի մի հարմարանք, որն օգտագործում են կոմպյուտերային խաղերի ժամանակ (ջոյստիկ): Վարորդին անհրաժեշտ է միայն այն թեքել աջ կամ ծախ, որպեսզի ավտոմեքենան շարժվի համապատասխան կողմը: Արգելակելու համար վարորդը պետք է հարմարանքը ձգի դեպի իրեն, արագությունը մեծացնելու համար՝ հակառակ կողմը:

Տեսախցիկը և մոնիտորը ցույց կտան, թե ինչ է կատարվում մեքենայի հետևում՝ ծանապարհի վրա:

Այսպիսին է ապագայի F200 ավտոմեքենան, որը Փարիզի միջազգային ավտոցուցահանդեսի «աստղն» էր: Մեխանիկական և հիդրավլիկական միացումներից հրաժարվելը նոր հնարավորություններ է ստեղծում դիզայնի, անվտանգության, հարմարավետության մեծացման և ինքնարժեքի իջեցման համար:

2. Երբևիցե որևէ մեկի մտքով անցնել է, թե ինչպես են առաջացել ԴՌ, ՌԵ, ՄԻ, ՖԱ, ՍՈԼ, ԼՅԱ և ՍԻ երաժշտական նոտաների անվանումները:

Բանից պարզվում է, որ այդ անվանումների «կնքահայրը» եղել է բենեդիկտյան վանական Գվիդո դը Արեցցոն (XI դար), որը միաժամանակ տվել է ծայների հաջորդական բարձրության գծերի համակարգը: Հետաքրքիրն այն է, որ երաժշտասեր վանականը, փաստորեն, ոչինչ չի հնարել, այլ օգտվել է լատինական աղոթքներից, որով այն ժամանակվա երգիչները խնդրում էին սուրբ Հովհաննես (Իոաննես) Սկրտչից՝ պահպանելու իրենց ծայնը: Այն հնչում է այսպես.

ՌԻՏ կվեանտ լակսիս

Ռեցիտարե ֆիքրիս

Միրա գեստորում,

ՖԱմուլի տուտրում

ՍՈԼվե պոսյուտի

ԼԱՔԻԻ ռեառում,
Սանկտե Իոաննես:

Այս տողերի բառացի թարգմանությունը նման է գլուխկոտրուկի, քանի որ հիմնական տեքստը լի է բմահաճ շարադրանքով:

Բառերի շեշտված առաջին վանկերն էլ դարձան նոտաների անվանումները՝ սկսած ՌԻՏ-ից մինչև ԼՅԱ:

Համակարգին անցնելու կապակցությամբ նոտային այբուբենում ՍԻ-ն ևս գրավեց իր արժանվույն տեղը: Այդ նույն ժամանակ ի հայտ եկավ և ՌԻՏ նոտային փոխարինող նոր՝ ԴՈ անվանումը: Ենթադրվում է, որ այն առաջարկել է ֆլորենտացի երաժիշտ Ջ. Դոնին՝ օգտագործելով իր ազգանվան առաջին վանկը:

(«Գիտություն և տեխնիկա»)

Է. Նախադասություն կազմող բառերի դասավորությունը կոչվում է շարադասություն:

Միտքը ճիշտ ձևակերպելու կարևոր միջոց է ճիշտ շարադասությունը՝ նախադասություն կազմող բառերի ճիշտ դասավորությունը:

Դիտել բառերի շարադասությունը հետևյալ նախադասության մեջ:

(Ս. Գ. Աբրահամյան, «Հայոց լեզու»

դասագիրք VII-VIII դասարանների համար)

Ը. Գիրք, տառ, պատուհան, ականջ, առու բառեր են: Բառերը կազմված են զանազան հնչյունների կապակցություններից՝ հնչյունախմբերից:

Ամեն մի բառ ունի իր իմաստը. առանց իմաստի բառ չկա: Բառերը խոսքի մեջ գործածվում են ինքնուրույն, անկախ կերպով, այսինքն՝ նախադասության անդամ են լինում:

(Է. Բ. Աղայան, Հ. Ն. Բարսեղյան, «Հայոց լեզու»: Հանրակրթական դպրոցի 4-րդ դասարանի դասագիրք)

Թ. Ձեռքում պահելով մի ծու՝ դուք հարվածում եք նրան մյուսով: Երկու ձվերն էլ միատեսակ ամուր են և բախվում են միևնույն մասերով: Նրանցից հորը պետք է ջարդվի՝ հարվածվողը, թե՛ հուսով...

Այդ հարցը մի քանի տարի առաջ դրել է «Գիտություն և գյուտեր» ամսագիրը: Ամսագիրը պնդում էր, որ փորձի համաձայն ավելի հաճախ ջարդվում է այն ծուն, որը շարժվում է, այլ կերպ ասած՝ հարվածող ծուն:

Դատողությամբ պարզել, թե ծվերից որը պետք է ջարդվի, առհասարակ հնարավոր չէ, որովհետև հարվածող և հարվածվող ծվերի միջև տարբերություն չկա: Չի կարելի հիմնվել այն բանի վրա, որ հարվածող ծուն շարժման մեջ է, իսկ հարվածվողը՝ անշարժ: Անշարժ է ինչի՞ նկատմամբ: Եթե երկրագնդի նկատմամբ, ապա հայտնի է, որ մեր մոլորակն ինքն էլ է տեղաշարժվում աստղերի միջև: Ուստի չի կարելի ասել, թե ծվերից որն է ավելի արագ շարժվում աստղերի միջև:

Ծվերի վերաբերյալ հասարակ խնդիրը, ինչպես տեսնում ենք, մեզ տարավ տիեզերքի անհունությունը, և եթե չլուծվեց ծվերի ջարդման հարցը, ապա մեզ օգնեց հասկանալու այն կարևոր ճշմարտությունը, որ մի մարմնի շարժումը, առանց նշելու մյուս մարմինը, որի նկատմամբ դիտվում է շարժումը, ուղղակի անմտություն է:

(Յա. Ի. Պերելման, «Հետաքրքրաշարժ մեխանիկա»)

Ժ. Զրավազանները զբաղեցնում են երկրագնդի մակերեսի 2/3 մասը: Զուրը սերտորեն կապված է երկրի թաղանթի հետ: Առանց ջրի մեր մոլորակը զուրկ կլիներ կենդանական և բուսական աշխարհից: Հիրավի, ջուրը «կյանքի էլիքսիրն» է, որ կենդանություն է տալիս մեր մոլորակին:

Ինչպես օդը, այնպես էլ ջուրը պարունակում են թթվածին ու ազոտ: Զուրը կենդանի օրգանիզմների բաղկացուցիչ մասն է և մասնակցում է կենսական կարևորագույն պրոցեսներին:

(Ա.Հ. Չիլինգարյան, «Մարդը և բնությունը»)

ՎԱՐՉԱԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՈՃ

Վարչագործարարական կամ ուղղակի վարչական ոճի խոսքերի առանձնահատկությունները պայմանավորված են պաշտոնական հարաբերություններով, որոնք գոյություն ունեն խոսողի և խոսակցի միջև: Ընդ որում, խոսողության մասնակիցներից մեկը՝ կամ խոսողը, կամ խոսակիցը, հանդես է գալիս ոչ թե իբրև մասնավոր անձ, այլ պետության, պաշտոնական շրջանների ներկայացուցիչ:

Վարչական ոճի գործառության շրջանակները բավական լայն են՝ պետական-պաշտոնական, գրասենյակային, օրենսդրական, իրավաբանական, դիվանագիտական ոլորտներ:

Վարչական ոճը փաստորեն փաստաթղթային խոսքի ոճ է. նրանով խոսում են գրավոր:

Վարչական ոճի հիմնական հատկանիշներն են.

հատուկ բառապաշարի՝ **վարչաբանությունների** օգտագործում, բառերն ուղղակի իմաստով գործածելը և փոխաբերության բացառելը,

- ուղղակի բայերի փոխարեն նրանց հարադրական ձևերի օգտագործումը (*կատարել* – *ի կատար ածել*, *բերել* – *բերման ենթարկել*, *մասնակցել* – *մասնակցություն ունենալ*, *խոսել* – *ելույթ ունենալ*, *նկատել* – *նկատի առնել*, *նկատի ունենալ* և այլն), բայանուն գոյականների օգտագործում բայերի փոխարեն (*գործածել* – *գործածություն, գործածում*, *լուծել* – *լուծում, առարկել* – *առարկում, առարկություն*):
- գրաբարյան և աշխարհաբարի նախդրավոր կապակցությունների գործածություն (*ի գիտություն, ի ղեկավարումն, ի տնօրինություն, ի փառս, համաձայն որի, ի լուրմն, ի նշանավորումն*),
- դերբայական դարձվածների լայն գործածություն,
- քերականական կանոնավուն ձևերի գործածում և խոսակցական երանգ ունեցող ձևերից խուսափում,
- խոսքի կանոնակարգված ուղղակի շարադասություն,
- խոսողի անձնական վերաբերմունքն արտահայտող և պատկերավոր լեզվական միավորների բացակայություն:

Վարչական ոճն ունի հետևյալ ենթատեսակները կամ ենթաոճերը՝ *օրենսդրական, դիվանագիտական, դատաքննչական, գրասենյակային*:

Օրենսդրական ենթաոճի գործառության բնագավառը օրենսդրությունն է (սահմանադրություն, օրենք, օրենսգիրք, կառավարական որոշումներ):

Դիվանագիտական ենթաոճի գործառության շրջանակը միջպետական հարաբերություններն են, երբ մի պետություն «խոսում է» մեկ այլ պետության հետ (միջպետական պայմանագիր, համաձայնագիր, նոտա, հուշագիր, վերջնագիր (ուլտիմատում) հայտարարություն (դեկլարացիա), կոմյունիկե և այլն):

Դատաբնիչական ենթաոճի գործառության շրջանակներն են իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատախազություն, դատարան) աշխատանքի ոլորտը (ոստիկանական արձանագրություն, մեղադրական եզրակացություն, փաստաբանական ծառ, քրեական, քաղաքացիական օրենսգրքեր, դատավարական օրենսգիրք և այլն):

Գրասենյակային ենթաոճը գործադրվում է գրասենյակային գրագրություններում (դիմում, տեղեկանք, ստորագրություն, արձանագրություն, ակտ, լիազորագիր և այլն):

Վարժություններ

1. Բերված տեքստում ցույց տվեք վարչական ոճին բնորոշ իրողությունները:

Պայմանավորվող Բարձր Կողմերը հայտարարում են, որ երկու երկրների և իրենց ժողովուրդների միջև գոյություն կունենա անխախտ բարեկամություն և կզարգանա բազմակողմանի համագործակցությունը քաղաքական, տնտեսական, առևտրական, գիտատեխնիկական, մշակութային և մյուս բնագավառներում՝ պետական ինքնիշխանության, տարածքային ամբողջականության հարգման և միմյանց ներքին գործերին չմիջամտելու հիման վրա...

Պայմանավորվող Բարձր Կողմերը, հետևողականորեն վարելով տարբեր հասարակարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցության քաղաքականություն, իրենց խաղաղասեր քաղաքականությանը համապատասխան, այսուհետև ևս հանդես կգան հանուն ամբողջ աշխարհի խաղաղության, միջազգային լարվածության թուլացման, ընդհանուր և լրիվ զինաթափման, որը արդյունավետ վերահսկողության ներքո ընդգրկի ինչպես միջուկային, այնպես էլ սովորական սպառազինությունները...

Սույն պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման օրվանից...

(մամուլից)

2. Հր. Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը» վիպակի հետևյալ հատվածում նշեցե՞ք լեզվական այն տարրերը, որ հատուկ են դատաքննչական գրագրություններին:

Միլիցիան դուրս եկավ կենտրոնից, գնաց, փնտրեց ու գտավ Գետամեջ գյուղը: Գետամեջ գյուղում հետախուզությամբ գտավ Ռևազ Մովսիսյանի տունը, գոմը, գոմի դուռը: Ռևազի (կարծեցյալ կորստատեր Ռևազ Մովսիսյանը կտրականապես հայտարարեց, որ ինքը լավ չի հիշում, թե իրենք երբևէ ունեցել են ոչխարներ) և մանավանդ նրա կնոջ մանրակրկիտ հարցաքննությամբ պարզեց, որ երկու օր առաջ (ս.թ. օգոստոսի 24-ին՝ երեկոյան ժամը հինգի մոտերքը՝ ոչ շուտ չորսն անց երեսունից, ոչ ուշ հինգն անց երեսունից) կորել են Գետամեջ գյուղի բնակիչ քաղաքացի Ռևազ Գևորգի՝ Մովսիսյանի չորս ոչխարները, երկուսը՝ չորս տարեկան, մեկը՝ երեք, մեկը՝ երկու. երկուսը՝ սպիտակ, երկուսը՝ սև, տեղական տեսակին պատկանող. մեկը՝ մեկ տարեկանը՝ խրտուռոկ, երեքը՝ հանգիստ բնավորության պատկանող (առաջինի պատճառով էլ, հաշվի առնելով կորստատիրուհի Թագուհի, հորենական ազգանվամբ՝ Կարապետյանի կարծիքը, վերոհիշյալ չորս ոչխարները հեռացել են տիրոջական դռնից):

3. Համեմատեցե՞ք, թե միևնույն դեպքը ինչպես է նկարագրված գեղարվեստական խոսքում և քննիչի արձանագրության մեջ, նշեցե՞ք վարչական ոճին հատուկ բառերը, արտահայտություններն ու խոսքի կառուցման ձևերը:

Իշխանը նստեց քարին: Վայրկենական մի ենթագիտակցությամբ միլիցիոնները ենթադրեց, որ այդ նստելը «կանգնիր» հրամանի կատարումն է: Դրանից հետո անելիքդ պարզ է. մոտ ես վազում, ձեռքը ոլորում և տանում քաղմաս՝ քաղաքում: Իսկ սարերում. հրահանգների մեջ ինչ-որ մի կետ պակաս է: Այդ կետը հպարտությամբ գրեց միլիցիոնները՝ բռնվածին տանելով կրակի մոտ՝ նախկին տեղը: Բայց այդտեղ եղավ մի այնպիսի բան, որ կուզես լեյտենանտ եղիր, կուզես

ենթագիտակցություն եղիր, կուզես մայոր եղիր՝ գլուխ չես հանի. մի-լիցիոնների գլխարկը գլորվեց: Գլխարկը կտր էր, մեջը պողպատալարե օղակ կար, և լանջը թեք էր, իսկական գլխարկ գլորելու տեղ: Գլխարկը գլորվեց, գնաց, ցատկոտեց և քարի գլխից թռավ:

(Հր. Մաթևոսյան, «Մենք ենք, մեր սարերը»)

4. Բերեք գործնական գրությունների օրինակներ:

5. Որոշեցե՛ք, թե գործառական ինչ ոճի տեքստեր են բերված ստորև:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ

ՀՀ Ազգային ժողովի նախագահը փետրվարի 10-ին ընդունեց Հայաստանում Ուկրաինայի արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոյին: Դեսպանը փոխանցեց Գերագույն ռադայի նախագահ Ալեքսանդր Մորոզի շնորհավորական ուղերձը: Ուկրաինայի խորհրդարանի նախագահն իր ուղերձում համոզմունք է հայտնել, որ երկու պետությունների օրենսդիր մարմինների ջանքերն առաջիկայում ևս կնպաստեն հայ-ուկրաինական համագործակցության խորացմանը:

(«Հայաստանի Հանրապետություն»)

Սոսը՝ վարպետ Սոսը, արդեն յոթանասունչորս տարեկան է: Դեռ փոքրուց է նա ծեռքերը, ամբողջ մարմինը, հենց միտքը վարժեցրել աշխատանքի: Աչքը բացել ու հորը ոչ միայն օգնական, այլև թև ու թիկունք է դարձել: Եվ գործ անալու ժամանակ մի երգ, մի հնչյուն միշտ այցի է եկել: Երգը տրամադրություն է հաղորդել գործին: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո չի էլ մտածել ընդունվելու մասին, ոչ էլ ցանկացել է արհեստ սովորել, որովհետև արդեն արհեստավոր էր: Զեռքից ամեն բան գալիս էր: Պատերազմ սկսվեց: Առանց դես-դենի կամավոր ներկայացավ:

Հինգ տարի հետո եկավ և կանգնեց հոր թիկունքին: Ասես ո՛չ բանակ էր գնացել, ո՛չ վիրավորվել էր, ո՛չ շքանշաններ ու պարգևներ ստացել:

(«Հայաստանի Հանրապետություն»)

ԽՈՐՏԱԿՎՈՂ ՊԱՏՐԱՆՔՆԵՐ

Աշխարհում վերջին ամիսներին տեղի ունեցող իրադարձությունները ցույց են տալիս, որ ժողովրդավարական արժեքները, մարդու իրավունքներն ու ազատությունները, միջազգային իրավունքի նորմերն ընդամենը պատրանք են, որով աշխարհը խաբում է իրեն: Ինչպես և 100 և 1000 տարի առաջ, վերստին ուժն է ստանում իրավունք: Դեմոկրատական Ամերիկյան պատրաստվում է ռմբակոծելու Իրաքը և նույնիսկ օր է նշանակել, չնայած այդ երկիրը պատրաստ է զիջումների գնալ: ԱՄՆ-ին բոլորովին չի էլ հետաքրքրում, որ մնացած խոշոր երկրները դեմ են ռմբակոծություններին, որ դրանց դեմ է նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: Ամերիկացիներին Անվտանգության խորհրդի խորհուրդերը պետք չեն:

Ամբողջ հարցն այն է, որ եթե Իրաքի ռմբակոծությունը տեղի չենա, ապա ԱՄՆ-ին ոչ ոք ագրեսոր չի անվանի և նրա դեմ, նականաբար, ոչ քաղաքական, ոչ տնտեսական պատժամիջոց չի իրադի: Ամերիկյան ինքն է որոշում, թե ով է ագրեսորը, և ինքն է լատժամիջոցներ սահմանում:

(«Առավոտ»)

ՏԵՂԵԿԱԼՔ

Տրվում է Դերենիկ Դեմիրճյանին առ այն, որ նա ջութակահար է, և նրան թույլատրվում է իր ջութակը իր հետ տանելու արտասահման:

Պետիրատի գեղարվեստական

բաժնի վարիչ

Ե. Չարենց

(ՀՀ գրականության և արվեստի թանգարան,

Դ. Դեմիրճյանի ֆոնդ)

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ Աղավնի Արշակի Գրիգորյանս, լիազորում եմ իմ համադասարանցի Աստղիկ Աշոտի Արամյանին դպրոցի գրադարանից ստանալու 10-րդ դասարանի դասագրքերի համախումբը՝ նկատի ունենալով իմ հիվանդության պարագան:

Լիազորող՝ Ա. Գրիգորյան
(ամսաթիվ)

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՈՃ

Հրապարակախոսական ոճի կամ պարզապես հրապարակախոսության գործառության ոլորտը հասարակական-քաղաքական հարաբերություններն են: Այս ոճը գործադրվում է հիմնականում զանգվածային լրատվության միջոցներում (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն) և հասարակական-քաղաքական բնույթի գրականության մեջ:

Հրապարակախոսական ոճը կարող է գործադրվել երկու ձևով՝ գրավոր և բանավոր:

Հրապարակախոսություն տերմինը հարմար է այս ոճի բանավոր տարատեսակի համար: Գրավորի համար երբեմն օգտագործում են **հրապարակագրություն** տերմինը:

Հրապարակախոսության այս երկու տեսակներն ունեն իրենց լեզվաքերականական և արտալեզվական առանձնահատկությունները:

Առօրյա կյանքում առավել հաճախ շփվում ենք բանավոր հրապարակախոսության հետ, երբ մասնակցում ենք հանրահավաքների, ժողովների, պաշտոնական հավաքույթների, հորեկյանական և մեծարման երեկոների, դատավարությունների և այլն:

Գրավոր հրապարակախոսությունը մամուլի խոսքի ոճն է: Այդ ոճով են ստեղծվում թերթերում, ամսագրերում տպագրվող հոդվածները, ռադիոհեռուստատեսային հաղորդումները:

Հրապարակային խոսքը հատուկ կարևորություն ունի հատկապես այն դեպքերում, երբ խոսողը գործ ունի ընդարձակ լսարանի հետ, առկա է զանգվածային հաղորդակցման անհրաժեշտությունը:

Հրապարակախոսական ոճով են ստեղծվում դասախոսությունը, զեկուցումը, ճառը և ելույթը:

Ձեկուցումը կարող է լինել հանդիսավոր, գործնական, հաշվետու և գիտական:

Հանդիսավոր զեկուցումը կարդացվում է որևէ կարևոր իրադարձության, տարեդարձի, տոնակատարության ժամանակ:

Գործնական զեկուցումը կարդացվում է սովորաբար հասարակական կոլեկտիվներում ու կազմակերպություններում որևէ գործնական հարցի շուրջ:

Հաշվետու զեկուցումը կարդացվում է սովորաբար որևէ հիմնարկի, կազմակերպության, ընկերության ղեկավարի կամ պատասխանատու անձի կողմից:

Նրա մեջ խոսվում է գործունեության ընդհանուր արդյունքների մասին:

Գիտական զեկուցումը կարդացվում է գիտաժողովներում, գիտական հավաքներում և հանդիպումներում:

Գիտական զեկուցման մեջ խոսվում է այս կամ այն հարցի լուծման, փորձերի, գյտտերի և հայտնագործությունների, գիտական նորույթների և նվաճումների մասին:

Ճառերը և ելույթները կարող են տեղի ունենալ ժողովներում, նիստերում, միտինգներում, քաղաքական հավաքույթներում, դատարաններում: Ճառերը սովորաբար նվիրված են լինում առօրյա հրատապ հարցերին, և այստեղ է, որ պահանջվում է գործի դնել ճարտասանական ողջ հմտությունը, լսարանի վրա ազդելու, մարդկանց համոզելու, նրանց այս կամ այն նպատակին ուղղելու համար:

Գրավոր հրապարակախոսությունը հաճախ կոչվում է մամուլի ոճ, քանի որ նրա գործառության գլխավոր ոլորտը զանգվածային լրատվամիջոցներն են (մամուլ, ռադիո, հեռուստատեսություն):

Վարժություններ

1. Նշեցե՛ք այն հատկանիշները, որոնցով հրապարակախոսական ոճը նմանվում է գեղարվեստականին, միաժամանակ ցոյց տվե՛ք, թե ինչով է տարբերվում նրանից:

Որքան էլ հալածեն մեզ, որքան էլ ատեն ու զրպարտեն մեր հասցեին, մեր համոզմունքների համար մղվող պայքարի մեր դրոշը, մեր գաղափարների ու մեր կարգախոսների քարոզումը մենք չենք դադարեցնի:

Ընդհակառակը, որքան հակառակորդներն ավելի ջանան խաբել լայն զանգվածներին և խեղաթուրել մեր պահանջների իմաստը, այնքան ավելի մեծ եռանդով կպարզաբանենք մեր իսկական նպատակները: ...Մենք կապենք ողջ սարսափը, կընդունենք այն բոլոր հարվածները, որ վիճակված են մեզ, այն կատարյալ վստահությամբ, որ ժողովուրդը կձանաչի մեր կատարյալ իրավացիությունը, վաղը կգա այն ուղիով, որ մենք ենք ցույց տալիս:

(մամուլից)

2. Բերեք հրապարակախոսական ոճի օրինակներ մամուլի տարբեր ժանրերից (առաջնորդող, ռեպորտաժ, հաղորդում, հոդված, գրախոսություն):

3. Ուսումնասիրեցե՛ք որևէ լրագրի մի քանի համարների վերնագրերը, դիտեցե՛ք, թե լեզվական ինչպիսի դրսևորումներ ունեն դրանք:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ

Գեղարվեստական ոճը դրսևորվում է գեղարվեստական գրականության մեջ: Այդ ոճով են գրվում բոլոր գեղարվեստական երկերը (վեպ, վիպակ, պոեմ, բանաստեղծություն, պատմվածք, պիես):

Ինչպես հայտնի է, գեղարվեստական գրականությունն ունի երեք սեռ՝ *արձակ, չափածո, դրամատիկական*: Այդ պատճառով իր ընդհանրությամբ հանդերձ այս երեք սեռերի ստեղծագործություններում գեղարվեստական ոճն ունի իրացման որոշ առանձնահատկություններ, որոնք դրսևորվում են որպես *արձակ, չափածո* և *դրամատիկական* ենթաոճեր:

Գեղարվեստական ոճի լեզուն կանոնավոր է, մշակված, բայց գործող անձանց խոսքերում հանդիպում են բարբառային, օտարաբան և այլ ոճերի տարրեր:

Բայց դրանից, գեղարվեստական ոճը չի դադարում գոյություն ունենալուց: Հիշյալ տարրերն օգտագործվում են ոճավորման նպատակով՝ գործող անձանց խոսքի անհատականացման և տիպականացման համար:

Ոճավորում կոչվում է պատումը սոցիալական կամ հասարակական այս կամ այն խավի, անձնավորության կամ պատմական դարաշրջանի լեզվամտածողության տեսանկյունից վարելը, պատմողի խոսքը նրանց խոսքին նմանեցնելը նրանց հատուկ լեզվական տարրերի օգտագործման միջոցով:

Ոճավորում կատարվում է տարբեր նպատակներով և ունի մի քանի տարատեսակներ. *սոցիալական, տեղական, պատմական, անհատական*:

Սոցիալական ոճավորման նպատակն է վերարտադրել սոցիալական այս կամ այն խավի լեզվամտածողությունը: Ահա թե ինչպես են խոսում թագավորը Հ. Թումանյանի «Մի կաթիլ մեղրը» լեզենդում.

– Հայտնի լինի մեր տերության,
 Զինվոր, բանվոր, ազնվական–
 Ամեն շարքին
 Ու աշխարհքին,
 Որ անօրեն ու դավաճան
 Մեր դրացի ազգը դաժան,
 Երբ մենք քնած էինք սիրով,
 Մեր սահմանը մըտավ զոռով
 Ու կոտորեց սուրը ձեռին
 Մեր սիրելի զավակներին:
 Արդ, սըրահար ու հըրակեզ
 Մեր որդիքը կանչում են մեզ...

Տեղական ոճավորման ժամանակ օգտագործվում են այս կամ այն վայրին բնորոշ լեզվական միջոցներ.

«Լենինի թուր ձեղքեց թագավորի գլուխ, երկու կես արավ, թագավորին տապալեց, էնոր տուն, քուլֆաթ զարկեց ջարդեց, լավ հողեր, լավ դուքըններ, ինչ որ թագավոր ուներ՝ զմմեն ոսկի, հարըստություն բաժանեց չքավորներուն, ասավ՝ գնացեք ձեր քեֆին ապրեք...»: Ա. Բակունցի «Մուրոյի գրույց»-ը պատմվածքի այս հատվածը տեղական ոճավորման լավ օրինակ է:

Պատմական ոճավորման միջոցով վերականգնվում է անցյալի լեզվամտածողությունը, իսկ դրանով էլ կոնկրետ, շոշափելի է դարձվում այն ժամանակաշրջանը, որի մասին խոսվում է.

«— Սակայն ինչ և չնչին: Գրում եմ եղծը պարսից քեշին: Վաղուց հետե մովպետան մովպետը զրախոսում է մեր կրոնի ու գիտության մասին: Չէի կամենա համեստությունս խռովել և գիտունների շարքը մտնել անկոչ: Օրենք չէ գիտուններին գողոզանալ, ուր մնաց թե նվաստիս, սակայն երբ մովպետան մովպետը՝ մեծամիտ այնքան, որքան տգետ, մարտնչում է ընդդեմ բարձրագույն գիտության՝ մեզ պարտ է արժանի հատուցել արժանիին (Դ. Դեմիրձյան, «Վարդանանք»)»:

Անհատական ոճավորման ժամանակ օգտագործվում են այս կամ այն անհատի (սովորաբար գրողի) ոճին հատուկ լեզվական տարրեր՝ խոսքը նրան նմանեցնելու նպատակով:

Անհատական ոճավորումը մեծ մասամբ դրսևորվում է ծաղրական ոճավորման ձևով:

Ծաղրական նպատակով կատարվող ոճավորումը կոչվում է երգիծական ոճավորում կամ տնազարարություն (пародия):

Է՛, ընկեր
Սրտիս սեր,
Անվեհեր,
Դելիրաշ,
Իմ յուղաշ,
Արխադաշ,
Բնչ էիր
Դու առաջ՝
Մի կուլի,
Իսկ հիմա
Միշտ երգիր
Ու սուլիր:

Դու այժմ
Ստրուկ չես
Կամ մուշա,
Դարձել ես
Ինձ համար
Մի դուշա:
Բարև քեզ,
Արև քեզ
Ու սալամ.
Մի խոսքով,
Ասում եմ՝
Վաստալամ

(Աշփալ)

Այստեղ երգիծական ոճավորման համար օգտագործված են Ազատ Վշտունու արևելյան պոեմների լեզվաոճական տարրերն ու արտահայտչամիջոցները:

Գեղարվեստական ոճի ամենակարևոր առանձնահատկությունները արտահայտչությունը և պատկերավորությունն են:

Արտահայտչությունը հատկանիշ է, որը խոսքին տալիս է գնահատողական բնույթ՝ արտահայտելով խոսողի վերաբերմունքը խոսքի առարկայի նկատմամբ: Դրա շնորհիվ խոսքի բովանդակությունը ասես «տեսանելի» է դառնում: Արտահայտչության հետ սերտորեն կապված է հուզականությունը, որի շնորհիվ խոսքն արտահայտում է հույզեր և զգացմունքներ: Դրա շնորհիվ է, որ գեղարվեստական երկեր կարդալիս մենք հուզվում ենք՝ մերթ տխրում, մերթ ուրախանում կամ զվարճանում ենք:

Պատկերավորությունը խոսքի այն հատկանիշն է, որի շնորհիվ խոսքի առարկան որոշակիանում է, դառնում շոշափելի, տեսանելի, նկարագրություններն առարկայանում են: Պատկերավորության շնորհիվ խոսքի բովանդակությունը դառնում է զգայապես ընկալունակ, այսինքն՝ ասվածը լսողը կամ ընթերցողը զգում է զգայարաններով: Դրա շնորհիվ է, որ պատկերավոր տեքստ կարդալիս մենք ասես լսում ենք ծակատամարտի աղմուկը, գեների շաշյունը, վիրավորների հեծեծանքները, ծաշկերույթի տեսարանում զգում ենք ծաշերի և ուտելիքների համն ու հոտը և այլն:

Վարժություններ

1. Գրական երկերից ընտրեցեք համապատասխան հատվածներ, որոնք ցայտունորեն դրսևորում են գեղարվեստական ոճի առանձնահատկությունները:
2. Համեմատեցեք Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Ձանգի», Բաֆֆու «Սամվել» վեպի «Արարատյան դաշտի առավոտը», Շիրվանզադեի «Քաոս» վեպի նավթահանքերի հորդեհի հատվածները կամ Հովհ. Թումանյանի «Անուշ», Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմների որոշ մասերն ու Վ. Տերյանի առանձին բանաստեղծությունները և ընդհանուր գծերով բնութագրեցեք այդ հեղինակների ոճերը (առաջադրանքը կատարել դասարանում, ուսուցչի օգնությամբ):
3. Կարդացեք Ե. Չարենցի «Լուսամփոփի պես աղջիկ» («Ծիածան» շաբթից), «Ինչքան կանչես ու տաղ ասես, խելքի արի՛ բավ է էլի» («Տաղարան» շաբթից) բանաստեղծությունները՝ համեմատելով «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմների առանձին հատվածների հետ: Նշված բանաստեղծություն-

ներից դուրս գրեցեք այն բառերն ու արտահայտությունները, որ հատուկ չեն Ե. Չարենցի պոեմների և ուշ շրջանի երկերի լեզվի տարրերին:

4. Ուշադիր կարդացե՛ք բերված հատվածները, որոշեցե՛ք, թե ո՞ճավորման որ տեսակն է օգտագործված, և որո՞նք են լեզվական այդ տարրերը, որ ծառայեցված են դրանց:

Ա. Չկա այլևս պարտություն, երբ մարդ գրված է մահվան: Այն-պիսին ուժ է անսպառ և կործանիչ ամեն հակառակի: Մահվամբ կհաղթի նա մահվան և կապրի անմահ ոգի: Կյանքը մահով է անցնում դեպի իր գոյը հետագա... Սակայն կույր է այն մահը, որ չունի ոգու ներշնչում: Պետք է գիտակից ընդունել մահը: Եվ ճշմարիտ է ասել ոմն մեր հներից, թե՝ «Մահը ոչ գիտակցված՝ մահ է, մահը գիտակցված՝ անմահություն»:

— Տարապարտուց դսրովեցիր: Չեմ տեսնում իմաստություն հայիոյանքիդ մեջ: Եվ ոչ համատեղ էր դա մեր վշտին՝ հանդեպ հայրենյաց թշվառության: Ստրկության ուղիներով ես ազգը տանում ոգեկան ազատության և պետության:

Բ. Արքան պատմեց, որ իրենք եկել են «արևելյան երկնքի տակից», որ ինքը հիշում է իր հոր պատմած իրենց արոտավայրերի մասին «ավելի արևելյան երկնքի տակ...»:

— Հիմա երկնայինը ծանապարհ է բաց անում արևմտյան երկինքների տակ:

— Ո՞ր ծով ու ցամաքից ես, դ՛ր աշխարհից ես եկել մեր աշխարհը, — հարցրեց Աթըլը:

— Հայոց աշխարհից եմ, Վրկանա և Պոնտական ծով ու ցամաքից: Պարսից արքան, որ մեր ու ձեր թշնամին է, ոչնչացնել է կամենում...

— Իրավունք է՝ թե կարողանա, — հեգնեց, թե լուրջ ընդհատեց Աթըլը:

— Կդիմադրենք, մեծ խաբան, թույլ չենք տա:

— Իրավունք է՝ թե կարողանաք, — նույն եղանակով ասաց Աթըլը և ապա հարց տվեց:

— Հիմա ի՞նչ ես որոնում մեր աշխարհում:

— Ես եկել եմ պատերազմի դաշինք կոեւու մեր և ձեր արքայի միջև:

— Դաշինքը սրի ծայրին է, օտար իշխան: Ունե՞ք սուր:

— Ունենք: Մենք ոչնչացրինք պարսից զորագունդը Աղվանքում, եկանք գրավեցինք Ճորա պահակը:

Աթըլը մտածում էր: Հետո հանդարտ ասաց.

— Իսկ դուք ինչ կարող եք պարսից դեմ ու մեզ հետ:

— Մենք կավերենք Ճորա պահակը, թող ձեր զորքը լցվի այդ տեղից Երան:

— Լավ: Հիմա ասա՛ ինձ ազնվորեն: Եթե ես կամենամ Բյուզանդիա գնալ Նրանց արքային հյուր, կա՞մ ծանապարհ ձեր երկրի վրայով:

— Կա ծանապարհ,— պատասխանեց Վարդանը խռովյալ հոգով,— բայց միայն գնալու: Վերադարձ չկա: Քեզ կհանդիպի քո թիկունքում քո պատճառած սովը: Իսկ ծմեռը շատ է երկար:

— Բարի,— ասաց Աթըլը,— մեր Հորդայի արքան կգա ձեր երկիրը ձեզ օգնության պարսիկների դեմ:

— Կհրամայե՞ս կռենք դաշինք: Մենք մեր պարտքը պիտի կատարենք,— ասաց Վարդանը:

— Կռեցե՞ք դաշինք, եթե հավատում ես դաշինքին,— ծիծաղեց Աթըլը.— ահա դաշինք ունենք մեր աշխարհի հողմերի հետ, որ քշում են ավազը, ավազն էլ մեզ, մենք էլ կամ ձեզ, կամ Բյուզանդիային: Ամենքը ամենքի թշնամին են, հա՛, հա՛, հա՛: Ապա՛: Մենք էլ ունենք մեր թշնամին. ամենաուժեղից ամենաուժեղը: Ավազը, նա էլ մեզ է դուրս անում: Գնա՛, դաշինք կռիր հետը:

Արարողությունը վերջացավ: Վարդանը և մյուս իշխանները խոնարհություն արին Աթըլին և ընկրկելով հետ-հետ՝ դուրս ելան:

— Վա՛յ մեզ, վա՛յ մեր դաշինքին հողմերի ու ավազի հետ,— քմծիծաղեց Վարդանը, երբ գնում էին իրենց ուրթը:

(Դ. Ղեմիրճյան)

5. Նշեցե՛ք, թե Ս. Կապուտիկյանի և Գ. Սարյանի որ ստեղծագործությունների օրինակով են գրված հետևյալ պարողիաները. համեմատեցե՛ք դրանք և ցույց տվե՛ք երգիծական ոճավորման նպատակով օգտագործված միջոցները:

Ես քո սիրով, դու՝ արևի

Քո մասին եմ նորից երգում,
Մոռացել ես ինձ երևի,
Թափառում ենք տիեզերքում
Ես քո սիրով, դու՝ Արևի:

Այս նոր, այս նոր հրաշքներով
Ուրախ ես դու, ես՝ ավելի.
Ապրենք այսպես կրակվելով
Ես քո խանդից, դու՝ Արևի:

Երգ կծոնենք նաև Մարսին,
Թեկուզ նա մեզ չբարևի,
Ծուտով պիտի նստենք, Լուսին,
Ես քո ուսին, դու՝ Արևի:

(Հ. Մահյան)

Թանխանդա

I

Էյ, թանի երկիր, մածունի երկիր,
Ծիրազի երգում այդ թանից չկա,
Այդ մածունի պես, Թեհրանի երգիչ,
«Թեհրանի» ոչ մի հատորում չկա...
Մի գեղջուկ էր ապրում Իրանում,
Մանրածախ մի գեղջուկ էր նա,
Նա մածնի առևտուր էր անում,
Քեռի էր անունը նրա:

II

Կծումները ջարդվեցին,
Պարանները բաց եղան,
Մածունի մոտ լացեցին
Քեռին, ընթերցողն ու... նրա տղան:

(Գ. Էմին)

VI. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Խոսքին պատկերավորություն և արտահայտչականություն հաղորդելու նպատակով օգտագործվում են խոսքի ձևավորման հատուկ եղանակներ ու միջոցներ, որոնք ընդհանուր անվամբ կոչվում են պատկերավորման–արտահայտչական միջոցներ: Դրանք ավելի շատ են հանդիպում գեղարվեստական, հրապարակախոսական ոճերում, իսկ մյուս ոճերում՝ պակաս չափով: Վարչագործարարական ոճում սովորաբար բացառվում են:

Պատկերավորման և արտահայտչական միջոցները բաժանվում են երկու խմբի՝ դարձույթներ և բանադարձումներ:

Դարձույթները բառերի փոխաբերական գործածության վրա հիմնված պատկերավորման միջոցներ են (համեմատություն, փոխաբերույթ, փոխանունություն, համըմբռնում, խորհրդանիշ, հեգնանք, չափազանցություն, շրջասույթ և այլն):

Բանադարձումները խոսքին արտահայտչություն և պատկերավորություն տվող ոչ սովորական արտահայտչություններ, բառակապակցություններ կամ շարահյուսական կառույցներ են (անձնավորում, անշաղկապություն, բազմաշաղկապություն, բառախաղ, հարանունություն, զուգադրություն, հակադրություն և այլն):

Ա. ՀԵՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐ

1. Բաղաձայնույթ

Բաղաձայնույթը բանաստեղծական միևնույն տողի, խոսքային հատվածի ներսում նույն կամ նման բաղաձայն հնչյունների կրկնությունն է:

Իբրև բանաստեղծական խոսքի արտահայտչական միջոց՝ բաղաձայնույթը հայ գրականության և բանահյուսության մեջ հայտնի է վաղնջական ժամանակներից: Նախագրային և հին գրաբար բանաստեղծության մեջ, ուր բացակայում էր հանգը, ռիթմական և երաժշտական տպավորություն ստեղծելու հիմնական միջոցը հնչյունական կրկնություններն էին:

Երկներ երկին, երկներ երկիր,
 Երկներ և ծովն ծիրանի.
 Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկն եղեգնիկ:
 Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
 Ընդ եղեգան փող բոց ելանէր,
 Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ.
 Նա հուր հեր ուներ,
 Բոց ուներ մորուս,
 Եւ աչկունքն էին արեգակունք:

Բաղաձայնույթի գործածության դեպքերը կարելի է բաժանել երկու խմբի. ա) բաղաձայնությունն օգտագործվում է բնության երևույթների ձայնական տպավորություններ ստեղծելու նպատակով. բ) բաղաձայնների կրկնությունը սոսկ հնչունախաղ է և միայն ուժեղացնում է բանաստեղծության երաժշտականությունը: Առավել շատ հանդիպում են երկրորդ տիպի գործածություններ, սակայն կարելի է բերել բավական օրինակներ ևս, երբ հեղինակներին հաջողվել է հնչյունների կրկնությամբ ստեղծել անհրաժեշտ ձայնական տպավորություններ:

Ծըփում է ծովն ալեծածան,
 Ծըփում է սիրտը տըղի.
 Գոռում է ծովն ահեղաձայն,
 Նա կըռվում է կատաղի:

(Հ. Թումանյան)

Ծովն ալեկոծ, սանձակոտոր,
 Իր քար շրթներն է կրծում...

(Ավ. Իսահակյան)

Այս օրինակներում **Ծ, Զ** հնչյունների կրկնությամբ հեղինակը փորձում է վերարտադրել ալիքների ձայնը:

Աշնանը վերաբերող բանաստեղծություններում **Շ** հնչյունի կրկնությամբ **Վ**. Տերյանն ստեղծում է աշնանային տրամադրություն:

Աշնան մշուշում շշուկ ու շրշուկ,
 – Բարդիններն են բաց պատուհանիս տակ,–
 Դու ես, որ դարձյալ թախիծով հիշում–
 Կանչում ես նորից կարոտով հստակ:

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում
 եվ շշնջում ես և անուշ շրշում,
 Պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում
 Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում:

Աշուն է, անձրև... Ստվերներն անձև
 Դողում են դանդաղ... Պաղ, միապաղաղ
 Անձրևն ու անձրև...

2. Առձայնույթ

Առձայնույթը ձայնավորների կրկնությունն է բանաստեղծական նույն տողում կամ հատվածում խոսքին երաժշտականություն և բարեհնչություն հաղորդելու համար:

Հնչյունների կրկնության այս տեսակը ավելի քիչ է հանդիպում, քան բաղաձայնույթը: Դրա պատճառը առձայնույթի և պատկերավոր երևույթի իմաստային–հուզական կապի թուլությունն է: Այն չի կարող նույնպիսի հուզական լիցք հաղորդել, ինչպես բաղաձայնույթը՝ և օգտագործվում է հիմնականում բարեհնչություն ստեղծելու նպատակով:

Էս ճամփեն ոլոր–մոլոր
 Սև ծովի բոլոր կերթա...
 Անհայտ, անորոշ, անձև տենչերով
 Ձգտում է հոգիս հեռու, շատ հեռու...

(Ավ. Իսահակյան)

Յրտահար, հողմավար
 Դողացին մեղմաբար

Տերևները դեղին,
Պատեցին իմ ուղին...
Ճաճանչները թռչնան...
Կանաչներս աշնան –
Իմ խոհերը մոլար՝
Ցրտահամր, հողմավար...

(Վ. Տերյան)

Վարժություններ

1. Ցույց տվեք, թե ինչ հնչյունների կրկնությամբ է ստեղծվել բաղաձայնոցը:

Ցուրտ անձրև է միգում
Հեկեկում,
Տխրություն է երգում
Իմ հոգում:

Վարդավառի վարդերը վառ
Երգող երգչիդ երգվում եմ ես...

Լույսն է մեռնում, օրը մթնում,
Մութը տնից տուն է մտնում.
Ես տեսա քեզ իմ ծամփի մոտ,
Իմ մտերիմ, իմ անծանոթ:

(Վ. Տերյան)

2. Պարզեցե՛ք, թե գեղագիտական լիցք ունեն արդյոք հնչյունական կրկնությունները, թե միայն բարեհնչություն ու երաժշտականության նպատակով են գործածվել:

Մենակ, անընկեր ձեր գիրկն եմ եկել,
Կենսական ծովի ահեղ պտույտներ...

Սիրեցի յարըս տարան,
Յարա տըվին ու տարան...

Քընքուշ լուսնի շուշան-փոշին
Մաղեց հեզ գետի վրա,
Մեղմիկ խըշշաց ցորեն, ցողուն,
— Սիրտըս անդորր կծըփա:
Ուռիները նազան-ծածան,
Տերևները կշընչեն,
Ծիտ ու ծիծեռ ճյուղքի վրան
Վառ երազում կնընջեն...

Լուռ կծորե աստղը շողեր,
Ու ծղրիղը կծըղրա,
Քամին կերգե գաղտնի երգեր,—
— Սիրտըս հեռու կսըլանա...

Լուսնակն անցավ, — մութը մըթին
Մաղեց հեզ գետի վրա...
Ծանրը խըշշաց լացող ուռին,
— Սիրտըս տըխուր կհեա...

(Ավ. Իսահակյան)

3. Որոշեցե՞ք բաղաձայնույթի գեղագիտական արժեքը:

Ա՛խ, Շամիրամ, շամբշոտաշուրթ,
Դու չիմացար, որ անհագուրդ
Սուրը սիրտ չի գերել կարող,
Սուրը սեր չի բերել կարող,
Թեկուզ արար-աշխարհ գերի,
Սուրը երբեք սեր չի բերի...

Սոսափում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին,
 Սոսին իմ սեզ հարսի պես լուսնի ոսկե կուծն ուսին,
 Ու ես շորորն եմ երգում իմ Շուշանի արքեշում,
 Որ հուշ դարձել մշուշում ու ինձ դիժել՝ չի հիշում...

(Հ. Եիրազ)

4. Տոյց տվեք, թե հնչյունական կրկնությունների ինչ տեսակներ են օգտագործված հետևյալ հատվածներում:

Եվ հոգնաշավիղ աշխարհների մեջ
 Ինչ կանչերով էլ ալկանջս շահեն,
 Ինչ սերերով էլ սիրտս պաշարեն,
 Ինչ համերով էլ կաշառեն լեզուս
 Շաղոտ շուրթերով՝ շարակնաշուք,
 Քո շշուկներն եմ կրկնելու նորից:

Երկնքում բամբյուն է ու քոց,
 Երկնքում կայծ ու կռիվ,
 Բախվում են խորթ ու խռով
 Ամպերը խռիվ-խռիվ:
 Խրվում են իրար երախ,
 Խրտնում իրար գրկից.
 Թռչում են իրար թիկունք.
 Բռնում են իրար բկից:

(Հ. Սահյան)

5. Բառային և հնչյունական կրկնությունների միջոցով ինչ տպավորություն է ստեղծված բերված հատվածներում:

Չորի վրա
 Ծիվ-ծիվ հավթեր,
 Ու ձորի մեջ ծիլ-ծիլ ոսկի:
 Քարերն ի վար
 Ծերպերի մեջ
 Քարանձավի,

Բլրի կրծքին
 Ալեծածան
 Ծիծեռնախոտ
 Ու թավակուրծք
 Ծործորն ի վար
 Ծվեն-ծվեն
 Երկինք ծավի:
 Ծլընգ-ծլընգ
 Ծղրիղի երգ.
 Ծուլ-ծուլ փախչող
 Մոլորված ուլ
 Մի քարայծի:
 Ծուփ-ծուփ ջրվեժ,
 Ծոպերի մեջ
 Ծաղիկ, ծիծաղ
 Ու ծիածան:

(Հ. Սահյան)

6. Գեղարվեստական չափածո երկերից գտնք առձայնույթի և բաղաձայնույթի օրինակներ:

7. Պարզեցնք, թե ինչ ձայնավորներ է կրկնում հեղինակը, բայց դա չի վերածվել առձայնույթի: Ինչո՞ւ:

Երբ իրիկունը հուշիկ իջնում է
 Ու չորսդին շաղում աստղ ու երագ,-
 Հողը հիշում է,
 Հողը հիշում է,
 Իր պայծառ որդոց՝ ողջ և մեռած:
 Երբ գիշերվա պաղ մութը հալչում է
 Ծագող արևի վառ շողերում,-
 Հողը կանչում է,
 Հողը կանչում է
 Իր պանդուխտ որդոց՝ օտար հեռվում...

(Գ. Բանդուրյան)

Բ. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ԲԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Մակդիր

Առարկան, երևույթը, գործողությունն արտահայտչորեն բնութագրող բառերը և արտահայտությունները մակդիրներ են:

Խոսքի մեջ առարկաներն ու երևույթները բնորոշող, նրանց ինչպիսին լինելը ցույց տվող բառերը շարահյուսական որոշիչներն են: Դրանով է պայմանավորված մակդիրների և որոշիչների ընդհանրությունը: Մակայն նրանց միջև կան էական տարբերություններ: Բոլոր որոշիչները չէ, որ մակդիր են և ոչ էլ բոլոր մակդիրները՝ որոշիչներ:

Նախ՝ որոշիչները տալիս են իրենց լրացյալի բնական և նրանց էությունից բխող բնութագրությունը, բայց արտահայտչական դեր չունեն: Պատճառն այն է, որ մակդիրների մեծագույն մասը փոխաբերական կամ այլաբերական գործածությամբ է հանդես գալիս, իսկ որոշիչները՝ ոչ: Համեմատենք **անզգա մարդ** և **քարսիրտ մարդ** կապակցությունները: Եվ **անզգա**, և **քարսիրտ** բառերը բնորոշում են նույն **մարդ** գոյականը: Բայց եթե **անզգա** որոշիչը ցույց է տալիս, որ մարդը զգալու ունակությունից զուրկ է, ապա **քարսիրտ** մակդիրը դրանից բացի ունի նաև հավելյալ իմաստ, որ չզգալու պատճառը մարդու սրտի քարի նման լինելն է: Ակնհայտ է այստեղ **քար** և **սիրտ** բառերի ոչ սովորական, փոխաբերական կապակցությունն ու գործածությունը:

Մակդիրների արտահայտության հարցում սահմանափակումներ գրեթե չկան. մակդիր կարող են դառնալ նյութական իմաստ ունեցող բոլոր խոսքի մասերը.

ածական – **պայծառ աշուն, դառնաշունչ քամի,**

գոյական – **քար սիրտ, քար անտարբերություն, խոզ մարդ,**

մակբայ – տերևները դողացին **մեղմաբար,**

դերբայ – **վախեցած** աչքեր, **նիրհող** քաղաք.

բառակապակցություն – **մթնում կորած** խրժիթներ:

Երկրորդ՝ որոշիչները շարահյուսորեն կապակցվում են նախադասության անվանական անդամներին, նրանց լրացումներն են, մինչդեռ, ինչպես բխում է սահմանումից, քանի որ մակդիրները արտահայտչորեն բնութագրում են նաև գործողությունը, այսինքն՝

կան գործողության մակդիրներ, ապա լրացնում են նաև բայական անդամներին. օրինակ՝ ... դառն հեկեկաց, դիտապատ ընկան, «Ձինվորները սագաբար բարձրանում էին» (Դ. Դեմիրճյան):

Մակդիրները բնորոշ են գեղարվեստական ոճին և հատկապես հաճախակի են հանդես գալիս բանաստեղծական խոսքում:

Նրանք բնորոշ են նաև բանահյուսությանը, որտեղ մշտապես գործածվելու հետևանքով վերածվել են կայուն մակդիրների. կեռ հոնքեր, ոսկեթել մազեր, չինարի բոյ, խորոտիկ յար, անուշ յար, սևավոր սիրտ, ջիվան կյանք, ոլոր ճամփա, ծով աչքեր, վարդ շուրթեր, աղի արցունք և այլն:

Մակդիրներն ամենատարբեր և բազմազան գործածություն ունեն, ուստի կարող են բաժանվել տարբեր խմբերի.

1. Ըստ բնույթի.

ուղղակի – դալուկ դեմք, ոլործուն մորուս (Դ. Դեմիրճյան),
փոխաբերական – գիշերամորթ գոմեշ (Դ. Դեմիրճյան),
արևահամ բառ (Ե. Չարենց), *կուրայա ճրագ* (Հ. Շիրազ):

2. Ըստ կազմության.

պարզ – անհուն գորով, հրաշագեղ աչքեր,
բաղադրյալ – մթնում կորած խրճիթներ (Ե. Չարենց):

3. Ըստ շարադասության.

նախադաս – խավարակոտ մշուշ (Վ. Տերյան),
ետադաս – վարդերի բույրը վառման (Ե. Չարենց):

4. Ըստ բովանդակության.

- *նկարագրական* – արջի կերպարանք, տորթյան հասակ.
- *քնարական* – խոովահույզ դեմք, երկնասլաց ու թեթև, նրբակապույտ ծածկած մեզ (Վ. Տերյան).
- *չափազանցական* – աշխարհակործան փոթորիկ, հրա-
 ցայտ աչքեր.
- *նվազական* – հավի հիշողություն.
- *գունային* – կապույտ հածումներ, կարմիր առավոտ.
- *համեմատական* – եզան համառություն. «Իրենց մացառե-
 ցանցառ քեղի տակ ծիծաղում էին քարափներն անծայն»
 (Հ. Սահյան):

Միևնույն մակդիրը կարող է ունենալ մեկից ավելի հատկանիշ-
 ներ: Օրինակ՝ *հավի հիշողություն* արտահայտության մեջ *հավի*
 մակդիրը և *նվազական* է, և *համեմատական*:

2. Համեմատություն

Համեմատությունը ոճական դարձույթ է, որը երկու առարկաների կամ երևույթների համադրման միջոցով մեկը բնորոշում է մյուսի օգնությամբ՝ նրանց նմանության կամ տարբերության հիման վրա:

Լինելով լեզվի պատկերավորման միջոցների նախնական և պարզագույն ձևը՝ համեմատությունը միաժամանակ հանդիսանում է նրանց բոլորի հիմքը և լայնորեն է կիրառվում գեղարվեստական խոսքի մեջ:

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ,
Մենք ծեր դեմ ելանք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ,
Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,
Դուք հողմերի պես կկորչեք վայրագ:

(Հ. Երրագ)

Համեմատությունը երկանդամ է՝ պարունակում է և՛ համեմատելի, և՛ համեմատյալի անունները: Դրանով համեմատությունը տարբերվում է փոխաբերությունից, որտեղ համեմատելին բացակայում է: Այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է համեմատությունը, կոչվում է համեմատության հիմք: Նա կարող է երբեմն բացակայել, խոսքում արտահայտված չլինել: Օրինակ՝ փոխանակ ասելու «սարի պես մեծ (բարձր, հաստատուն) տղամարդ», ասում են «սարի պես տղամարդ»:

Համեմատությունները գրեթե միշտ ձևավորվում են ինչպես, պես, նման, ասես, կարծես, իբրև, հանց, գերթ, ոնց որ, կարծես թե, ասես թե կապերով ու շաղկապներով:

Համեմատությունները լինում են հաստատական և ժխտական: Ժխտական համեմատությունների մեջ երևույթների նմանությունը ցուցադրվում է՝ ժխտելով այն հասկացությունը, որի հետ համեմատվում է առարկան կամ երևույթը:

Դա ոչ թե քամին է փողոցում շաչում
Եվ ոչ էլ հրթիռը հրդեհում խավարը,—

Իր խմբի տղերանց հետ հյուրանոցում
Խմում, աղմկում է խմբապետ Շավարշը:

(Ե. Չարենց)

Համեմատությունները կարող են լինել նաև ծավալուն, երբ այն
երևույթը, որի հետ կատարվում է համեմատությունը, բնութա-
գրվում է ընդարձակ նկարագրությամբ:

Ես քեզ այնպես եմ սիրում,
Ասես նորից արծվենի
Թևեր ունեմ ու գարուն
Ու սիրտ ունեմ պատանի:
Ասես նոր եմ սիրում, նոր,
Ու այնպես եմ ես վառվել,
Թվում է, թե իմ բոլոր
Գարուններն են ետ դառել:

(Հ. Եփրազ)

3. Փոխաբերույթ

Փոխաբերույթը դարձույթ է, որ հիմնված է բառերի փոխաբե-
րական գործածության վրա՝ ըստ նրանց արտահայտած առար-
կաների, երևույթների արտաքին կամ ներքին նմանության:

Փոխաբերույթը պետք է տարբերել փոխաբերությունից՝ բա-
ռերի փոխաբերական գործածությունից, որի վրա են հիմնված ոչ
միայն փոխաբերույթը, այլև փոխանունությունը և համըմբռնումը:

Փոխաբերույթի հիմքում ընկած է համեմատությունը: Նա հա-
ճախ համարվում է կրճատ համեմատություն, քանի որ նրանում
առկա է միայն համեմատության մի եզրը՝ այն առարկան, երևույ-
թը, որի հետ համեմատում են: Այդ պատճառով փոխաբերույթի
կազմից բացակայում են **նման, պես, ինչպես** և համեմատություն
արտահայտող այլ սպասարկու բառեր: Այսպես, օրինակ՝ **ծովի ծի-
ծաղը** արտահայտության մեջ ծովը նմանեցվում է մարդուն, մար-
դու **ծիծաղելու** ժամանակ նրա դեմքը կարծես լուսավորվում է, աչ-
քերը փայլում են: Արևոտ օրերին **ծովը** փայլվում է և լուսավոր-
վում՝ հիշեցնելով մարդուն՝ նրա ուրախ տրամադրության պահին:

Փոխաբերությունները միշտ կարելի է վերածել համեմատության, բայց դրանից նրանց արտահայտչական ունակությունը պակասում է: Օրինակ՝ «Այդ մարդը **խոզ է**», «**Պա խոզի պես** մարդ է»:

Փոխաբերությունն իրարից տարբերվում են կառուցվածքով, իմաստով, կիրառական ոլորտով, ծագմամբ և այլն:

ա) Պարզ և ծավալուն փոխաբերություններ: Պարզ փոխաբերությամբ բաղկացած է լինում մեկ բառից (**վարդ շուրթեր**), իսկ ծավալունը՝ մի քանի բառերից, բառակապակցությունից (**«Անթև թռչնակ է աշուղը...» (Ջիվանի)**: Երբեմն խոսքի ամբողջական հատվածներ հանդես են գալիս որպես մեկ փոխաբերությամբ:

բ) Անհատական և համալեզվյան փոխաբերություններ:

Անհատական կոչվում են առանձին անհատների, մեծ մասամբ որևէ գրողի կողմից գործածված և նրանց գործերում մնացած փոխաբերությունները (**«Երեկոն բացեց իր սև թավիշները» (Դ. Դեմիրձյան)**), իսկ համալեզվյան՝ նրանք, որ ընդհանուր են ու հայտնի բոլորին կամ մեծ մասին:

Երկրորդ տիպի փոխաբերությունները ժողովրդական բնույթ ունեն, ի տարբերություն առաջինների, որոնց ծագումը գրական է:

Ժողովրդի խոսակցական լեզուն առհասարակ շատ հարուստ է փոխաբերություններով: Նրա բառապաշարում մեծ թիվ կազմող դարձվածքների մեծ մասը իրենց բնույթով փոխաբերություններ են, ինչպես, օրինակ՝ **գլուխ բերել** (հաջողությամբ ավարտել), **ափ հասնել** (սպատակը կատարել), **գլուխ հանել** (հասկանալ), **ձեռք պարզել** (օգնել), **երես առնել** և այլն:

Ժողովրդական առօրյա խոսակցությանը հատուկ է նաև կենդանիների անունների փոխաբերական գործածությունը.

օձ – վնասակար,

խոզ – երախտամոռ, կեղտոտ,

թութակ – սեփական կարծիք չունեցող և ուրիշինը կրկնող,

ինդկահավ – գոռոզ, փքուն,

աղվես – խորամանկ,

էջ – կամակոր, հիմար,

սագ (ղազ) – անձարակ:

Ժողովրդական փոխաբերություններ են կենդանիների մարմնի մասերի անունների օգտագործումը մարդու համապատասխան անդամների համար.

ռեխ – բերան,

թաթ – ձեռք,

ճանկեր – մատներ:

Այս կարգի փոխաբերությունների իմաստ ունեն նաև որոշ բայեր (**կապկել**, **էշանալ**, **աքլորանալ** և այլն):

ժողովրդական փոխաբերությունների մի մասը ծագում է բուսական աշխարհին հատուկ բառերից.

Խմել զույգ ծաղիկների կենացը, արմատների կենացը,

«Ծլես, ծաղկես, զորանաս», ճյուղեր արձակել,

վերին արտի ցորեն, «Գիտեմ, թե ինչ պտուղ ես» և այլն:

Գրական փոխաբերությունները նույնպես ստեղծվում են նույն մեթոդներով, սակայն նրանց համար բնորոշը գրականության մեջ գործածվելն է, գործողության ավելի սահմանափակ ոլորտ ունենալը:

4. Փոխանունություն

Փոխանունությունն այն ոճական դարձույթն է, երբ իրար հետ սերտորեն առնչվող առարկաներից, երևույթներից մեկի անվան փոխարեն գործածվում է մյուսինը:

Ի տարբերություն փոխաբերության, որը հաշվի է առնում առարկաների ու երևույթների նմանությունը, փոխանունությունը հիմնվում է նրանց զանազան կապերի ու առնչությունների վրա: Քանի որ այդ առնչությունները տարբեր են լինում, ուստի տարբեր են նաև փոխանունության տիպերը:

Փոխանունությունը կարող է արտահայտել.

ա) պարունակողի անունը պարունակյալի փոխարեն.

«Մի թասը լավ է, երկուսը բավ է...» (< *Եփրագ*): **Ուտել երկու պնակ, խմել երեք բաժակ:**

բ) արտադրողի, հեղինակի անունը արտադրանքի, ստեղծագործության փոխարեն. **«Ես կարդացել եմ Թումանյան», «Ես սիրում եմ Տերյան»:**

գ) չափը առարկայի փոխարեն. **«Երկու կիլոգրամ գնեցի», «Երեք կիլոմետր քայլեցի», «Երկու մետր գնեցի», «Երեք մետր փչացրեցի»:**

դ) հատկանիշը առարկայի փոխարեն. **«Սևեր կիսգնի, կնստի տանը»** (< *Թումանյան*), **կանաչ-կարմիր կապել:**

- ե) գործիքի անունը գործողության և նրա արդյունքի փոխարեն. «Հանձարեղ գրիչ»:
- զ) նյութը առարկայակի փոխարեն. «Արժճով խոցված՝ պառկած են հողում»:
- է) տեղը, վայրը բնակիչների, մարդկանց փոխարեն. հանդես գալ մեծ լսարանի առջև, «Գյուղը կանգնի՝ գերան կկոտրի»: «Դահլիճը քարացավ», «Հայաստանը շատ է տառապել նվաճողների ձեռքին», «Չեխիան ծափահարում է», «Սպիտակ տունը զգուշացնում է» և այլն:

5. Համըմբոնում

Համըմբոնումը (սինեկդոխա) փոխաբերության մի տեսակն է, որը հիմնված է առարկաների, երևույթների քանակական հարաբերության վրա և դրսևորվում է մասի ու ամբողջի, եզակիի ու հոգնակիի, մասնավորի ու ընդհանուրի, մեծի ու փոքրի՝ մեկը մյուսի փոխարեն գործածվելու ձևով:

Ո՛տք չդնես էլ տունս,

Մրոտեցիր անունս... (Հ. Թումանյան)

Ֆրանսիացին մտավ Մոսկվա: Հինգ գլուխ անասուն, հիսուն թև թռչուն, «Կաթիլը քար կծակի», «Գայլն ամպ օր է ման գալիս», «Շունը մարդու բարեկամն է»:

6. Անձնավորում

Անձնավորումը փոխաբերությանն առնչվող դարձույթ է, երբ իրերին, երևույթներին, կենդանիներին վերագրում են մարդկային հատկանիշներ:

Ծովը ծիծաղում էր: (Մ. Գորկի)

Գիշերը շշնջում էր Արտաշատում: (Դ. Դեմիրժյան)

Մութը տիրեց երկրին:

Անձնավորումը ծագում է ժողովրդական բանահյուսությունից, բայց լայնորեն կիրառվում է նաև գեղարվեստական գրականության մեջ:

Հաճախ անձնավորման մեթոդով գրվում են ամբողջական գործեր.

Ծովը տանջվում է. երրորդ օրն է, ինչ

Ձարկվում է ափին,

Մոնչում ցավից, տնքում է աննինջ
Տենդով սարսափի:

Երեք մութ գիշեր, երեք լույս ցերեկ
Ձառանցում է նա,
Եվ ոչ ոք նրան չի օգնի երբեք
Ու չի հասկանա:

Գոռ ալիքների անվերջ շարանով
Իր մեջքն է ծոծում,
Ահարկու ուժով, փրփրած բերանով
Խիժ է որոճում:

Ասես անդադար այրվող մորմոքի
Հառաչանքն անուժ,
Կամ, ասես, խորքում պահած բողոքի
Շառաչն է հանում:

Ոչինչ չի ասում, ողբում է անկանգ
Իր լեզվով կերկեր.
Ես այսպիսի ցավ, այսպիսի տանջանք
Չեմ տեսել երբեք:
Ծովը տանջվում է...

(Հր. Հովհաննիսյան)

7. Չափազանցություն

Չափազանցությունն այն ոճական դարձույթն է, երբ առարկան կամ նրա հատկանիշը ներկայացվում է չափազանցված կերպով:

Ծով են աչքերը Զավախքի դստեր,
Ու կորչում է մարդ՝ նրա հայացքում...

(Հ. Թումանյան)

Այստեղ չափազանցված կերպով է ներկայացվում աղջկա հայացքի խորությունը:

Որպես խոսքի պատկերավորման միջոց՝ չափազանցությունը գալիս է բանահյուսությունից, ուր հերոսները հաճախ օժտվում են գերմարդկային գծերով ու հատկանիշներով:

Դավիթ քչեց իր ձին, գնաց Մըսրա Մելիքի դեմ:
Տեսավ էրկնուց աստղին հաշիվ կար,
Էնոնց վրաններին հաշիվ չկար:
Կայնեց բարձր սարի վրա,
Տեսավ, որ զորք քանց ծովու ավազ շատ է:

Ասաց, ընկավ էդ զորքի մեջ, զարկեց, զարկեց,
Արնի հեղեղ էլավ, լեշեր տարավ:

(«Սասնա ծռեր»)

Գրականության մեջ նա չափազանցությունը տարածված երևույթ է. հավասարապես օգտագործվում է թե՛ չափածո, թե՛ արձակ խոսքերում:

«Թիվ կա աստղերին, թիվ չկա զորքին»:
«Ես կվառվեմ հուր կդառնամ,
Ես կհալվեմ ջուր կդառնամ...»:
«Ով եկավ, խմեց՝ գետը ցամաքեց...»:

(Հ. Թումանյան)

8. Նվազաբերություն

Նվազաբերությունը (նվազասույթը) չափազանցության հակառակ դարձույթն է: Դա բառ է կամ դարձվածք, որը խոսքի մեջ գործածվում է արտահայտության թուլացման, առարկայի հատկանիշի նվազեցման ձգտումով:

Օ՛ր, աշխարհը վաղրեց դարձել է մի փոքրիկ, փոքրիկ փողոց:

(Ե. Չարենց)

Երբեմն նվագաբերությունը դրսևորվում է հակառակ երևույթի, հատկանիշի ժխտմամբ, օրինակ՝ երբ «լավ է, հրաշալի է» ասելու փոխարեն ասվում է «վատ չէ»:

9. Շրջասույթ

Շրջասույթը դարձվածք է կամ բառակապակցություն, որ նկարագրական կերպով բնութագրում է առարկան կամ երևույթը նրան ուղղակի անվանելու փոխարեն:

Շրջասույթը հիմնված է փոխաբերության վրա: Այս դեպքում առարկայի ուղղակի անունը փոխարինվում է նկարագրական բնորոշումով:

Օրինակ՝ **Տրոյայի երգիչ** (Հոմերոս), **Ավարայրի հերոս** (Վարդան Մամիկոնյան), **պլպուլն Ավարայրի** (Եղիշե), **տվնջյան լուսաւու** (արև):

Երբեմն շրջասույթը բառացի հասկանալն օգտագործվում է երգիծական նպատակով: «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակում դերասանի «**Քսան տարի ազգային բեմերուն վրա կբալեմ**» նախադասությունը Աբիսողոմ աղան հասկանում է բառացի և ասում. «**է, նստեիր...**»:

Վարժություններ

1. Գտնեք մակդիրները, ցույց տվեք նրանց ոճական դերը:

Դու, Արագած, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գագաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:

Սեզ ժայռերդ՝ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս-փերուզ,
Առուններդ՝ մեջքիդ փայլուն,
Պերձ գոտիներ ոսկեհյուս:
Ծիրանավառ դրնն թագուհի,

Բուրումների դուն աղբյուր,
Ծաղիկներիդ հազար գույնի,
Հազար անուն, հազար բույր:

(Ավ. Իսահակյան)

2. Ցույց տվեք մակդիրները և որոշեցե՛ք նրանց տեսակն ըստ շարադասության (նախադաս, հետադաս):

Ժայռեր, կարծրացած հողմ ու շանթի տակ,
Ժայռեր ամեհի, քիրտ ու քարեղեն,
Ու ժայռերի մեջ մի քնքուշ լճակ,
Երազից պոկված մի կապույտ ծվեն:

Մինչ խորհում են լուռ ժայռերը մթին
Ու մտաբերում սև հողմեք ու ամպ,
Արևն է խաղում լճի կապույտին,
Ու ցուրն է ծփում մաքուր քնքշությամբ:

Իմ հայոց երկիր, իմ հայոց աշխարհ,
Շանթերի զարկից քարեղեն ու կուռ
Ինչպե՞ս ես պահե՛լ դարերում խավար
Քո սիրտը այսքան քնքուշ ու մաքուր:

Մի փոշոտ, փափուկ ճամփա,
Փշատի սաղափ ծառեր,
Մի կապույտ, կապույտ երկինք
Ու արև, արև, արև...

Ես սիրում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ,
Քե՛զ, որ լեռներում այս բարձրիկ ու լուրթ,
Ապրե՛լ ես դարեր, դարեր մաքառել...

(Վ. Դավթյան)

3. Դուրս գրեցեք մակդիրները մակադրյալ բառերի հետ և խմբավորեցեք ըստ կազմության:

1. Վարդագույն մի խնդություն, տուֆ քարերիդ պես, ասես ներկել է կյանքիս տասնևմեկ տարին: **2.** Խարտյաշ վարսերը փռել, լույս է տվել խավարին, հույս է տվել սրտերին շողշողուն այս պատանին (*Գ. Սարյան*): **3.** Անհույս իմ տան հույս ձեռքեր, մրոտ ձեռքեր, կույս ձեռքեր: **4.** Դառն է իմ ծով խնդությունը՝ քանի վշտի մի շիթ կա դեռ: **5.** Օ՛, ծով խելահեղ, միթե չես հոգնում՝ դարեր ալիք-վող նույն երգն ես երգում (*Հ. Եփրազ*): **6.** Եվ երկուստեք տիրեց պրկված լուրությունն ու կաշկանդումը: **7.** Կայսրը քրտնած խմորե ձեռքերն ու նիհար ուսերը բարձրացրեց: **8.** Ծուռով նրա ծեր առյուծի արծաթաբաշ գլուխը խոնարհվեց մատյանի վրա: **9.** Արսենը հրաժեշտի ժամի հապճեպությամբ պատրաստվեց մեկնելու ճամբար: **10.** Արցունքները կախվեցին նրա կակաչի միջուկի սևության թարթիչներից (*Դ. Դեմիրճյան*):

4. Որոշեցեք համեմատությունների ոճական դերը: Ցույց տվեք, թե ինչպիսի միջոցներով են արտահայտված դրանք:

Ա. Արշալույսների նման շքեղ և շուշանների նման մաքուր նրանց մարմինները բուրում են անուշ յուղերով և կնդրուկներով: Գիշերների պես սևաթույր են և արևի պես ոսկի են նրանց մազերը: Ինչպես հազարան բլրուկները Չինմաչինի արքայական վարդարաններում, այնպես երգում են փերիները կարոտի և անուրջների երգերից: Չմրուխտն ու հակինթն զավերի մեջ եռում է գինին երիտասարդ զինվորի բորբոքուն արյան պես:

(Ավ. Խաչակյան)

Բ. Երբ նայում եմ ծաղիկներին,
Քնքշանում եմ ծաղկի նման,
Երբ նայում եմ վեր՝ աստղերին,
Բարձրանում եմ աստղի նման,
Երբ նայում եմ ծաղկած հողին,
Խոնարհվում եմ մայր հողի պես,
Ժպտում անգամ իմ ոսոխին,

Սիրտս կուգեմ պոկել, տալ քեզ,
 Սիրտս՝ հողի մի ծաղկի պես...

(Հ. Երրազ)

Ես չեմ կարծում, չեմ սպասում,
 Որ դու՝ իմ աչքում այդքան փափկասուն,
 Խոտի նման հեզ,
 Արյան նման տաք,
 Եվ քնքուշ, ինչպես
 Փաթիլն սպիտակ,
 Եվ ցողի նման
 Աստղերից զգված,
 Աստծո անսահման
 Բարությանմբ լցված —
 Կարող ես լինել նաև այդքան բիրտ,
 Կարող ես լինել քարի պես քարսիրտ,
 Պաղ՝ փողի նման
 Լուռ հրացանի,
 Սուտ՝ շողի նման
 Սին՝ ծիածանի,
 Չոր՝ մասրենու պես
 Հին ցանկապատի
 Եվ մանր, ինչպես
 Հողն անապատի,
 Եվ այդքան կարծր ու փորձով հասուն...
 Ես չեմ կարծում, չեմ սպասում...

(Հ. Կովհաննիսյան)

Գ. 1. Յորենի ալիքները, կարծես խրտնելով, ոսկեգեղմ ոչխարների պես, փախչում էին արտի մի ծայրից մյուսը: **2.** Ավազյանը ծառի վրա թառած ուրուրի պես ատելությամբ նայում էր դաշտերին: **3.** Նա լցվում է պարծանքի զգացումով, նման այն երիտասարդ բանաստեղծին, որի ոտանավորի մասին խոսում են աղջիկները: **4.** Մացակ Ավազյանը միաժամանակ ուրախ տրամադրու-

թյան մեջ էր՝ զգալով ինչ-որ մի խանդաղատանք դեպի ազնիվ և միամիտ մեղրաձորեցին: Այդպիսի զգացմունք է տաժում ավազակը դեպի իր հարուստ ուղեկիցը, որին ամայի տեղ հասնելուց հետո մտադիր է սպանել ու կողոպտել նրա հարստությունը:

(Լ. Չարյան)

5. Գտնք փոխաբերությունները, նշեցնք, թե ինչի վրա են դրանք հիմնված:

Ա. 1. Հալվեց գիշերը լծի հայելում (Գ. Սարյան): **2.** Դու դեռ մի օր էլ չկա, որ եկել ես, արդեն հասկանում ես, թե ում բանալին որի կողպեքում է (Լ. Չարյան): **3.** Մեր տան աղբյուրն է մայրս, մեր հացն ու ջուրն է մայրս, մեր տան ծառան է մայրս, մեր տան արքան է մայրս (< Եհրազ): **4.** Հայոց նախարարներին մի հավատարիմ ականջ է հարկավոր ունենալ Տիգրանում: **5.** Բազմության միջից մեկի ծայնը պատեց թանձրացած օդը: **6.** Հազկերտի խոսքերը բոցի ցոլքումներով նետվեցին դեպի պալատականները, և սրահը հրդեհվեց: **7.** Երեկոն բացեց իր սև թավիշները: **8.** Նա զգաց, որ պետության անիվը դուրս թռավ տնուց և կատաղի թափով գնում է դեպի անդունդը: Շատ գիրք շրջվեց պետության կառքը ոլորանում (Դ. Դեմիրճյան):

Բ. Քամին քշում է ամպերի մետաքս

Առագաստները...

Արևն իր ոսկե հովիհարն է բացում

Երկնքի կապույտ երեսի վրա...

Ծիծեռնակները՝ կտցած արևի

Շողերը մեկ-մեկ ներքև են բերում,

Նվիրում խռով սիրահարներին,

Հաշտություն ցրում:

Աչքերն են բացում բողբոջ ու մանուկ՝

Արևածագի խնդացումն ավետող.

Մեծ առավոտ է իմ Հայաստանում

Գիշերից հետո:

(Հր. Հովհաննիսյան)

Իրիկվա հովն է հորովել երգում,
Նոր բացվող ցել է գիշերը, կարծես,—
Լուսինն ամպերի խոպանն է հերկում՝
Խրվելով ամպը ոսկե խոփի պես:

Եվ ծովանում է ցելը գիշերվա
Սև ակոսներով սև ծով ամպերի,
Եվ մեկը, կարծես, հույսով իմ վաղվա
Լուռ սերմանում է հերկը խավարի:

Նա հոծ աստղերն է մթնում սերմանում,
Ամեն աստղ ոսկե հունդ է ցորենի,
Մթնավախ սրտիս հոգսն է արթնանում,
Թե ցանքսը մեկեն յոթը կծնի...

Բայց մեկ է ծնում հազարն էլ հսկա,
Մեկ է ծնունդը անսահման ցանքսի,
Քանզի արևն է իր հունձքը ոսկյա՝
Այսպիսի ծով հունձ ո՞վ չի երագի:

(Հ. Շիրազ)

6. Տոյց տվեք, թե ինչի վրա է հիմնված փոխանունությունը հետևյալ նախադասություններում.

Ա. 1. Իսկ սարի սովոր սգավոր նանը սներ կհագնի, կնստի տանը (Հ. Թումանյան): 2. Արձժով խոցված պառկած են հողում: 3. Գեղ կանգնի՝ գերան կկոտրի: 4. Լսարանն աղմկում էր: 5. Սլովակիան ծափահարում է: 6. Հայաստանը շատ է տառապել օտար բռնակալների լծի տակ:

Բ. 1. Եվ ողջ Սյունյաց աշխարհը իրար անցավ: 2. Մարտիրոսը, զամբյուղից հանելով ձկները, ընտրում էր. «Արաքս է, մենակ խորվիրապ»: «Մեծամոր է: Արաքս չէ: Արաքսը բեր»: 3. Սուր շեփորը զարթնեցրեց քնած զորաբանակը: 4. —Դե որ իլիկ մանող չեք, վճիռը դրեք, վեր կացեք,— ասաց Առաքելը (Դ. Դեմիրճյան):

7. Գեղարվեստական երկերից և առածներից դուրս գրեցեք համըմբոնման օրինակներ:

8. Ցույց տվեք, թե անձնավորման ժամանակ ինչ հատկանիշներ են օգտագործված:

Չկնիկն առվին խոտոտ տվեց,
Եվ առուն պարզ ու անբիծ
Քրքջալով ուշաթափվեց
Ու ծորն ընկավ քարափից...

Ձարկվեց քարին, ուշքի եկավ,
Ծուրջը նայեց կասկածով,
Եվ մի կապույտ ժպիտ շուրթին՝
Ճամփա ընկավ դեպի ծով:

(Հ. Սահյան)

Որոտացին ամպերը թուխ,
Հեկեկացին ու լաց եղան:
Հեկեկոցից այդ սրտաբուխ
Անծրն տեղաց ու լճյս տեղաց:

Այգիներով անծրնն անցավ,
Անցավ դաշտով, անցավ հանդով
Եվ ուր գնաց, որտեղ եղավ՝
Ձուգեց լույսով, աղամանդով:
Ավիշ տվեց ծիւ ու տունկին,
Առուներին՝ կարկաչ ու ձայն,
Ծաղկին՝ երանգ ու երկնքին՝
Կարմիր-կապույտ մի ծիածան:

Իսկ ինքը դեռ շողում հստակ,
Հազար գույնի ցուլ է տալիս,
Մահանում է արևի տակ
Ու ժպտում է մահանալիս...

(Վ. Դավթյան)

9. Ղ. Աղայանի «Տորք Անգեղ» պոեմից դուրս գրեցեք չափազանցությունները:

10. Գտե՛ք շրջասույթները և ուսուցչի օգնությամբ բացատրեցե՛ք:

Իսկ մենք՝ ես և դու... արվեստ ենք խաղում,
 եվ... մի այնպիսի համոզվածությամբ,
 Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...
 Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
 Ծնվում են նրանք ծի՜շտ ժամանակին
 եվ ժամանակից առաջ են ընկնում,
 Դրա համար էլ չեն ներում նրանց:
 Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք,
 Հասարակ հորից ու մորից ծնված՝
 Սերում են նրանք և այն վայրենուց,
 Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում:
 Սերում են նրանք և այն ծերուկից,
 Որ նախընտրում էր քնել տակառում,
 Սերում են նրանք և այն պատանուց,
 Որ սիրահարվեց իր իսկ պատկերին:
 Սերում են նրանք բոլոր նրանցից,
 Որ սատանային հոգին են ծախում,
 Սիայն թե անեն մտածածն իրենց,
 Ինչ փույթ, թե մեռնեն ժամանակից շուտ:

(Պ. Սևակ)

11. Կազմեցե՛ք շրջասույթներ՝ նրանցով փոխարինելով՝ ա) գրողների, նկարիչների, գիտնականների անուններ, բ) կենդանիների անուններ:

12. Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջին և երկրորդ սուրահներից դուրս գրեցե՛ք օգտագործված զանազան դարձույթներ:

Գ. ԲԱՌԱԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀՌՄՆՎԱԾ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ-ԱՐՏԱՀԱՅՏՁԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Նույնասկիզբ

Նույն բառի, կապակցության կրկնությունը բանաստեղծության հարևան տողերի սկզբում կոչվում է նույնասկիզբ:

Աշխարհում կա ջահելություն,
Կա կյանք,
Կա սեր,
Կան տղաներ ու աղջիկներ,
Կա շեկ, կա սև...

(Պ. Սևակ)

Նույնասկիզբը երբեմն կարող է կիրառվել նաև արծակ խոսքում: Այդ դեպքում կրկնությունը կատարվում է նախադասությունների սկզբում:

Առաջին անգամ էր, որ Թորիկն այդքան մոտիկից էր հպվում մի կնոջ, առաջին անգամ էր, որ մի կնոջ շունչը դիպչում էր իր երեսին, առաջին անգամ էր, որ կնոջ յուրահատուկ բուրմունքը խռովում էր նրա ռեգուլները (Վ. Թորոպենց):

Երբեմն նույնասկզբի հնարանքով կառուցվում են ամբողջական ստեղծագործություններ: Օրինակ՝ Հ. Եիրազի «Ինքներգանք» պոեմի 287 տողերից 211-ը սկսվում է մերթ բառով:

Մերթ զեփյուռ ես դու սիրաշունչ՝ նուրբ էոլյան տավիղ,
Մերթ հովիկ ես, մերթ փոթորիկ, մրրիկ մթնաբավիղ,
Մերթ կակաչի կուրծքն ես կարմիր, մերթ սևանդունդ սիրտ,
Մերթ քնքուշ ես մանուշակից, մերթ իր փշից բիրտ,
Մերթ ոտքի տակ ընկած լեռան արահետ ես լռին,
Մերթ շառաչող կաղնի ես ճոխ, մերթ լուռ, ինչպես ուռին...

2. Նույնավերջ

Նույնավերջը (կրկնավերջույթ) բանադարձում է, որ հիմնած է բանաստեղծական հտրևան տողերի վերջում նույն բառի կամ բառակապակցության կրկնության վրա:

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես՝ մնաք բարով,
 Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես՝ մնաք բարով,
Մնաք բարով՝ ասում եմ ես բոլոր մարդկանց չար ու բարի,
 Տանջվող ու որբ աղամորդուն ասում եմ ես՝ մնաք բարով:

3. Հանգույց

Հանգույցը այն բանադարձումն է, երբ խոսքի մի քանի միավորներ (բանաստեղծական տողեր, նախադասություններ) ունենում են նույն սկիզբը և վերջավորությունը՝ նույնասկզբի և նույնավերջի համատեղումը խոսքի միևնույն հատվածում:

Սիրտդ որպես վառ ատրուշան պահիր վառ,
 Սիրտդ հրկեզ մթնում դաժան պահիր վառ...

(Վ. Տերյան)

Դարդս տվի հովերին՝ հովերը չառան,
 Դարդս տվի ծովերին՝ ծովերը չառան...

(Հ. Շիրազ)

4. Կցուրդ

Կցուրդը այն բանադարձումն է, երբ բանաստեղծական նախորդ տողի վերջին բառը, բառակապակցությունը կամ հնչյունախումբը կրկնվում է հաջորդ տողի սկզբում:

Ես գիտեմ՝ նա կգա սրտերի,
 Սրտերի վրայով կգա նա,
 Համայնական հասուն արտերի,
 Արտերի վրայով կգա նա:

(Գ. Սարյան)

Արձակ խոսքում գործածվող այս բանադարձման տարբերակն է **գուգապատկությունը**՝ նախորդ նախադասության վերջին բառի կամ բառերի կրկնությունը հաջորդի սկզբում:

Աշնանը ոչխարի հոտերը սարից իջնում են դեպի գյուղ: Դեպի գյուղ են շարժվում նաև սոված գայլերը:

Դ. ԵԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԲԱՆԱԴԱՐՉՈՒՄՆԵՐ

1. Զուգադրություն

Հաճախ գեղարվեստական խոսքի մեջ երկու կամ ավելի երևույթների մասին խոսվում է շարահյուսական նույնատիպ կառուցվածքներով, զուգահեռ նկարագրության միջոցով: Այս դեպքում խոսքի երկու հարևան հատվածներ ունենում են միատեսակ շարահյուսական կառուցվածք: Այս հնարանքը կոչվում է **զուգադրություն**:

Զուգադրությունը կրկնության մի տեսակն է, բայց կրկնվում են ոչ թե բառեր, այլ շարահյուսական կաղապարներ:

Իբրև խոսքի կառուցման ոճական հնարանք՝ զուգադրությունը գրական լեզվին է անցել բանահյուսությունից: Զուգադրությունը կարող է լինել նաև թեմատիկ, երբ կրկնվում են նման երևույթներ:

Ասեղներ են հոսում ամեն ջրհորդանից,
Ասեղների հոսք է և իմ սրտում:

(Պ. Սևակ)

2. Խաչաձևում

Խաչաձևումն այն բանադարձումն է, որի դեպքում խոսքի երկու հարևան հատվածներ կամ միավորներ ունենում են հակադիր կառուցվածք՝ շարահյուսական կառուցվածքը շրջվում է: Հետևյալ օրինակում տողերը հակադրվում են ենթակայի և ստորոգյալի շարադասությամբ.

Մութը ծածուկ սողում է,
Իջնում է անլույս երեկոն...

«Կյանքն առանց սիրո նույնն է, ինչ սերը առանց կյանքի»: Այս բարդ նախադասության մեջ բաղադրիչները, որոնցում գործածվում են միևնույն կյանք և սեր բառերը, հակադրվում են

իմաստով: Խաչաձևման լավագույն օրինակն է համարվում հետևյալ ասույթը. «**Պետք է ուտել ապրելու համար և ոչ թե ապրել ուտելու համար**»:

3. Ձեղչում

Ձեղչումը որպես ոճական բանադարձում պետք է տարբերել քերականական զեղչումից (նախադասության կրկնվող անդամի բացթողում): Որպես արտահայտչական միջոց՝ զեղչումը հեշտ վերականգնվող կամ խոսքաշարից ըմբռնվող բառի, բառակապակցության նպատակային բացթողումն է՝ հույզեր առաջացնելու, երևակայության վրա ազդելու համար:

Գեղարվեստական գրականության մեջ զեղչման մյուս նպատակը հոգեկան հուզումնալից պահերի, քարդ հոգեվիճակների արտահայտումն է, երբ ասելիքի մի մասը թողնում են կռահելու լսողին կամ ընթերցողին:

- Իշխան... շատ զգույշ... աղաչում եմ...— շննջաց ստվերը:
- Նա այստեղ է...— դողաց Արտակը:
- Այստեղ է, տներ իմ... Բայց զգույշ...
- Ինչ, նա.
- Եկ...

(Դ. Դեմիրճյան)

- Ո՛վ է սպանել... Մոսին... ղմ... ղր...
- Անուշ, հեյ անուշ... Ջուր հասցրեք, ջուր...

(Հ. Թումանյան)

Ձեղչման մի տեսակն է դարձվածքի, բառի կամ արտահայտության վերջավորության բացթողումը: Այդպես վարվում են հայիությանքների, անվայելուչ բառերի հետ:

Օրինակ՝ Թյոն, ես քո...

4. Ավելադրություն

Ավելադրությունը զեղչման հակառակ երևույթն է, երբ խոսքի մեջ ավելացվում են բառեր՝ իմաստի կամ արտահայտչական երանգի ուժեղացման համար: Տրամաբանորեն այդ բաների մի մասն ավելորդ է:

Ես այդ բոլորը տեսա իմ աչքերով և լսեցի իմ ականջներով:

Ինչպես մեկ կատաղած վիշապ՝ երկնքից թռած՝ գլխիվեր ծուլլակ, մեկ տուտը Սևանի հանդարտ ծովում, մեկ տուտը Արագի քրքրված դրաղումը, սար ու ծոր կխչոր տալով, քափ ու քրտինքը բերանը կոխած, զզզված, մազերը քյալլին ցցած, կապը կտրած, գծված...

(Խ. Աբովյան)

5. Աստիճանավորում

Աստիճանավորումն այն բանադարձումն է, երբ խոսքի մեջ հարիմաստ բառեր կամ արտահայտություններ են գործածում՝ դրանք հաջորդելով իմաստի ուժգնացման կամ թուլացման կարգով:

Ի տարբերություն կրկնության, որտեղ հուզականությունն ու արտահայտչությունը ձեռք են բերվում միևնույն բառերի, բառամասերի, բառակապակցությունների կրկնությամբ, աստիճանավորման դեպքում իրար են հաջորդում համանիշ բառերը. ոչ թե բառերն են կրկնվում, այլ տարբեր բառերի միջոցով արտահայտվող մերձավոր իմաստները՝ սկզբնական իմաստի աստիճանական ուժեղացմամբ կամ թուլացմամբ:

Աստիճանավորումը լինում է երկու տեսակ.

1. Բարձրացող աստիճանավորում – խոսքի այնպիսի կառուցվածք, երբ յուրաքանչյուր հաջորդ արտահայտություն կամ դարձվածք ավելի է հագեցած իմաստով, ավելի ուժգին է և արտահայտիչ, քան նախորդը:

— Մեռել եք, սատկել եք, — գոռաց նա՝ սարսափելի հայիտանքներ թափելով:

(Նար-Դոս)

**Ջարդեցեք անդուլ, անգութ, անխնա,
Ջնջեցեք աշխարհն ապական ու հին...**

(Վ. Տերյան)

2. Իջնող աստիճանավորում – խոսքի մեջ բառերի, արտահայտությունների դասավորումը իմաստի, արտահայտչության կամ հնչերանգի թուլացման կարգով:

Քամին ոռնում էր կատաղի, ապա սուլեց, նվաց, մլավեց, թույլ ու մոլորվեց, հանգավ նեղլիկ փողոցների լաբիրինթոսում:

6. Հարանոմություն

Ձևով նման բառերի՝ հարանունների օգտագործման վրա հիմնված բանադարձում:

Այս դեպքում բառերն օգտագործում են ըստ իրենց արտաքին հնչապատկերի, և իմաստների խաղ կամ սաստկացում չի կատարվում, ինչպես աստիճանավորման դեպքում:

Իմ երգածը սար է,
Իմ երգածը ձոր է,
Մեկն ասում է՝ չար է,
Մեկն ասում է՝ չոր է:
Իմ երգածը դար է,
Իմ երգածը օր է:
Մեկն ասում է՝ խառ է,
Մեկն ասում է՝ խոր է:
Իմ երգածը բախտ է,
Իմ երգածը սիրտ է,
Մեկն ասում է՝ բարդ է,
Մեկն ասում է՝ բիրտ է:
Իմ երգածը հիմն է,
Հիմն է, հիմնավոր է,
Մեկն ասում է՝ հին է,
Մեկն ասում է՝ նոր է,
Իսկ ինձ համար մեկ է...
Երբ որ մեջը վերք է

Եվ քո ապրած օրն է,
Երգն, իսկապես, երգ է,
Հինն ու նորը զորն է:

(Հ. Սահյան)

7. Բառախաղ

Բառախաղը բանադարձում է, որ կառուցվում է տարիմաստ բառերի արտաքին հնչյունական նմանությունը կամ բառերի տարբեր իմաստներն օգտագործելով, որի ժամանակ ստեղծվում են զանազան իմաստային խաղեր:

— Արդյոք գիտես, թե ով եմ ես,
Ինչ տեղից եմ, ինչ ցեղից եմ:
— Գիտեմ, գիտեմ՝ ինչ ցեխից ես:

(Հ. Թումանյան)

Չի կարողանում բառերը հեգեղ,
Բայց արդեն կարդում է Հեգեղ:

(«Ողնի»)

Մարդու մեկը ուներ մի «Ձիւմ»,
Հարստացավ երկրորդ «Ձիւմ»-ով,
Հիմա արդեն ուզի-չուզի
Պիտի կոչվի նա Ձիւմզիւմով

(«Ողնի»)

8. Հակադրություն

Իմաստով հակադիր բառերի կամ արտահայտությունների զուգորդմամբ ստեղծվող ոճական բանադարձում:

Մրոտ, ինչպես մի հին ճրագ,
Մաքուր, ինչպես մի արեգակ —
Մայրս:

Խղճուկ, ինչպես ճրագը մար,
Հզոր, ինչպես ջաղացքար —
Հայրս...

(Հ. Շիրազ)

9. Ծարտասանական հարց

Ծարտասանական հարց է կոչվում հարցական նախադասության օգտագործումը ոչ թե պատասխան ստանալու, այլ միտքն ուժեղացնելու, խոսքին անմիջականություն և արտահայտչություն հաղորդելու համար:

Սովորական հարցը տրվում է այն դեպքում, երբ հարցնողն ուզում է որևէ բան իմանալ կամ պարզել ունկնդրի կարծիքը: Ծարտասանական հարցի դեպքում խոսողը կամ գրողը պատասխանի չի սպասում, այլ իր միտքն արտահայտում է հարցի ձևով: Ծարտասանական հարցը փաստորեն պարունակում է իր պատասխանը: Երբ մեկն ասում է. «Մինչև երբ համբերենք այս անարդարությունը», նա ոչ թե ուզում է պատասխան ստանալ, այլ արտահայտել իր վրդովմունքը, ունկնդիրներին կամ ընթերցողներին գործողության մղել անարդարության դեմ, իր վրդովմունքը փոխանցել նրանց: Ծարտասանական հարցը խոսքին արտահայտչականություն է հաղորդում՝ մենախոսությանը տալով երկխոսության ձև:

Ահեղ գոյժով է շաչում փոթորիկը մեծ,
Որոտում է միգամած երկինքը ցավից...
Դու երբ պիտի խաղաղվես, ծով իմ հողմածին,
Դու երբ պիտի երևաս, արև բաղձալի:

(Հր. Հովհաննիսյան)

10. Ճարտասանական բացականչություն

Խոսքի մի հատվածը կամ նախադասությունը բացականչական հնչերանգով արտասանելը մտքի առարկայի վրա ուշադրություն գրավելու կամ խոսքին հուզականություն հաղորդելու նպատակով կոչվում է ճարտասանական բացականչություն:

Եվ ինքն իրեն շվայտելով,
Ցուփ վատնելով ու հատնելով՝
Արդեն քանի և քանի դար
Քեզնից բնավ չի կշտանում...

(Դ. Սևակ)

11. Անշաղկապություն

Անշաղկապությունը ոճական բանադարձում է, որի դեպքում խոսքից միտումնավոր կերպով բաց են թողնվում շաղկապները, որը խոսքին հաղորդում է թափ և արտահայտչական երանգ:

Այս դեպքում շաղկապներ և շաղկապական բառեր չեն գործածվում, սակայն մտքով հասկացվում են:

Անշաղկապությունը հատուկ է խոսակցական լեզվին և գեղարվեստական գրականության մեջ օգտագործվում է խոսքին աշխուժություն տալու, այն հուզական դարձնելու, արտահայտչությունն ավելացնելու և սառը դատողականությունը նվազեցնելու նպատակով:

Հոգսերով,
Հույսերով
Ծանրաբեռ,
Օրնիրուն
Միշտ արթուն,
Անդադրում,
Անհամբեր,
Հևում է,
Թևում է
Դեպի վեր...

Պահել է
 Ջահերը,
 Ջահել է
 Սիրտս դեռ:

(Հ. Սահյան)

12. Բազմաշաղկապություն

Խոսքի մեջ միավորիչ շաղկապների առատ գործածությունը կամ միևնույն շաղկապի բազմակի կրկնությունը կոչվում է բազմաշաղկապություն:

Ես հիանում—հրժվում եմ՝
 Եվ քուն մտած քարափով,
 Եվ արթնացող տարափով,
 Մանուկների և խաղով,
 Եվ կրկրան ծիծաղով,
 Որից նրանք ոչ հոգնում,
 Ոչ կարող են հագնել:

(Պ. Սևակ)

13. Շրջադասություն

Շրջադասությունը նախադասության մեջ բառերի ընդունված դասավորության (շարադասության) խախտման վրա հիմնված բանադարձում է:

Շրջադասությունն արտաքնապես արտահայտվում է նրանով, որ նախադասության անդամների տեղերը փոխվում են, իրար հետ կապված բառերը հեռացվում, նախադասության մի անդամը իր սովորական տեղից շարժվում է մի այլ տեղ՝ սկզբից վերջը կամ ընդհակառակը:

Շրջադասությունը սովորական է բանաստեղծությունների մեջ՝ կապված արտահայտչության ուժեղացման պահանջի, չափի կամ հանգի հետ, բայց հանդիպում է նաև այլ դեպքերում՝ միտքն ընդգծելու, խոսքի հանդիսավորությունն ուժեղացնելու, այս կամ այն բառի իմաստը շեշտելու նպատակով:

Այստեղ է լացել իմ մայրը
 Մորմոքն իր և իր օրորը,
 Այստեղ այնպես անծայր է
 Կարոտն ու այնպես խոր է:

(Վ. Տերյան)

Շրջադասությունն ունի երեք տարատեսակ.

- ա) **Հակադասություն** — երբ խոսքի շարադասությունը տրամագծորեն հակառակ է ընդունված կարգին:
 «Տուն գնացի ես մի օր», փոխանակ՝ «Մի օր ես գնացի տուն»:
- բ) **Շարախախտում** — իմաստով անմիջականորեն կապված բառերի տեղաշարժումը խոսքի մեջ:
 «Մեծարենցը առարկան էր գավառական պատանեկության պաշտամունքի» (Վ. Թոթովենց), փոխանակ՝ «Մեծարենցը գավառական պատանեկության պաշտամունքի առարկան էր»:
- գ) **Հերթաշրջում** — նկարագրվող երևույթների տրամաբանական հերթականության խախտում:
 «Պետին թիկ տվեց մի քարի, նստեց հանգստանալու»:

(Ա. Բակունց)

14. Հեզնանք

Հեզնանքը խոսքի կառուցման եղանակ է, երբ դրական իմաստային երանգներ ունեցող բառերն ու արտահայտություններն օգտագործվում են բացասական իմաստով:

Բառի, արտահայտության իրական իմաստն այս դեպքում որոշվում է հնչերանգով:

Հեզնական է այն խոսքը, որում անձերին ու առարկաներին վերագրվում են այնպիսի հատկանիշներ, որոնցից նրանք զուրկ են: Այդ ձևով էլ հենց ցուցադրվում է դրանց բացակայությունը:

Հեզնական արտահայտությունները միշտ պարունակում են նուրբ ծաղր, ուստի ոճական այս հնարանքը հիմնականում օգտագործվում է երգիծական նպատակով:

Որպես երգիծանքի արտահայտման ձև՝ հեգնանքը ամենաստորին աստիճանն է հումորի, սատիրայի և սարկազմի շարքում:

Կյանքում սովորաբար ծաղրական է ձևի և բովանդակության անհամապատասխանությունը, և հեգնանքը կառուցվում է հենց այդ սկզբունքի հիման վրա:

Լեզվի մեջ կան կայուն դարձվածքներ, որոնք միշտ օգտագործվում են հեգնաբար.

խելքի պուտուկ, խելքի տուպրակ — անխելք, հիմար

մարգարիտներ շարել — հիմարություն դուրս տալ

Ամերիկա գտնել — հայտնի բան «հայտնագործել» և այլն:

Բանավոր խոսքում հեգնանքը դրսևորվում է հատուկ հեգնական հնչերանգով, առանց որի խոսքը կհասկացվի ուղղակի նշանակությամբ:

Հեգնանքին իր բնույթով մոտ է **զվարճաբանություն** բանադարձումը՝ գովերգում հանդիմանության ձևով և ընդհակառակը՝ հանդիմանություն գովերգման ձևով: Այս դեպքում էլ կարևոր դեր է խաղում հնչերանգը:

— Համա շատ ժուլիկն ես, հա՛...

— Շատ սրիկա է...

— Դեհ, քնչ կասես, իմաստուն...

15. Պարադոքս

Պարադոքսը արտաքնապես կամ ներքնապես հակասական, ընդհանրապես տարօրինակ և անսովոր արտահայտությունն է:

Պարադոքսը գրավում է ունկնդիրների կամ ընթերցողների ուշադրությունը նրանով, որ առաջին հայացքից տարօրինակ է թվում, բայց ավելի լավ քննելու դեպքում հանդես է բերում թաքնված ճշմարտություն կամ, ընդհակառակն, արտաքնապես ճիշտ է թվում, բայց ներքնապես պարունակում է հակասություն: Պարադոքսային են, օրինակ, «**Դանդաղ գնաս, շատ կգնաս**» առածը կամ կղզիներից մեկի այն բնակչի պնդումը, **թե այդ կղզու բոլոր բնակիչները ստախոս են** (եթե բոլորը ստախոս են, ապա ինքն էլ ճիշտ չի ասում):

Վարժություններ

1. Ստորև բերվող հատվածներում գտեք բառակրկնությունները և որոշեցե՛ք, թե ինչ բանադարձումների օրինակներ են դրանք: Որոշեցե՛ք նրանց ոճական-արտահայտչական դերը:

Ա. Անհույս իմ տան հույս ձեռքեր,
 Մրոտ ձեռքեր՝ կույս ձեռքեր,
 Մեր օջախը վառ պահող
 Մորս ձեռքեր, լույս ձեռքեր:
 Մեր տան բախտը ջաղացքար՝
 Դուք ջաղացի ջուր ձեռքեր,
 Մեր խրճիթը սուրբ տաճար՝
 Դուք խոնկ ու մոմ, հուր ձեռքեր:
 Ես կորած եմ առանց ձեզ,
 Ավուր հացիս բույր ձեռքեր:
 Մեր տան վազան աղբյուրներ,
 Մշտածարավ, ծոմ ձեռքեր:
 Մանկությունից մինչ այսօր
 Մութ ծամփեքիս լույս ձեռքեր,
 Ինձ մի թողեք վիրավոր՝
 Աստվածամոր կույս ձեռքեր:

(Հ. Եիրազ)

Բ. 1. Բայց միաժամ հիշեց Հազկերտին: Վերակենդանացավ նրա նախանձափրփուր կերպարանքը, նրա օձական հայացքը, նրա վիշապաձայն գոչը՝ Հայաստանի բնաջնջման: **2.** Այս հավատից չեն կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր: **3.** Այդ հավատը չի կարելի քանդել և հեռու նետել ո՛չ այժմ և ո՛չ ապա, և ո՛չ հավիտյան, և ո՛չ հավիտենից հավիտյանս: **4.** Արշակը լիովին աչքեր էր դարձել, որ մղկտացնում էր նայողին: Արշակը պետք է մեռներ, Արշակը պիտի մնար այս չարագույթ, անսիրտ օտարության մեջ: **5.** Թերևս իշխանները չգիտեն, որ նա հետ է մնացել, թերևս գիտեն և չեն կարողանում կապվել հետը, որոնք նրան: Թերևս անտարբեր են: Թերևս իրենք ոչնչանում են: **6.** Չխոսեցին: Արշակը իր խոր աչքերը դարձրեց Գարեգինին և աղաչա-

կան նայեց նրան: Գարեգինը ևս նայեց նրան: Այլևս անհնար էր նայել (Դ. Դեմիրճյան):

Գ. Ինձ ասում են ինչու՞ անվերջ գլխակոր ես, պոնտ,
Այնինչ երգով ու ամենքից բախտավոր ես, պոնտ,
Ինչու՞ դու մերթ մանկաժպիտ, մերթ արցունք ես թվում,
Մերթ ծովանդունդ մարգարիտ ես, մերթ փրփուր ես ծովում,
Մերթ ծակատղ կնձռված է, ինչպես վանքի խաչքար:
Մերթ բարձունք ես մշտաձյունի, մերթ անդնդից էլ վար,
Մերթ զեփյուռ ես դու սիրաշունչ՝ նուրբ էոլյան տավիղ,
Մերթ հովիկ ես, մերթ փոթորիկ, մրրիկ մթնաբավիղ,
Մերթ կակաչի կուրծքն ես կարմիր, մերթ սևանդունդ սիրտ,
Մերթ քնքուշ ես մանուշակից, մերթ իր փշից բիրտ...

(Հ. Շիրազ)

Դ. Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում
Մեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Մեփական բախտից խռովել չկա..

(Հ. Մահյան)

Ե. Երբ իմ տունը կըգաք դուք, ու տանը չեմ լինի ես,
Դռները բաց կըգտնեք, երբ իմ տունը կըգաք դուք,
Ու լույսը վառ կլինի, վարագույրները բեռեզ
Բաց կըլինեն ձեր առաջ, երբ տանը չեմ լինի ես:

(Գ. Սարյան)

2. Հարուն ալ-Ռաշիդի ժամանակները Բաղդադ քաղաքում կար մի մարդ, որի անունը Սինդիբադ-բեռնակիր էր: Եվ դա աղքատ մի մարդ էր, ու վարձով բեռներ էր կրում գլխին դրած: Եվ այնպես պատահեց, որ մի օր էլ ծանր բեռ էր տանում նա, իսկ այդ

օրը սաստիկ շոգ էր: Եվ ուժասպառ եղավ Սինդիբադը ծանր բեռան տակ ու քրտնեց, և տորն ուժեղացավ նրա շուրջը: Եվ անցնում էր Սինդիբադը մի վաճառականի տան մոտով, որի առաջ ավլած էր ու ջրջնած, և օդն այդտեղ խաղաղ էր ու դարպասի կողքին մի լայն նստարան էր դրված:

(«Սինդիբադ—ծովագնացի հեքիաթը»)

Է. Մանուշակներ ոտքերիս, ու շուշաններ ձեռքերիս,
 Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
 Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
 Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք:
 Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
 Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ծյունաթույր,
 Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
 Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նրբաթույր...

(< Եփրազ)

2. Տոյց տվեք, թե բառակրկնությունից բացի ինչ հավելյալ երևույթներ կան հետևյալ օրինակներում: Ուղղակի, թե փոխաբերաբար են գործածված կրկնվող բառերը և պատճառաբանված են արդյոք կրկնության բոլոր դեպքերը: Գտեք անհարկի կրկնությունները և վերացրեք դրանք:

Ա. Կանգնել եմ կապույտ ամայության մեջ
 Ես մեն ու մենակ... Եվ կապույտ—կապույտ
 Մոլորակներ են բախվում ծակատիս:
 Կապույտ հողմերը զայրությով կապույտ
 Իմ կրծքի վրա բախվում են իրար
 Եվ բաժանվում են կապույտ սուլոցով
 Եվ չքվում կապույտ ամայության մեջ:
 Կապույտ սուլոցով սաստում են կապույտ
 Սարսուռը սրտիս... բայց միևնույն է,
 Բարձրության կապույտ սարսուռների մեջ
 Մի կապույտ—կապույտ գլխապտույտից
 Օրորվում եմ ես...

Գարունդ հայերեն է գալիս,
 Ձյուներդ հայերեն են լալիս,
 Հայերեն են հորդում ջրերդ:

Հավքերդ երգում են հայերեն,
 Խոփերդ հերկում են հայերեն,
 Հայերեն են տոկում գրերդ:

Արևդ հայերեն է ծագում,
 Ծառերդ հայերեն են ծաղկում,
 Հայերեն են պայթում բառերդ...

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
 Քարի արցունք է, քարե ժպիտ.
 Քարե սարսուռ է ու քարե սունկ է,
 Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ...

(Հ. Սահյան)

Բ. 1. Այդ ուրախ ու տաքօրինակ ցուցանակի տակ, ծղոտե աթոռին նստել էր մի տխուր մարդ, տխուր գիրությամբ, տխուր աչքերով և տխուր ուսերով (Ավ. Իսահակյան): **2.** Պառկեց քնելու, բայց երկար ժամանակ քունը չտարավ, և նա կրկին դուրս եկավ և սկսեց ման գալ մենակ ու երջանիկ: Միհրնեբսեհը լսեց լուռ և հոգնած դեմք շինելով և չարտահայտելով ոչինչ ավելի (Դ. Դեմիրճյան): **3.** Մի այլ ընթերցող իր խորհրդածություններում վերլուծում է ականատեսի իր տպավորությունները (մամուլից):

3. Ցույց տվեք աստիճանավորում կազմող բառերը, որոշեցե՛ք դրանց իմաստային նրբություններն ու աստիճանավորման արտահայտչական դերը:

1. Այդ ջրիեղեղը, աղետը, սարսափը գալիս էր անվերադարձության ծանրությամբ, ծնշում, ոչնչացնում էր մարդկային կամքը, հոգին: **2.** Կողոպտեցիիին, մերկացրին, կլպեցին Դենշապուհի հար-

կահանները: **3.** Երկինք–գետին դառավ միազանգված մի քառս, որի մեջ սանձակոտոր քամին զարկում էր, ծեծկում, ցնցահարում, գզգզում: **4.** Բա մենք քա՛ր ենք, ժե՛ռ ենք, հո՛ղ ենք: **5.** Ավերն ու ավարը պիտի անցնեն մեր երկրի մի ծայրից մյուսը, ինչպես ժանտախտ, ինչպես մրրիկ, ինչպես երկրաշարժ: **6.** Այդ անարվեստ, բայց ոգելից, ոգեխառն ցասումնալի կռիվը խժռում էր ամեն ինչ: **7.** Սև հագիր, սուգ մտի՛ր, ողբա՛մ, սառը ջուր անձիր գերեզմանին, սիրտդ պաղեցրու: **8.** և կոկորդալի՛ր քրքիջով լցնել սրահը, ամրոցը, ողջ հայոց աշխարհը, այդ անիծյալ Երանը:

(Դ. Դեմիրճյան)

4. Գտե՛ք հակադրությամբ կազմված արտահայտությունները, որոշեցե՛ք, թե ինչ բանադարձման օրինակներ են դրանք:

Ա. Դու հողածին, դու և աստված,
 Դու և հաղթող, դու և պարտված:
 Դու անտակ վիհ, դու և բարձունք,
 Դու և ժպիտ, դու և արցունք...
 Դու տնակյաց ու թափառիկ,
 Դու և կրակ, դու և ծաղիկ,
 Խեղճ ու կրակ և անառիկ,
 Դու բնության մի պատառիկ.
 Դու հնություն հնամենի
 Ու դեռ գալիք...

(Պ. Սևակ)

Կածանները ծչում են այնտեղ,
 Զրվեժները լռում են:
 Ծաղիկները թռչում են այնտեղ,
 Թիթեռները բուրում են:
 Ստվերները խեղդվում են շոգից,
 Բարդիները մրսում են...
 Մեր տանը մեռածներն են, հոգիս,
 Ապրողները դրսում են:

(Հ. Սահյան)

Բ. Ա՛խ, այս Մասիսը,
 Որից փափկում են սրտերը բոլոր,
 Երբ ինքը... քա՛ր է.
 Որ ջերմացնում է սրտերը մոլոր,
 Երբ ինքը... սա՛ռն է.
 Որ աշխարհներից հեռավոր-հեռու
 Բոլոր հայերին այստեղ է բերում,
 Երբ ինքն... այստեղ չէ:
 Միաբանության քարոզ է կարդում
 Աշխարհում ցրված հայերին անտուն,
 Երբ որ կիսված է.
 Որ, մեծ սիրո պես,
 Ոչ հեռանում է,
 Ոչ էլ գալիս է...
 Ա՛խ, այս Մասիսը:

(Գ. Հմին)

Գ. Օ՛, գարնան ամիս, ապրելու ապրիլ,
 Դու, որ բերում ես ծաղիկներ ու կյանք,
 Ինչո՞ւ դու դարձար մահվան տարելից,
 Մահով մնացիր մեր պատմության մեջ...

Չյուն-սառույցները գարնան եփրատի
 Մեր տաք արյունի ջերմից էր հալում...

(Ս. Կապուտիկյան)

Դ. 1. Տեսա՝ աշխարհը այնքան մեծ, և զգացող արարածը այն-
 քան փոքր, բայց նրա տենչանքն ու տանջանքը աշխարհից մեծ: **2.**
 Նայում է խանը հուրիների շողշողուն մարմիններին: Նայում է,
 բայց չի տեսնում, տեսնում է, բայց սառած սիրտը չի ալեկոծվում
 (Ավ. Իսահակյան): **3.** Պատերը սահում են վեր, խցիկը նետվում է
 վար (Լ. Միրիջանյան): **4.** Ես սիրով կնստեի նրա դիմաց ու կլսեի նրա
 լռությունը: Այդ իմաստությամբ լցված մի խոր լռություն էր, որից
 ոչ ոք չէր կարող ծանծրանալ (Աբ. Ավագյան): **5.** Արագիլը, բակն ու
 բարդին մութի հոտ են առնում: **6.** Զաղացի՛ հույսն սպիտակ՝ գե-

տակը տարավ ծովին (Հ. Մահյան): **7.** Անբացատրելի անուշ լացը հանգստացնում էր Անահիտին: **8.** Հանկարծ մի կծու ապտակ շառաչեց տաղավարի լուռության մեջ: **9.** Մովսես վանականը հպարտ վշտով նայում էր եղիշեին և շարունակում էր լսել: **10.** Երկրում խաղաղ խռովք էր և չարագուշակ խաղաղություն: **11.** Օղասպարի սառը հպումը կոշտ շոյեց նրա ծակատը: **12.** — Ճշմարիտ է խաբում,— ասաց Աշուշան: **13.** Լուրերը լռում են, իշխանիկ: **14.** Մութը սև սաթի պես փայլեց դուրսը: **15.** Ո՛վ եղավ պատճառ այս պարտված հաղթության: **16.** Նա դիմեց իշխաններին և անկեղծություն կեղծելով խոսեց: **17.** Երբ փորձում էր նրանից փախչել, զգում էր նրա կաշկանդիչ թեթև... պողպատը (Դ. Դեմիրճյան):

5. «Առաժանիկից» դուրս գրեցեք մի շարք առաժներ ու ասացվածքներ, որոնք ստեղծված լինեն հակադրության սկզբունքով:

6. Դիտեցե՛ք հռետորական հարցի արտահայտչական դերը հետևյալ օրինակներում:

Շատ եմ տեսել, երբ սրգվոր
 Մայրը մենակ, սևաշոր,
 Կորանալով էն քարին՝
 Ձեն է տալիս Մարոյին...
 – Ո՛վ քեզ ծեծեց, Մարո ջան,
 Ո՛վ անիծեց, Մարո ջան,
 Ո՛ր փախար դու, Մարո ջան,
 Տուն արի՛, տո՛ն, Մարո ջան,
 Խո՛ր ես քընել, Մարո ջան,
 Ձեն զարթնում էլ, Մարո ջան...

Թեկուզ և մենակ լինի փարախում,
 Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում:

Սրընթաց պախրա՛մ, թե գայլ գիշատիչ

Եեշտակի անցավ փարախի մոտով:
Այծյամը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գլորեց ոտով,
Գիշերվան հովից տերևն էր դողում,
Երկչուտ մուկիկը վազեց պուճախում,
Թե ոչխարների թույլ մընչոցն էր այն,—
Սաքոյին թըվաց, թե մի ոտնաձայն
Եկավ ու կանգնեց փարախի վըրա...

Էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուրյուլը, անմահ Ֆիրդուսին,
Բնչը կհաղթի կյանքում հերոսին,
Թե չըլինին
Կինն ու գինին:
Արևի նման ծակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար,
Ո՛վ կանի նըրան գետնին հավասար,
Թե չըլինին
Կինն ու գինին:

— Էն մըթին ամպից արծիվն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով:
— Էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

— Էն Թըմկա ծորում սև ամպն է գոռում,
Էն շանթն է ճայթում էնպես ահարկու:
— Էն Թըմկա ծորում Թաթուլն է կռվում,
Էն թուրն է շաչում էնպես ահարկու:
Բնչ սարի արծիվ կըհասնի քաջին,
Բնչ շահ կըկանգնի նըրա առաջին:

(Հ. Թումանյան)

7. Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակից գտնեք հեգնանք և պարադոքս պարունակող հատվածներ:

8. Տոյց տվեք շրջադասության դրսևորումները, որոշեցե՛ք նրանց արտահայտչական դերը:

Ա. Որպես քուրմը Գանգեսի,
Կարոտակեզ, սիրակեզ,—
Կյանքս տվել եմ լույսիդ
Եվ երգում եմ քեզ:
Քեզ եմ երգում, քաղցր քույր,
Խելագար Սոմա:

Նետել է երկաթե մի ձեռք
Դեպի վեր ոսկի մի ծնծղա.
Բռնկվել է ոսկի ծնծղան.
Դարձել է արնածոր մի վերք:
Վառվել է երկնքում հակինթ
Ու ծորում է արյունը յուր կեզ,—
Ձոհվել է երկնքում վճիտ.—
Ինչքան լավ է հատնումը հրկեզ...

(Ե. Չարենց)

Բ. Այս գավոլ էլ եկեք հարգենք
Եվ անթառամ հիշատակը
Կամար-կամուրջ քաշողների,
Սյուն ու խաչքար տաշողների,
Սանդ ու երկանք կտրողների,
Ելք ու ճամփա փնտրողների,
Վանք ու պալատ շինողների...
Ինչպես նաև հիշատակը
Նրանց հիշող հարգողների...

Խմենք կենացն անդավաճան ընկերության,
 Ընկերների այն սերության,
 Որ մինչև իսկ չի ընդհատվում
 Աքսորի մեջ ու գերության:
 Ընկեր լինի
 Նույն հուզմունքի,
 Համոզմունքի,
 Նույն ծաշակի,
 Դրոշակի,
 Ոչ թե ընկեր լոկ բաժակի...

(Գ. Սևակ)

Գ. Նազում ես ու շորորում զմրուխտե քո շորերում,
 Եուք արած ծամփի վրա մանկության կանաչ արտի,
 Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ծորերում,
 Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:
 Ա՛խ, ասես խարույկ լինես՝ բռնկված կանաչ բոցով,
 Ես հեռվից քեզ եմ գգվում կարոտով կրակ սրտի.
 Լցնում ես դաշտերն ամեն հարազատ քո խշշոցով,
 Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ Նաիրյան դալար բարդի:

(Հ. Սահյան)

**9. Գեղարվեստական երկերից դուրս գրեցեք զանազան
 բանադարձումների օրինակներ, բացատրեցեք դրանց ալ
 տահայտչական դերը:**

VII. ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

Հոմանիշությունը դրսևորվում է ոչ միայն բառապաշարի մեջ, այլև ձևաբանության և շարահյուսության ոլորտում: Այսպես՝ ձևաբանության մեջ հոմանիշ միավորներ են որոշ հոլովաձևեր և կապային կառույցներ (*սեղանին – սեղանի վրա, բաժակում – բաժակի մեջ, գնաց ջրի – գնաց ջուր բերելու և այլն*):

Ծարահյուսական հոմանիշության օրինակ կարող են ծառայել դերբայական դարձվածով պարզ նախադասությունը և համապատասխան բարդ ստորադասական նախադասությունը, ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքերը (**բազմոցին քնած երեխան արթնացավ – երեխան, որ քնած էր բազմոցին, արթնացավ, Արամն ասաց. «ես չեմ կարող գալ»** – Արամն ասաց, որ ինքը չի կարող գալ):

Այդպիսի հոմանիշությունը թույլ է տալիս խոսքի մեջ խուսափել կրկնությունից և նմանատիպ շարահյուսական կառույցների կուտակումից՝ մի ձևը փոխակերպելով մյուսին: Փոխակերպման ժամանակ միտքը հիմնականում մնում է անփոփոխ, փոփոխվում է նրա արտահայտման ձևը՝ շարահյուսական կառուցման եղանակը:

Ինչպես նշվեց, փոխակերպման ամենացայտուն օրինակները վերաբերում են բարդ ստորադասական նախադասությանը և ուրիշի խոսքին:

1. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐԶԻ

Բարդ ստորադասական նախադասությունների մեծ մասը կարող է փոխակերպվել պարզի և ընդհակառակն: Այս բանը կատարվում է խոսքի բազմազանության համար և, արտահայտման այդ եղանակները պետք է նպատակահարմար կերպով օգտագործել խոսքի տարբեր տեսակներում: Բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը.

- 1) Փոխակերպումը տեղի է ունենում բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասություններից մեկնումեկը (սովորաբար ստորադասը) արտահայտելով դերբայական դարձվածով կամ բայանվանական կառույցով.

Նա դասի չէր գալիս, որովհետև հիվանդ էր: — Նա դասի չէր գալիս հիվանդ լինելու պատճառով: — Նա դասի չէր գալիս հիվանդության պատճառով:

2) Փոխակերպումը ոճականորեն լիովին հավասարաբեռն նախադասություններ չի ստեղծում. բարդ ստորադասական նախադասության դեպքում միշտ էլ ստորադաս նախադասության իմաստն ավելի շեշտված է, քան համապատասխան դերբայական դարձվածի դեպքում.

Ես գնում եմ, որ տեսնեմ նրան: — Ես գնում եմ նրան տեսնելու համար:

3) Բարդ նախադասության պարզումը ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար կամ հնարավոր:

Խիստ ընդարձակ ստորադաս նախադասության փոխակերպումը դերբայական դարձվածի կարող է խճողել և ծանրացնել մտքի արտահայտումը.

Նա պատմում էր, որ մի քանի օր առաջ տեսել է իր նախկին ընկերներից մեկին՝ Գրիգորին: — Նա պատմում էր մի քանի օր առաջ իր նախկին ընկերներից մեկին՝ Գրիգորին, տեսած լինելու մասին:

- Եթե փոխակերպվող նախադասության մեջ կա անորոշ առումով տրականաձև խնդիր, ապա փոխակերպումը կարող է առաջ բերել կողմնակի ենթակայի շփոթում հատկացուցչի հետ: Եթե փոխակերպումն, այնուամենայնիվ, կատարվում է, ապա կողմնակի ենթական պետք է անջատել բուրծով և ըստ հնարավորին փոխել նրա շարադասությունը.

Նա պատմում էր, որ մի քանի օր առաջ Գրիգորը հանդիպել է ավազակների: — Նա պատմում էր մի քանի օր առաջ Գրիգորի՝ ավազակների (կամ՝ Գրիգորի՝ մի քանի օր առաջ ավազակների) հանդիպած լինելու մասին:

- Եթե ստորադաս նախադասությունն ունի ենթաստորադաս նախադասություն, ապա դրանց միաժամանակյա փոխակերպումը կարող է առաջ բերել դերբայական դարձվածների խճողում և դժվարացնել խոսքի ընկալումը.

Նա ասում էր, որ կզնա, եթե աշխատավարձը ժամանակին վճարեն: — Նա ասում էր աշխատավարձի՝ ժամանակին վճարելու դեպքում իր գնալու մասին:

Փոխակերպումն ընդհանրապես անթույլատրելի է այն բոլոր դեպքերում, երբ կա մտքի խժողման, երկիմաստության, սերտորեն կապված անդամներն իրարից հեռացնելու վտանգ: Նույն պատճառով էլ դերբայական դարձվածը հարմար չէ փոխակերպել ստորադաս նախադասության, եթե այն պատկանում է լրացյալ (օրինակ՝ հատկացյալ) ունեցող անդամի: Այսպես՝ **Ծիծաղող մարդու դեմքը փայլում է:** նախադասությունը չի կարելի փոխակերպել **Մարդու, որ ծիծաղում է, դեմքը փայլում է:** նախադասության: Իմաստով նույնարժեք չէ նաև **Փայլում է այն մարդու դեմքը, որ ծիծաղում է:** նախադասությունը:

Փոխակերպումը հնարավոր չէ, երբ բացակայում է տվյալ ժամանակը և սեռն արտահայտող դերբայ:

Ումից վերցրել ես, Նրան էլ տուր: Բնակվիր այնտեղ, որտեղ բնակվել ես:

4) Այն բարդ նախադասությունների դեպքում, որոնց մեջ ստորադաս նախադասության հարաբերական դերանունը վերաբերում է ողջ գերադաս նախադասությանը, փոխակերպումը կարելի է կատարել դերբայական դարձվածի վերածելով գերադաս նախադասությանը:

Խարդախությունը պարզվեց, որի պատճառով նա ստիպված էր մեկնել: — *Խարդախության պարզվելու պատճառով նա ստիպված էր մեկնել:*

Այսպիսի փոխակերպումը կարելի է կատարել նաև հետևանքի ստորադաս նախադասության դեպքում:

Այնքան էր տարված գործով, որ ինձ չնկատեց: — Գործով շատ տարված լինելու պատճառով ինձ չնկատեց: Կամ՝ Գործով շատ տարված փնելով՝ ինձ չնկատեց:

Ինչպես արդեն նշվել է, այս դեպքում արտահայտության իմաստային երանգները հավասարազոր չեն:

5) Երբ ստորադաս նախադասությունը փոխակերպվում է դերբայական դարձվածի կամ բայանվանական կառույցի, կատարվում են նաև հետևյալ կառուցվածքային փոփոխությունները:

ա) հարաբերական դերանունները, հարաբերող բառերը և շաղկապները բաց են թողնվում,

բ) բայը կամ բայանունը հանդես են գալիս այն հոլովով և կապով, որ պահանջում է նրանց պաշտոնը գլխավոր նախադասության մեջ.

Ով գտել է թող բերի: — *Գտնողը թող բերի:*

Ինչ կորցրել էր, գտավ: — *Կորցրածը գտավ:*

Եկավ, երբ Գրիգորը գնացել էր: — *Եկավ Գրիգորի գնալուց հետո:*

Եթե տեսնեմ՝ կասեմ: — *Տեսնելու դեպքում կասեմ:*

Վեր կացավ, որպեսզի զեկուցի: — *Վեր կացավ զեկուցելու համար:* — *Վեր կացավ զեկուցման համար:*

Վարժություններ

1. Վերականգնեցե՛ք բաց թողնված համադասական շաղկապները:

Այն ժամանակ վերջին կուրսի ուսանող էի շուտով պիտի ավարտեի իրավագիտական ֆակուլտետը (*Նար-Դոս*): Առավոտվանից նա չէր կարողանում դադար առնել, ... երբ կեսօրն անցավ, դուրս եկավ գյուղից, կանգնեց կիրճի բարձունքին երկար նայեց ծորին (*Ս. Խանզադյան*): Այնորը շարունակեց պատմությունը այնքան դանդաղ, ոչ միայն դժվար էր վերհիշում հինը, հնարում, զարդարում հազար ու մի անակնկալ դեպքերով: Հանդիպումը բորբոքել էր նրան, առաջվա նման մոտիկ լինելու ցանկությունը, իբրև խոր երկնքում նազով ծախրող թռչուն, երբեք չէր իջնում նրա շեմքին (*Ա. Բակունց*):

2. Վերականգնեցե՛ք բաց թողնված ստորադասական շաղկապները և հարաբերական բառերը:

Շատերն էին տանջվել Բաղեշի բանտում, ինձ էլ բախտը պատանի հասակից նետեց այնտեղ: Ոստիկանը ծոծրակիս մի հարված տալով, ինձ հրեց բանտի միջանցքը, մի գիրուկ տղամարդ իմ անունը մուտքի հաշվեմատյանի մեջ առնելով՝ նույն ոստիկանի հսկողությամբ իջեցրեց բանտի նկուղը: Արաբոյի տուփը ինձ մոտ էր, և ես վախենում էի խուզարկվեմ՝ իմ վերջը կգա...

— Պահիր պապիդ տուփը: Իսկ հիմա պատասխան տուր ինձ, ... դու վաղ առավոտ ինչ գործ ունեիր Կարմրակ վանքի գերեզմանի վրա: Դու

գիտես, ... այնտեղ թաղված է գլուխը մի անհավատի, ... անհամար չարիք է գործել մեր տերությանը: Սա այն բանտն է, ձեր քարոզիչ Միհրան էֆենդին է նստել: Ձեր սագանդար Դարդիման Սաքոն և ծիպրանցի աղան էլ այստեղ էին, ես նվեր ուղարկեցի Մեծ Չաուշին:

Առանց իմ պատասխանին սպասելու նա, ինձ բերող ոստիկանի օգնությամբ իմ ձեռքերը ոլորելով կապեց մեջքիս և իմ վիզը մի հաստ պարան անցկացնելով, օղը միացրեց առաստաղի երկաթե ծողին: Տեսնելով, խեղդվում եմ, ես ծիգ արեցի բթամատներիս կանգնել...

Միջանցքի վերջավորությանը մի առանձնացված խուց կար, առաջ մի թուրք հսկիչ էր նստած, դռան անցքից դիտում էր, թե ինչ է կատարվում:

3. Վերաշարադրեցե՞ք հատվածները՝ բարդ ստորադասական նախադասությունները փոխարինելով պարզի:

Ա. Իսկույն երևում էր, որ Մարությանի ընտանիքն ինտելիգենտ ընտանիքներից էր: Շահյանը զարմանքով տեսնում էր, որ Մարությանը, կինը, աղջիկը երբեմն բոլորովին տարբեր, շատ անգամ հակառակ կարծիքներ էին հայտնում միևնույն նյութի մասին: Երբ չէին կարողանում իրար համոզել, նրանք դիմում էին Շահյանին, իբրև մի հեղինակավոր մարդու, որի կարծիքը վճռական նշանակություն ունի: Շահյանը շատ լավ տեսնում էր, որ իր խելքը նրանց խելքից բարձր չէ, ուստի երկյուղ էր կրում, թե միգուցե իրեն անծանոթ նյութի մասին հանկարծ այնպիսի անհեթեթ կարծիք հայտնի, որ միանգամից հիասթափեցնի: Այդ պատճառով հարկավոր դեպքում չափազանց զգույշ էր պահում իրեն և ամեն կերպ աշխատում էր, որ պատվով դուրս գա որոգայթից:

Եվան նստած էր Շահյանի դիմաց, մոր կողքին: Երբ ժպտում էր, նրա աչքերը հեզնական, կծու արտահայտություն էին ստանում: Ժամանակը թռչում էր աննկատելի կերպով: Բացի Սուրենից, որ գլուխը հոր ծնկան վրա դրած քնել էր, խոսակցությանը չէր մասնակցում միայն մեկը, որ Մարությանի եղբոր աղջիկն էր՝ Աշխենը: Նա նստած էր նստարանի ծայրին, լուսամուտի մոտ և կարծես աշխատում էր, որ աննկատ մնա: Շահյանը նայում էր նրա դեմքին և ամենևին չէր կարողանում հասկանալ, թե ինչ տպավորություն է թողնում իր վրա այդ աղջիկը:

(Նար-Դոս)

Ք. «Ձեմ ների ոչ մեկին: Երբեք», — մտածում էր Նա նժույգի վրա առաջ թեքված, հայացքը հեռուները, ցանկանալով կարծես, որ առաջինն ինքը տեսնի, թե ինչ է կատարվում Ավանում:

Վերջապես այդ օրը՝ այն ժամին, երբ արևը թեքվում էր դեպի մուտքը, նրա առջև պարզվեց մի օտարոտի տեսարան: Այնտեղ, ուր լեռների հարթ գոգավորության մեջ երևում էր Ավանը, հիմա ծածկված էր ծխով:

«Հավանաբար մարտը շարունակվում է քաղաքում», — մտածեց Արշակը և ձին կանգնեցրեց, որ ավելի լավ տեսնի: Արշակն ամեն ինչ հասկացավ. կարծես և առաջին բանը, որ զգաց, ծանր վիրավորանքի զգացումն էր:

Երբ թագավորը մտավ քաղաք, ծուխը տակավին տարածվում էր նրա վրա: Առաջ գնալով՝ Նա տեսավ տներ, որ այրվում էին:

Քաղաքից դուրս գալով՝ Արշակը երկար ժամանակ լուռ էր և մթնած: Սպասում էր, թե ինչ լուր կբերեն նախարարական զորքին հետապնդող իր զնդից, որպեսզի որոշեր իր անելիքը: Նա սպասում էր և համոզված էր, որ իր գունդը պիտի ջախջախեր նրանց:

(Ատ. Ձորյան)

2. ՄԵԶԲԵՐՎՈՂ (ՈՒՐԻՇԻ) ԽՈՍՔ ԵՎ ՆՐԱ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Հեղինակային խոսքի մեջ, ըստ անհրաժեշտության, կարող է մեջբերվել մեկ ուրիշի, երբեմն էլ իր իսկ հեղինակի խոսքը: Մեջբերվող խոսքը լինում է երկու տեսակ՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի խոսքը բերվում էր հաղորդում արտահայտող զանազան ասացական բայերի հարադրությամբ՝ **ասել, գրել, հարցնել, պատասխանել** և այլն: Բանավոր խոսքի մեջ հեղինակը աշխատում է պահպանել մեջբերվող խոսքի կառուցվածքային առանձնահատկությունները, նրա հարցական, բացականչական հնչերանգները: Ուղղակի խոսքն այս դեպքում հնչերանգային տեսակետից տարբերվում է հեղինակային խոսքից, որ տվյալ դեպքում պատմողական բնույթի է: Ուղղակի խոսքը լայնորեն տարածված է գեղարվեստական գրականության մեջ և մեծ չափով բարձրացնում է խոսքի արտահայտչականությունը: Գրավոր խոսքում ուղղակի խոսքը հեղինակայինից տրոհվում է անջատման գծերով կամ չակերտներով:

րով: Անջատման գծերը օգտագործվում են սովորաբար բանավոր, չակերտները՝ գրավոր կամ ներքին (արտաքնապես չարտահայտված) խոսքը և մտածմունքը ներկայացնելու համար: Բացթողումներն ու կրճատումներն արտահայտվում են բազմակետերով: Գիտական գրականության մեջ սովորաբար գործածվում են միայն չակերտները, ընդ որում փակագծերում կամ տողատակի ծանոթությամբ նշվում է մեջբերման աղբյուրը:

Անուղղակի խոսքը մեջբերվում է պատմողաբար և ներհյուսվում է հեղինակային խոսքի մեջ՝ որպես նրա անբաժանելի մաս: Ուրիշի ուղղակի խոսքը անուղղակիի փոխակերպելու ժամանակ կատարվում են հետևյալ փոփոխությունները.

ա) Դրվում է **որ** կամ **թե** շաղկապը (ըստ հաղորդման հավաստության): Դրանով իսկ ուրիշի խոսքը դառնում է երկրորդական նախադասություն.

Նա ասաց, որ (թե) գնում է:

բ) Հարցական և բացականչական նախադասությունները փոխվում են պատմողականի՝ կորցնելով իրենց հարցական և բացականչական հնչերանգը: Հարցական նախադասության հարցական հնչերանգի փոխարեն այս դեպքում հանդես է գալիս արդյոք բառը.

Նա հարցրեց, թե արդյոք Գրիգորը գալիս է:

Եթե կան բացականչություն արտահայտող բառեր, դրանք սովորաբար շեշտ են ստանում.

Նա պատմեց, թե ինչքան դժվար է իր գործը:

Հարցական բառերը (դերանունները) սովորաբար պահպանում են հարցական առոգանությունը, թեև գրության մեջ հարցական նշանը կարելի է փոխարինել նաև շեշտով.

Նա ուզում էր տեղեկանալ, թե Գրիգորն ուր է գնում... (...որ է գնում):

Այսպիսի հարցական բառերի առկայության դեպքում գործածվում է **թե** շաղկապը:

գ) Կոչականը դառնում է գերադաս նախադասության մատուցման անուղղակի խնդիր կամ ստորադաս նախադասության ենթակա.

Նա խնդրեց Գրիգորին, որ գնա տուն: Կամ՝ Նա խնդրեց, որ Գրիգորը գնա տուն: (Ուղղակի խոսքով՝ Նա խնդրեց. «Գրիգոր, գնա՛ տուն»):

դ) Ձայնարկությունները և հուզական երանգ ունեցող մյուս բառերը բաց են թողնվում:

Անուղղակի խոսքը ավելի շատ գործածվում է վարչական, ընդհանրապես ոչ պատկերավոր և ոչ հուզական խոսքի մեջ:

Վարժություններ

1. Հետևյալ հատվածները վերափոխեցե՛ք՝ ուղղակի խոսքերը դարձնելով անուղղակի: Նշեցե՛ք կատարվող ձևափոխությունները:

Ա. Կարապետը գիտական բացատրություն է տալիս.

— Ատելություն է հավաքվել մեր ներսում:

— Է, իրար վրա՞ պիտի ծախսենք ատելությունը, — պոռթկում է հայրս:

— Բա ո՞ր տանենք, ո՞ւմ վրա ծախսենք այդքան ատելությունը. ուժերդ հերիք կանեն ուրիշին: Մենք ենք, մերոնց վրա կարող ենք գոռոռալ, — ասաց Կարապետը:

— Խեղճից դուրս բաներ մի խոսիր, — վրա բերեց Սեդրակը:

Կարապետը փրփրեց, սկսեց քայլել սենյակում, քայլել և թքել, քայլել և թքել, մինչև կոկորդը չորացավ: Հետո բարկացավ:

— Ծո՛, ես գրքեր կկարդամ... իմ գլխից հո չեմ ասում:

(Ս. Այվազյան)

Բ. Հագիվ եմ ծիծաղս զսպու՜մ՝ լսելով, թե ինչպես է Գարիկը նորից խորհուրդներ տալիս տղաներին:

— Երբ ներս մտնենք, — ասում է նա, — անընդհատ կրկնեցե՛ք ձեր մտքում. «Ես լավ եմ պատրաստվել, ես լավ եմ պատրաստվել, ես լավ եմ պատրաստվել»: Դա հոգեբանորեն ապացուցված բան է: Մռայլ չնստեք, կկարծեն, թե չգիտեք, միշտ ժպտացե՛ք դասախոսներին...»:

— Ինչո՞ւ չեիր պարապել: Դուրդ գալիս է, որ մեզ խայտառակեցիր:

— Խեղճ չկա գլխիդ մեջ, — վրա է տալիս եղբայրը:

— Թե խելքդ փողոցներին տված չլինեիր, հիմա այդ վիճակին չեիր հասնի, — շարունակում է Վարդանը:

Այդ պահին ես ու Ծովիկը ակամա նայում ենք իրար:

(Պ. Ջեթունջյան)

Գ. Նա իր մոտ կանչեց Յուլակ Շաղափյանին և հարցրեց.

— Դ՛հ, Յուլակ Շաղափյան, որ շատ մարդկանց կյանք եք դառնացրել, երեխաներ ունե՞ք:

— Չունեմ, դժբախտաբար,— պատասխանեց Շաղափյանը:

— Եվ իսկապես դա դժբախտություն է: Բայց եթե դուք հայր լինեիք, գուցե պատկերացնեիք այն հոր վիճակը, որ անտեղի զրկվել է իր երեխաներից,— շարունակեց Դագեսյանը:

— Ես Չեզ չեմ հասկանում,— ասաց Շաղափյանը:

Եվ Դագեսյանը շարունակեց.

— Շատ էլ լավ հասկանում եք: Ես կանչել եմ ձեզ մի թեթև դառնացնելու համար: Թերթում պետք է աշխատեն ազնիվ և գրագետ մարդիկ: Այդ երկու կարևոր գծերից էլ դուք զուրկ եք: Դուք վաղվանից չպետք է աշխատեք այնտեղ:

(Ս. Այվազյան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

3

I. ԼԵԶԿԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ

4

1. ԻՆՉ Է ԼԵԶՈՒՆ

4

2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԻՐԱՐ ՀԵՏ «ԽՈՍՈՒՄ» ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

4

3. ՔԱՆԻ ԶԵՎՈՎ ԵՆ ԽՈՍՈՒՄ ՄԱՐԴԻԿ

6

4. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՌԱՋԱՑԵԼ ԼԵԶՈՒՆԵՐԸ. ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ԱՌԱՍՊԵԼԸ

7

5. ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ՏԵՂԸ ԱՇԽԱՐՀԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

10

6. ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԻՔԸ

12

7. ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆ

12

8. ՀԱՅՈՑ ԼԵԶԿԻ ԳՐԱՎՈՐ ԵՐԶԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

13

II. ՈՃԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

15

1. ԵՐԿՈՒ ԶՐՈՒՅՑ, ՈՐ ՕԳՆՈՒՄ ԵՆ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ,

ԹԵ ԻՆՉ Է ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

15

2. «ՈՃ» ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԻՄԱՍՏՆԵՐԸ

18

3. ԼԵԶԿԻ ՈՃ

19

4. ՈՃԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

19

Ա. Գործառական ոճեր

19

Բ. Իրադրական ոճեր

20

Գ. Անհատական ոճեր

21

III. ԲԱՌԵՎ ՈՃ	25
1. ԲԱՌԵՐԻ ԶԵՎԱԽՍԱՍՏԱՅԻՆ ԽՍՔԵՐԸ	25
Ա. Բազմիմաստ բառեր	25
Բ. Հոմանիշներ	26
Գ. Համանուններ	28
Դ. Հարանուններ	29
Ե. Հականիշներ	29
2. ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐ	35
 IV. ԲԱՌԵՐԻ ՈՃԱԲԱՆԱԿԱՆ ԵՐՏԵՐԸ	39
1. ԲԱՌԱՊԱՆԵԱՐԻ ՈՃԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	39
2. ՀԱՄԱԳՈՐԾԱԾԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԲԱՌԱՊԱՆԵԱՐ	41
3. ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ԳՐԶԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՆԵԱՐ	42
4. ՀԱՏՈՒԿ ԲԱՌԱՊԱՆԵԱՐԻ ՏԵՄԱԿՆԵՐԸ	42
Ա. Հնաբանություններ և նորաբանություններ	42
Բ. Բարբառաբանություններ և ժարգոնային բառեր	43
Գ. Մասնագիտական բառեր և տերմիններ	45
Դ. Վարչաբանություններ և կաղապարային արտահայտություններ	46
Ե. Օտարաբանություն և փոխառություն	47
Զ. Գոեհկաբանություններ և հասարակաբանություններ	49
 V. ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐԸ	59
ԱՌՕՐՅԱ-ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ	59
ԳԻՏԱԿԱՆ ՈՃ	61
ՎԱՐՉԱԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՈՃ	67
ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՈՃ	72
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ	74
 VI. ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՀՆԱՐՆԵՐ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ	81

Ա. ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՁԱՄԻՋՈՑՆԵՐ	81
1. Բաղաձայնային	81
2. Առձայնային	83
Բ. ԲԱՌԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ–ԱՐՏԱՀԱՅՏՁԱԿԱՆ	
ՄԻՋՈՑՆԵՐ	88
1. Մակդիր	88
2. Համեմատություն	90
3. Փոխաբերային	91
4. Փոխանունություն	93
5. Համըմբունում	94
6. Անձնավորում	94
7. Չափազանցություն	95
8. Նվազաբերություն	96
9. Երջաստային	97
Գ. ԲԱՌԱԿՐԿՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ	
ԱՐՏԱՀԱՅՏՁԱՄԻՋՈՑՆԵՐ	105
1. Նույնասկիզբ	105
2. Նույնավերջ	105
3. Հանգույց	106
4. Կցուրդ	106
Դ. ԵԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎՐԱ	
ՀԻՄՆՎԱԾ ԲԱՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ	107
1. Ձուգադրություն	107
2. Խաչաձևում	107
3. Ձեղջում	108
4. Ավելադրություն	109
5. Աստիճանավորում	109
6. Հարանունություն	110
7. Բառախաղ	111

8. Հակադրություն	111
9. Ճարտասանական հարց	112
10. Ճարտասանական բացականչություն	113
11. Անշաղկապություն	113
12. Բազմաշաղկապություն	114
13. Շրջադասություն	114
14. Հեզևանք	115
15. Պարադոքս	116

VII. ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ 127

1. ԲԱՐԴ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐՁԻ	127
2. ՄԵՋՐԵՐՎՈՂ (ՈՒՐԻՇԻ) ԽՈՍՔ ԵՎ ՆՐԱ ՓՈՆԱԿԵՐՊՈՒՄԸ	132

ԶԵՐ ՏՆԱՅԻՆ ԿՐԿՆՈՒՍՈՒՅՑԸ

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ, Ֆ. Հ. ԽԼՂԱԹՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ



**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԵՆԱՐԿ
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**Հրատարակչության տնօրեն՝
Էմին Մկրտչյան**

**Համակարգչային ծնավորումը՝
Վիտալի Ասրիկի**

**Վերստուգող սրբագրիչ՝
Նվարդ Փարսադանյան**

**Տպագրությունը՝ օֆսեթ՝ 2ափսը՝ 60x84 1/16.
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 3.9 հեղ ամսույ. 8.75 տպ. ամսույ:
Տպաքանակը՝ 1000 օրինակ:**



**«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
0051, Երևան, Կոմիտասի պող 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28
Ֆաքս՝ (+37410) 23 25 95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ կայք՝ www.zangak.am**